

II

(Ոչ օրենսդրական ակտեր)

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ**ԽՈՐՀՐԴԻ****2013 թվականի դեկտեմբերի 5-ի 2013/59/ԵՎՐԱՏՈՄ ՀՐԱՀԱՆԳ**

իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանության նպատակով անվտանգության ստանդարտները սահմանող եւ 89/618/Եվրատոմ, 90/641/Եվրատոմ, 96/29/Եվրատոմ, 97/43/Եվրատոմ եւ 2003/122/Եվրատոմ հրահանգներն ուժը կորցրած ճանաչող՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 31-րդ եւ 32-րդ հոդվածները,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը, որը կազմվել է անդամ պետություններում գիտական փորձագետներից Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի կողմից նշանակված անձանց խմբի եզրակացությունն ստանալուց եւ Տնտեսական եւ սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի եզրակացությունը,

Քանի որ

- 1) Եվրատոմ պայմանագրի 2-րդ հոդվածի «բ» կետով նախատեսվում է սահմանել անվտանգության միասնական ստանդարտներ՝ աշխատակազմի եւ հանրության առողջության պաշտպանության համար: Եվրատոմ պայմանագրի 30-րդ հոդվածով սահմանվում են իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատակազմի եւ հանրության առողջության պաշտպանության «հիմնական ստանդարտները»:
- 2) Իր առաջադրանքը կատարելու նպատակով՝ Համայնքը հիմնական ստանդարտներն առաջին անգամ սահմանել է 1959 թվականին՝ Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատողների եւ հանրության առողջության պաշտպանության նպատակով անվտանգության հիմնական ստանդարտները սահմանող 1959 թվականի փետրվարի 2-ի հրահանգներով ¹: Հրահանգները մի քանի անգամ լրամշակվել են, ամենավերջինը՝ Խորհրդի 96/29/Եվրատոմ հրահանգով ², որով նախորդ հրահանգներն ուժը կորցրած են ճանաչվել:
- 3) 96/29/Եվրատոմ հրահանգով սահմանվում են անվտանգության հիմնական ստանդարտները: Այդ հրահանգի դրույթները կիրառվում են սովորական եւ վթարային իրավիճակների նկատմամբ, եւ այն լրացվել է ավելի կոնկրետ օրենսդրությամբ:

¹ ՊՏ L 11, 20.2.1959թ., էջ 221:

² Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատողների եւ հանրության առողջության պաշտպանության նպատակով անվտանգության հիմնական ստանդարտները սահմանող՝ Խորհրդի 1996 թվականի մայիսի 13-ի 96/29/Եվրատոմ հրահանգ (ՊՏ L 159, 29.6.1996թ., էջ 1):

- 4) Խորհրդի 97/43/Եվրատոմ հրահանգով¹, Խորհրդի 89/618/Եվրատոմ հրահանգով², Խորհրդի 90/641/Եվրատոմ հրահանգով³ (եւ Խորհրդի 2003/122/Եվրատոմ հրահանգով⁴ (անդրադարձ է կատարվում 96/29/Եվրատոմ հրահանգը լրացնող այլ կոնկրետ ասպեկտների:
- 5) Ինչպես ճանաչվել է Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից իր նախադեպային իրավունքում, Համայնքին Եվրատոմ պայմանագրի 2-րդ հոդվածի «բ» կետով հանձնարարված՝ աշխատողների եւ հանրության առողջության պաշտպանության համար անվտանգության միասնական ստանդարտներ սահմանելու առաջադրանքները չեն խոչընդոտում անդամ պետությանը նախատեսել պաշտպանության առավել խիստ միջոցներ: Քանի որ սույն հրահանգով նախատեսվում են նվազագույն կանոններ, անդամ պետությունները պետք է ազատ լինեն սույն հրահանգի կարգավորման առարկայի շրջանակներում առավել խիստ միջոցներ ընդունելու կամ պահպանելու հարցում՝ չսահմանափակելով Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքով սահմանված՝ ներքին շուկայում ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժը:
- 6) Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի կողմից նշանակված փորձագետների խումբը խորհուրդ է տվել, որ Եվրատոմ պայմանագրի 30-րդ եւ 31-րդ հոդվածներին համապատասխան սահմանված անվտանգության հիմնական ստանդարտներով պետք է հաշվի առնվեն Ճառագայթային

¹ Բժշկական ճառագայթահարման առնչությամբ իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից անհատների առողջության պաշտպանության մասին եւ 84/466/Եվրատոմ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդի 1997 թվականի հունիսի 30-ի 97/47/Եվրատոմ հրահանգ (ՊՏ L 180, 9.7.1997թ., էջ 22)

² «Ճառագայթային վթարների դեպքում հանրությանն առողջության պաշտպանության համար կիրառվելիք միջոցների եւ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ տեղեկացնելու մասին» Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 27-ի 89/618/Եվրատոմ հրահանգ (ՊՏ L 357, 7.12.1989թ., էջ 31):

³ «Հսկման գոտիներում իրենց աշխատանքների ընթացքում իոնացնող ճառագայթման վտանգին ենթակա բացօթյա տարածքներում աշխատողների՝ աշխատանքների ժամանակ պաշտպանության մասին» Խորհրդի 1990 թվականի դեկտեմբերի 4-ի 90/641/Եվրատոմ հրահանգ (ՊՏ L 349, 13.12.1990թ., էջ 21):

⁴ «Բարձր ակտիվությամբ, փակ եւ տիրագուրկ ռադիոակտիվ աղբյուրների վերահսկողության մասին» Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 22-ի 2003/122/Եվրատոմ հրահանգ (ՊՏ L 346, 31.12.2003թ., էջ 57):

պաշտպանության հարցերով միջազգային հանձնաժողովի (ՃՊՄՀ) նոր առաջարկությունները, մասնավորապես՝ ՃՊՄՀ-ի 103-րդ հրապարակման մեջ առկա առաջարկությունները¹, եւ դրանք պետք է լրամշակվեն գիտական նոր ապացույցների եւ գործառնական փորձի լույսի ներքո:

- 7) Սույն հրահանգի դրույթները պետք է ուղղորդվեն իրավիճակի վրա հիմնված մոտեցմամբ, որը ներդրվել է ՃՊՄՀ-ի 103-րդ հրապարակմամբ, եւ տարբերակել առկա, պլանավորված եւ վթարային ճառագայթահարման իրավիճակներ: Հաշվի առնելով այս նոր շրջանակը՝ սույն հրահանգով պետք է անդրադառնալ ճառագայթահարման բոլոր իրավիճակներին եւ ճառագայթահարման բոլոր կատեգորիաներին, մասնավորապես՝ մասնագիտական, հանրային եւ բժշկական ճառագայթահարումներին:
- 8) Սույն հրահանգում «կազմակերպություն» եզրույթի սահմանմամբ եւ իոնացնող ճառագայթումից աշխատողների առողջության պաշտպանության համատեքստում դրա օգտագործմամբ չեն սահմանափակվում իրավական համակարգերը եւ գործատուների պարտականությունների բաշխումը՝ ազգային օրենսդրության մեջ ներդրված Խորհրդի 89/391/ԵՏՀ փոխատեղող հրահանգով²:
- 9) Դոզաների հաշվարկումը չափելի քանակություններից պետք է հիմնված լինի գիտականորեն հաստատված արժեքների եւ հարաբերությունների վրա: Դոզաների այդպիսի գործակիցների մասով առաջարկությունները հրապարակվել եւ թարմացվել են ՃՊՄՀ-ի կողմից՝ հաշվի առնելով գիտական առաջընթացը: Դոզաների՝ ՃՊՄՀ-ի 60-րդ հրապարակման³ մեջ առկա ավելի վաղ առաջարկությունների վրա հիմնված գործակիցների

¹ Ճառագայթային պաշտպանության հարցերով միջազգային հանձնաժողովի 2007 թվականի առաջարկությունները:

² «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 183, 29.6.1989 թ., էջ 1):

³ Ճառագայթային պաշտպանության հարցերով միջազգային հանձնաժողովի 1990 թվականի առաջարկությունները:

հավաքածուն հասանելի է ՃՊՄՀ-ի 119-րդ հրապարակման մեջ¹: Այնուամենայնիվ, ՃՊՄՀ-ի 113-րդ հրապարակման մեջ ՃՊՄՀ-ի կողմից ներդրվել է դոզաները հաշվարկելու նոր մեթոդաբանություն՝ ճառագայթման ռիսկերի վերաբերյալ ամենավերջին գիտելիքների հիման վրա, եւ դա պետք է, հնարավորության դեպքում, հաշվի առնել սույն հրահանգում:

- 10) Արտաքին ճառագայթահարման դեպքում արժեքներն ու հարաբերությունները հրապարակվել են ՃՊՄՀ-ի 116-րդ հրապարակման մեջ առկա նոր մեթոդոլոգիային համապատասխան²: Սույն հրահանգի նպատակներով պետք է օգտագործվեն այդ տվյալները, ինչպես նաեւ հստակ սահմանված աշխատանքային ծավալները:
- 11) Ներքին ճառագայթահարման դեպքում, թեեւ ՃՊՄՀ-ի 119-րդ հրապարակման մեջ ՃՊՄՀ-ն համախմբել է դոզաների գործակիցների վերաբերյալ բոլոր ավելի վաղ հրապարակումները (ՃՊՄՀ-ի 60-րդ հրապարակման հիման վրա), այդ հրապարակման թարմացումները կտրամադրվեն, իսկ ՃՊՄՀ-ի 103-րդ հրապարակման մեջ սահմանված ճառագայթային եւ հյուսվածքային կշռային գործակիցները եւ ֆանտոմները կգերազանցեն այն գործակիցները, որոնք աղյուսակավորված են դրանում: Հանձնաժողովը Եվրատոմ պայմանագրի 31-րդ հոդվածում նշված փորձագետների խմբին կիրավիրի շարունակելու գիտական զարգացումները, եւ Հանձնաժողովը կներկայացնի առաջարկություններ ցանկացած թարմացված արժեքների, հարաբերությունների եւ գործակիցների, այդ թվում՝ ռադոնից ճառագայթահարման վերաբերյալ՝ հաշվի առնելով փորձագետների խմբի համապատասխան եզրակացությունները:

¹ Դոզաների գործակիցների ժողովածու՝ հիմնված ՃՊՄՀ-ի 119-րդ հրապարակման վրա, 2012 թվական:

² Փոխարկման գործակիցներն արտաքին ճառագայթահարումների դեպքում ճառագայթային պաշտպանության ծավալների համար, 2010 թվական:

- 12) Եվրատոմ պայմանագրի 30-րդ հոդվածով նախատեսվում է, որ «հիմնական ստանդարտները» պետք է ներառեն «առավելագույն թույլատրելի դոզաները, որոնք համատեղելի են պատշաճ անվտանգության հետ»: Այդ նպատակով՝ սույն հրահանգով պետք է սահմանվեն դոզայի միատեսակ սահմաններ:
- 13) Մասնագիտական եւ հանրային ճառագայթահարման դեպքում պետք է պահպանվեն դոզայի տարեկան ընթացիկ արդյունավետ սահմանները: Այնուամենայնիվ, չպետք է լինի հինգ տարվա կտրվածքով միջինը հաշվելու անհրաժեշտություն՝ բացառությամբ ազգային օրենսդրության մեջ սահմանված հատուկ հանգամանքների:
- 14) Հյուսվածքային ռեակցիաների վերաբերյալ նոր գիտական տեղեկություններով պահանջվում է նաեւ օպտիմալացնել, անհրաժեշտության դեպքում, հավասար դոզաների նկատմամբ կիրառվելիք սկզբունքը՝ դոզաներն այնքանով ցածր պահելու նպատակով, որքանով ողջամտորեն հնարավոր է: Սույն հրահանգում պետք է նաեւ հաշվի առնվի մասնագիտական ճառագայթահարման դեպքում աչքի ուսանյակի համարժեք դոզայի սահմանների վերաբերյալ ՃՊՄՀ-ի նոր ուղեցույցը:
- 15) Երկրակեղեից արդյունահանված բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութի մշակմամբ զբաղվող արդյունաբերություններն աշխատակիցներին եւ հանրության անդամներին ենթարկում են ճառագայթահարման բարձր մակարդակների, եթե նյութը բաց է թողնվում շրջակա միջավայր:
- 16) Ճառագայթման բնական աղբյուրներից պաշտպանությանը պետք է անդրադառնալ ոչ թե առանձին՝ հատուկ վերնագրով, այլ այն պետք է ամբողջովին համատեղվի ընդհանուր պահանջների հետ: Մասնավորապես, բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպներ պարունակող նյութեր մշակող արդյունաբերությունները պետք է կառավարվեն նույն կարգավորման շրջանակով, ինչ մյուս գործունեությունները:

- 17) Սույն հրահանգի դեպքում նպատակահարմար է սահմանել փակ տարածքում ռադոնի կոնցենտրացիայի եւ փակ տարածքում շինարարական նյութերից արձակված գամմա ճառագայթման էտալոնային մակարդակները եւ ներմուծել բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութի մշակմամբ զբաղվող արդյունաբերությունների մնացորդները շինարարական նյութերի վերամշակելուն ներկայացվող պահանջներ:
- 18) Թիվ 305/2011 (ԵՄ) ⁽¹⁾ կանոնակարգով սահմանվում են շինարարական արտադրանքի մարկետինգի ներդաշնակեցված պայմաններ:
- 19) Գամմա ճառագայթում արձակող շինարարական նյութերը պետք է ընդգրկվեն սույն հրահանգի գործողության ոլորտում, սակայն պետք է նաեւ համարվեն շինարարական արտադրանք՝ ինչպես սահմանված է թիվ 305/2011 (ԵՄ) կանոնակարգով՝ այն իմաստով, որ այդ Կանոնակարգը կիրառվում է վտանգավոր նյութեր կամ վտանգավոր ճառագայթում արձակող շինարարական աշխատանքների նկատմամբ:
- 20) Սույն հրահանգով պետք է չխախտվեն «Աշխատանքային բնութագրերի հայտարարագրման, աշխատանքային բնութագրերի հայտարարագրման ներդաշնակեցված չափանիշներ կամ դրանք հասանելի դարձնելու պայմանները եւ միջոցները սահմանելու կամ «CE» մակնշման մասին» թիվ 305/2011 կանոնակարգի (ԵՄ) դրույթները:
- 21) Թիվ 305/2011 կանոնակարգով (ԵՄ) պահանջվում է արտադրանքը շուկայահանելիս տեղեկությունները հասանելի դարձնել: Դա չի ազդում անդամ պետությունների՝ ազգային օրենսդրությամբ այնպիսի լրացուցիչ տեղեկություններին ներկայացվող պահանջներ սահմանելու իրավունքը, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ճառագայթումից պաշտպանությունն ապահովելու համար:

¹⁾ Շինարարական արտադրանքի մարկետինգի ներդաշնակեցված պայմաններ սահմանող եւ Խորհրդի 89/106/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011 թվականի մարտի 9-ի թիվ 305/2011 (ԵՄ) կանոնակարգ (ՊՏ L 88, 4.4.2011թ., էջ 5):

- 22) Բնակավայրերում վերջերս անցկացված համաճարակային ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս փակ տարածքում մոտ 100 Բք մ³ ծավալներով ռադոնից երկարատեւ ճառագայթահարման հետեւանքով թոքերի քաղցկեղ առաջանալու վտանգի՝ վիճակագրական առումով նշանակալի աճ: Ճառագայթահարման իրավիճակների նոր հասկացությունը հնարավորություն է տալիս Հանձնաժողովի 90/143/Եվրատոմ առաջարկի¹ դրույթները համախմբել Անվտանգության հիմնական ստանդարտների պարտադիր ուժ ունեցող պահանջներում՝ իրականացման համար բավարար ճկունություն թողնելով:
- 23) Ռադոնից ճառագայթահարման երկարաժամկետ ռիսկերը վերացնելու համար անհրաժեշտ են գործողությունների ազգային ծրագրեր: Ընդունված է, որ ծխելու եւ ռադոնից բարձր ճառագայթահարման համակցությունը ներկայացնում է թոքերի քաղցկեղի առաջացման զգալիորեն ավելի բարձր անհատական վտանգ, քան այդ գործոններից որեւէ մեկն առանձին, եւ որ ծխելը բնակչության մակարդակով ընդլայնում է ռադոնից ճառագայթահարման վտանգը: Կարելի է, որ անդամ պետությունները վերացնեն առողջության այդ երկու վտանգներն էլ:
- 24) Եթե գերակայող ազգային հանգամանքների հետեւանքով անդամ պետությունը սահմանում է աշխատավայրերում փակ տարածքներում ռադոնի կոնցենտրացիայի էտալոնային մակարդակ, որը բարձր է 300 Բք մ³-ից, ապա անդամ պետությունը պետք է այդ տեղեկությունները ներկայացնի Հանձնաժողով:
- 25) Եթե ռադոնը գետնից ներթափանցում է փակ տարածքում գտնվող աշխատավայրեր, ապա դա պետք է համարվի առկա ճառագայթահարման իրավիճակ, քանի որ ռադոնի առկայությունը մեծապես անկախ է աշխատավայրում իրականացվող մարդկային գործունեությունից:

¹ «Հանրության անդամներին փակ տարածքում ռադոնից ճառագայթահարումից պաշտպանելու մասին» Հանձնաժողովի 1990 թվականի փետրվարի 21-ի առաջարկություն (ՊՏ L 80, 27.3.1990 թ., էջ 26):

Այդպիսի ճառագայթահարումները կարող են զգալի լինել որոշակի տարածքներում կամ կոնկրետ տեսակի աշխատավայրերում, որոնք սահմանվում են անդամ պետությունների կողմից, եւ պետք է ձեռնարկվեն ռադոնի եւ ճառագայթահարման նվազեցմանն ուղղված պատշաճ միջոցներ, եթե ազգային էտալոնային մակարդակը գերազանցվել է: Եթե մակարդակները շարունակում են մնալ ազգային էտալոնային մակարդակից բարձր, ապա աշխատավայրում իրականացվող այդ մարդկային գործունեությունը չպետք է համարվի գործելակերպ: Այնուամենայնիվ, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այդ աշխատավայրերում ծանուցումներ կատարվեն, եւ որ այն դեպքում, երբ աշխատողների ճառագայթահարումը հակված է գերազանցելու տարեկան 6 մՋվ արդյունավետ դոզան կամ ռադոնից ճառագայթահարման՝ ժամանակի մեջ ինտեգրված համապատասխան արժեքը, ապա դրանք կառավարվում են որպես ճառագայթահարման պլանավորված իրավիճակ, ու կիրառվում են դոզաների այդ սահմանները, եւ պետք է որոշեն, թե աշխատանքների ժամանակ պաշտպանության ո՞ր պահանջները պետք է կիրառվեն:

- 26) Օդային անձնակազմի՝ տիեզերական ճառագայթման ենթարկվելը նույնպես պետք է կառավարվի որպես ճառագայթահարման պլանավորված իրավիճակ: Օդանավի աշխատանքը պետք է ընդգրկվի սույն հրահանգի գործողության ոլորտում եւ կառավարվի որպես հատուկ թույլատրված ճառագայթահարում, եթե դոզայի սահմանները գերազանցվում են:
- 27) Շրջակա միջավայրի աղտոտվածությունը կարող է վտանգ ներկայացնել մարդու առողջության համար: Համայնքի ենթաօրենսդրական ակտերով մինչ այժմ այդպիսի աղտոտվածությունը համարվել է միայն ճառագայթահարման ուղի հանրության այն անդամների համար, որոնք անմիջականորեն ազդեցության են ենթարկվում շրջակա միջավայր արտազատված ռադիոակտիվ արտանետումից: Թեեւ շրջակա միջավայրի վիճակը կարող է ազդել մարդու երկարաժամկետ առողջության վրա, դա

առաջ է բերում շրջակա միջավայրն իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցություններից պաշտպանելու քաղաքականության անհրաժեշտություն: Մարդու առողջության երկարաժամկետ պաշտպանության նպատակով պետք է հաշվի առնել միջազգայնորեն ճանաչված գիտական տվյալների վրա հիմնված՝ շրջակա միջավայրին առնչվող չափորոշիչները (ինչպիսիք են ԵՀ-ի, ՃՊՄՀ-ի, Ատոմային ճառագայթման ազդեցության հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովի, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից հրապարակված տվյալները):

28) Բժշկության ոլորտում կարելու գիտատեխնիկական զարգացումները հանգեցրել են հիվանդների ճառագայթահարման զգալի աճի: Այդ առնչությամբ՝ սույն հրահանգով պետք է ընդգծել բժշկական ճառագայթահարումը, այդ թվում՝ ախտանիշներ չունեցող անհատների ճառագայթահարումը հիմնավորելու անհրաժեշտությունը, եւ պետք է խստացնել այն տեղեկություններին ներկայացվող պահանջները, որոնք պետք է տրամադրվեն հիվանդներին, բժշկական պրոցեդուրաներից ստացվող դոզաների արձանագրումը եւ դրանց մասին զեկուցումը, ախտորոշման էտալոնային մակարդակների օգտագործումը եւ դոզայի մակարդակը ցույց տվող սարքերի հասանելիությունը: Պետք է նշել, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության համաձայն, ենթադրվում է, որ «առողջություն» հասկացությունն ընդգրկում է անհատի ֆիզիկական, մտավոր եւ սոցիալական բարեկեցությունը, այլ ոչ թե զուտ հիվանդության կամ թերությունների բացակայությունը:

29) Բժշկական ճառագայթահարման մեջ ներգրավված մասնագետների կարողությունների բարձր մակարդակը եւ նրանց միջեւ պատասխանատվությունների ու առաջադրանքների հստակ սահմանումը խիստ կարելու է բժշկական ճառագայթային ախտորոշիչ եւ ճառագայթային թերապետիկ պրոցեդուրաներ անցնող հիվանդների պատշաճ պաշտպանությունն ապահովելու համար: Դա վերաբերում է

բուժաշխատողներին, ատամնաբույժներին եւ այլ մասնագետների, որոնք իրավասու են կլինիկական պատասխանատվություն ստանձնելու անհատական բժշկական ճառագայթահարման համար, բժիշկֆիզիկոսներին եւ այլ մասնագետների, որոնք իրականացնում են բժշկական ռադիոլոգիական գործնական այնպիսի պրոցեդուրաներ, ինչպիսիք են տեխնիկ-ռադիոգրաֆները եւ ճառագայթային ախտորոշիչ բժշկության, միջուկային բժշկության եւ ճառագայթային բուժման ոլորտում աշխատող տեխնիկները:

30) Պատահարային եւ չնախատեսված բժշկական ճառագայթահարումները շարունակական մտահոգության աղբյուր են: Թեեւ Խորհրդի 93/42/ԵՏՀ¹ (իրահանգով պահանջվում է բժշկական սարքերի հետշուկայական հսկողություն, պատահարային եւ չնախատեսված բժշկական ճառագայթահարումների վերացումը եւ դրանց առաջանալու դեպքում հետագա քայլեր ձեռնարկելու պարտականությունը ճառագայթումից պաշտպանության ոլորտում իրավասու մարմնի գործառույթն է: Այդ առնչությամբ՝ այդպիսի միջադեպերից խուսափելու համար որակի ապահովման ծրագրերի, այդ թվում՝ ճառագայթային բուժման ընթացքում առկա ռիսկերի ուսումնասիրության դերը պետք է ընդգծվի, եւ այդպիսի դեպքերում պետք է պահանջվեն արձանագրում, զեկուցում, վերլուծություն եւ ուղղիչ գործողություններ:

31) Անասնաբուժական պրակտիկայում պատկերման համար իոնացնող ճառագայթման օգտագործումն աճում է՝ հաճախ բժշկական ոլորտի օգտագործված սարքերի միջոցով: Հատկապես խոշոր կենդանիների կամ կենդանիների նկատմամբ ռադիոդեղապատրաստուկների կիրառման դեպքում առկա է մասնագիտական ճառագայթահարման եւ ուղեկցող անձանց ճառագայթահարման զգալի վտանգ: Դրա համար պահանջվում է

¹ «Բժշկական սարքերի մասին» Խորհրդի 1993 թվականի հունիսի 14-ի 93/42/ԵՏՀ իրահանգ (ՊՏ L 169, 12.07.1993թ., էջ 1):

պատշաճ տեղեկությունների տրամադրում եւ անասնաբույժների ու նրանց աշխատակազմերի կրթություն:

- 32) 97/43/Եվրատոմ հրահանգում ներկայացված՝ այսպես կոչված «բժշկահրավական» ճառագայթահարումներն այժմ հստակորեն սահմանվում են որպես անհատների դիտավորյալ ճառագայթահարում՝ բժշկականից բացի այլ նպատակներով կամ որպես «ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարումներ»: Այդպիսի գործելակերպերը պետք է վերցնել պատշաճ կարգավորող հսկողության տակ եւ հիմնավորել այնպես, ինչպես բժշկական ճառագայթահարումները: Այնուամենայնիվ, այլ մոտեցում է անհրաժեշտ, մի կողմից՝ բժշկական ճառագայթային սարքավորումներ օգտագործող պրոցեդուրաների համար, իսկ մյուս կողմից՝ այդպիսի սարքավորումներ չօգտագործող պրոցեդուրաների համար: Ընդհանրապես, հանրային ճառագայթահարման նկատմամբ պետք է կիրառվեն դոզայի տարեկան սահմանները եւ համապատասխան սահմանափակումները:
- 33) Անդամ պետություններից պետք է պահանջվի կարգավորող հսկողության տակ վերցնել իոնացնող ճառագայթման վտանգ ներառող որոշակի գործելակերպերը կամ արգելել որոշակի գործելակերպեր:
- 34) Սպառողական ապրանքների նկատմամբ ճառագայթումից պաշտպանության սկզբունքների կիրառմամբ պահանջվում է գործելակերպերի կարգավորող հսկողությունը սկսել ապրանքների նախագծման կամ արտադրության փուլում կամ այդպիսի ապրանքների ներմուծման ժամանակ: Հետեւաբար, սպառողական ապրանքների արտադրությունը կամ ներմուծումը պետք է կարգավորվի, եւ պետք է ներդրվեն կոնկրետ ընթացակարգեր, որպեսզի հնարավոր լինի ժամանակին հիմնավորել սպառողական ապրանքների օգտագործումը, ինչպես նաեւ հնարավոր լինի ստուգել այն հանգամանքը, որ այդ օգտագործումը կարող է ազատվել կարգավորող հսկողությունից: Թեեւ այդպիսի գնահատումը

պետք է շարունակվի իրականացվել այն անդամ պետություններում, որտեղ այդպիսի գործելակերպերն իրականացվում են, անդամ պետությունները պետք է միմյանց տեղեկացնեն՝ տվյալ կազմակերպություններից համապատասխան տեղեկություններ պահանջելը հնարավոր դարձնելու եւ իրենց սեփական գնահատումն իրականացնելու համար:

- 35) Սպառողական ապրանքների որոշակի կատեգորիաներում ռադիոակտիվ նյութերի դիտավորյալ ավելացումը պետք է շարունակի արգելված լինել, սակայն պետք է հստակեցնել, որ դա վերաբերում է նաեւ այդպիսի ապրանքները ճառագայթման միջոցով ակտիվացնելուն՝ չխախտելով գործող օրենսդրությունը, ինչպես, օրինակ՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999/2/ԵՀ հրահանգը¹:
- 36) Անդամ պետությունները պետք է օգուտ ստանան կարգավորող հսկողության նկատմամբ աստիճանական մոտեցում ցուցաբերելուց, որը պետք է նաեւ համաչափ լինի գործելակերպի արդյունքում առաջացող ճառագայթահարումների ծավալներին եւ հավանականության աստիճանին, եւ համաչափ լինի այն ազդեցությանը, որը կարգավորող ազդեցությունը կարող է ունենալ այդպիսի ճառագայթահարումները նվազեցնելու կամ կայանքների անվտանգությունը բարելավելու հարցում:
- 37) Կարգավորող հսկողությունից գործելակերպի ազատման եւ թույլատրված գործելակերպերից նյութերի ազատման համար տեսակարար ակտիվության միեւնույն արժեքներն ունենալն օգտակար է: Համապարփակ վերանայումից հետո հանգել են այն եզրակացության, որ ԱԷՄԳ-ի «Բացառում, ազատում եւ կարգավորող հսկողությունից ազատում»² հրապարակման մեջ առաջարկվող արժեքները կարող են օգտագործվել եւ՝ որպես ազատման սկզբնադիր

¹ «Անդամ պետությունների՝ իոնացնող ճառագայթմամբ մշակված սննդամթերքին եւ սննդամթերքի բաղադրիչներին վերաբերող օրենքների մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի փետրվարի 22-ի 1999/2/ԵՀ հրահանգ (ՊՏ L 66, 13.3.1999թ., էջ 16):

² ԱԷՄԳ, 2004թ., Անվտանգության ստանդարտների շարք RS-G-1.7, Բացառում, ազատում եւ կարգավորող հսկողությունից ազատում հասկացությունների կիրառումը:

արժեքներ, որոնք փոխարինում են 96/29/Եվրատոմ հրահանգի I հավելվածով սահմանված տեսակարար ակտիվության արժեքներին, եւ՝ որպես կարգավորող հսկողությունից ազատման մակարդակներ, որոնք փոխարինում են Հանձնաժողովի կողմից «Պաշտպանություն ճառագայթումից» թիվ 122-ում առաջարկվող արժեքներին¹:

38) Անդամ պետությունները պետք է կարողանան թույլտվությունից կոնկրետ ազատում շնորհել որոշ գործելակերպերի համար, որոնք ներառում են ազատման արժեքներից բարձր ակտիվություն:

39) Կարգավորող հսկողությունից ազատման կոնկրետ մակարդակները, ինչպես նաեւ համապատասխան Համայնքային ուղղորդումը² շարունակում են կարելու գործիքներ լինել թույլատրված տեղակայանքների ապամոնիտաժումից առաջացող նյութերի մեծ ծավալների կառավարման համար:

40) Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ճառագայթման աղբյուրների հետ կապված գործելակերպ իրականացնող կազմակերպության կողմից վարձված բացօթյա տարածքներում աշխատողները ստանան նույն պաշտպանությունը, ինչ ճառագայթման ենթարկված աշխատողները: Բացօթյա տարածքներում աշխատողների համար 90/641/Եվրատոմ հրահանգում առկա կոնկրետ կարգադրությունները պետք է ընդլայնվեն՝ նաեւ դիտարկման գոտիներում կատարվող աշխատանքն ընդգրկելու համար:

41) Վթարային ճառագայթահարման իրավիճակների կառավարման

¹ Պաշտպանություն ճառագայթումից 122. Կարգավորող հսկողությունից ազատում եւ ազատում հասկացությունների գործնական կիրառումը:

² Պաշտպանություն ճառագայթումից 89. Ատոմային կայանքների ապամոնիտաժումից առաջացած մետաղների վերամշակման համար առաջարկվող ճառագայթային պաշտպանության չափորոշիչները, Պաշտպանություն ճառագայթումից 113. Շենքերը եւ ատոմային սարքավորումների ապամոնիտաժումից առաջացած՝ շենքերի մնացորդները կարգավորող հսկողությունից ազատելու համար առաջարկվող ճառագայթային պաշտպանության չափորոշիչները, Պաշտպանություն ճառագայթումից 122. Կարգավորող հսկողությունից ազատում եւ ազատում հասկացությունների գործնական կիրառումը:

կապակցությամբ ներկայիս մոտեցումը, որը հիմնված է միջամտության մակարդակների վրա, պետք է փոխարինվի ավելի համապարփակ համակարգով, որն ընդգրկում է վթարային ճառագայթահարման հնարավոր իրավիճակների գնահատում, վթարային կառավարման ընդհանուր համակարգ, վթարին արձագանքման ծրագիր եւ նախապես ծրագրված ռազմավարություններ յուրաքանչյուր ենթադրյալ դեպքի համար:

- 42) Վթարային ճառագայթահարման եւ ճառագայթահարման առկա իրավիճակներում էտալոնային մակարդակների ներմուծումը թույլ է տալիս ապահովել անհատների պաշտպանությունը, ինչպես նաեւ հաշվի առնել հասարակական այլ չափորոշիչներ՝ նույն ձեւով, ինչ դրոզաների սահմանները եւ դրոզաների սահմանափակումները ճառագայթահարման պլանավորված իրավիճակների դեպքում:
- 43) Միջսահմանային հետեւանքներ ունեցող վթարի արդյունավետ կառավարումը պահանջում է անդամ պետությունների միջեւ ուժեղացված համագործակցություն վթարների ծրագրման եւ դրանց արձագանքման հարցում:
- 44) Թեեւ անդամ պետությունների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկությունների հրատապ փոխանակումը վթարի դեպքում սահմանված է Խորհրդի 87/600/Եվրատոմ որոշմամբ¹, առկա է սույն որոշման սահմաններից դուրս տեղեկությունների փոխանակման մասով կարգադրություններ անելու անհրաժեշտություն, որպեսզի հնարավոր լինի այլ անդամ պետությունների եւ երրորդ երկրների հետ համագործակցությունը, որոնք կարող են ներգրավված լինել կամ հավանական է, որ ազդեցություն կկրեն:
- 45) ԱԷՄԳ-ն Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Սննդի եւ գյուղատնտեսության կազմակերպության, Աշխատանքի միջազգային

¹ «Ճառագայթային վթարի դեպքում տեղեկությունների վաղ փոխանակման մասով Համայնքի կարգադրությունների մասին» Խորհրդի 1987 թվականի դեկտեմբերի 14-ի 87/600/Եվրատոմ որոշում (ՊՏ L 371, 30.12.1987թ., էջ 76):

կազմակերպության, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության ատոմային էներգիայի գործակալության եւ Առողջապահության համամերիկյան կազմակերպության հետ համատեղ ՃՊՄՀ-ի նոր՝ 103-րդ հրապարակման լույսի ներքո վերանայել են Անվտանգության հիմնական միջազգային ստանդարտները, եւ Հանձնաժողովը ԱԷՄԳ-ին տեղեկացրել է 2012 թվականի օգոստոսի 6-ի իր որոշման մասին՝ համահովանավորելու այդ փաստաթուղթը Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի անունից:

46) Անհրաժեշտ է հստակեցնել ճառագայթումից պաշտպանության տեխնիկական եւ գործնական կողմերի՝ մասնագիտական բարձր մակարդակով կառավարումն ապահովելու գործում ներգրաված ազգային ծառայությունների եւ փորձագետների դերերը եւ պատասխանատվությունները: Սույն հրահանգով պետք է հստակորեն տարբերակել ծառայությունների եւ փորձագետների տարբեր դերերը եւ պատասխանատվությունները՝ չբացառելով, որ ազգային համակարգերով թույլատրվի պատասխանատվությունների խմբավորում կամ թույլատրվի ճառագայթումից պաշտպանության կոնկրետ տեխնիկական եւ գործնական առաջադրանքների դեպքում պատասխանատվությունների հանձնարարում հատուկ փորձագետների:

47) Հանձնաժողովի 2004/2/Եվրատոմ առաջարկությամբ¹ (ներդրվել են ստանդարտացված տեղեկություններ՝ ատոմային էլեկտրակայաններից եւ վերամշակող տեղակայանքներից արտազատումների դեպքում տվյալները զեկուցելու համար, տվյալները Եվրատոմ պայմանագրի 36-րդ հոդվածի համաձայն Հանձնաժողովին փոխանցելու համար:

48) Անդամ պետություններում պետք է գործեն արտազատման թույլտվություն տալուն եւ արտազատումների դիտանցմանը ներկայացվող հստակ

¹ «Ատոմային էներգառեակտորներից եւ վերամշակող կայաններից բնականոն գործունեության դեպքում շրջակա միջավայր օգածին կամ հեղուկ ռադիոակտիվ արտազատումների վերաբերյալ ստանդարտացված տեղեկությունների մասին» Հանձնաժողովի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի 2004/2/Եվրատոմ առաջարկություն (ՊՏ L 2, 6.1.2004թ., էջ 36):

պահանջներ: Ատոմային էլեկտրակայաններից եւ վերամշակող տեղակայանքներից արտազատումների վերաբերյալ տվյալների զեկուցումն իրավասու մարմնին պետք է հիմնված լինի ստանդարտացված տեղեկությունների վրա:

- 49) Եվրատոմ պայմանագրի 35-րդ հոդվածով անդամ պետություններն ապահովում են, որ գործի շրջակա միջավայրում ռադիոակտիվության մակարդակը դիտանցելու պատշաճ ծրագիր: Եվրատոմ պայմանագրի 36-րդ հոդվածով անդամ պետություններն այդ դիտանցման արդյունքների մասին զեկուցում են Հանձնաժողովին: Եվրատոմ պայմանագրի 36-րդ հոդվածով սահմանված զեկուցման պահանջները բացատրվել են Հանձնաժողովի 2000/473/Եվրատոմ առաջարկության¹ մեջ:
- 50) Խորհրդի թիվ 333/2011 կանոնակարգով (ԵՄ)² (սահմանվում են այն չափորոշիչները, որոնցով որոշվում է, թե երբ են մետաղի ջարդոնների որոշ տեսակներ դադարում լինել թափոն՝ համաձայն «Թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգի³: Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ տիրազուրկ աղբյուրների պատահական հալվելը կանխելու, ինչպես նաեւ ատոմային կայանքներից արտազատված մետաղների համապատասխանությունը կարգավորող հսկողությունից ազատման չափորոշիչներին ապահովելու համար, օրինակ՝ դրանց ապամոնտաժման ընթացքում:
- 51) Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել 2003/122/Եվրատոմ հրահանգում՝ պահանջներից որոշներն ընդլայնելու համար, որպեսզի դրանցում ընդգրկվի ցանկացած ռադիոակտիվ աղբյուր: Տիրազուրկ աղբյուրների հետ կապված չլուծված խնդիրներ դեռեւս առկա են, եւ երրորդ երկրներից աղտոտված մետաղի ներմուծման զգալի թվով դեպքեր են եղել:

¹ ՊՏ L 191, 27.7.2000թ., էջ 37:

² Խորհրդի 2011 թվականի մարտի 31-ի թիվ 333/2011 կանոնակարգ (ԵՄ), որով սահմանվում են այն չափորոշիչները, որոնցով որոշվում է, թե երբ են մետաղի ջարդոնների որոշ տեսակներ դադարում լինել թափոն՝ համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգի (ՊՏ L 94, 8.4.2011թ., էջ 2):

³ ՊՏ L 312, 22.11.2008թ., էջ 3:

Հետեւաբար, անհրաժեշտ է ներմուծել տիրազուրկ աղբյուրների կամ աղտոտված մետաղների հետ կապված միջադեպերի մասին ծանուցելու պահանջ: Կարելի է նաեւ ներդաշնակեցնել այն մակարդակները, որոնցից բարձր աղբյուրը համարվում է բարձր ակտիվության փակ աղբյուր, ԱԷՄԳ-ի կողմից սահմանված մակարդակների հետ:

- 52) Համաձայն Եվրատոմ պայմանագրի 106ա(3) հոդվածի՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի եւ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի դրույթների հիման վրա ընդունված օրենսդրությամբ չպետք է շեղում կատարել սույն հրահանգի դրույթներից եւ, հետեւաբար, հիմնավորման եւ օպտիմալացման սկզբունքները պետք է կիրառվեն հատկապես բժշկական սարքերի եւ շինարարական արտադրանքի նկատմամբ, որոնք կարգավորվում են «CE» մակնշմամբ:
- 53) Անդամ պետությունների եւ Հանձնաժողովի՝ 2011 թվականի սեպտեմբերի 28-ի «Բացատրական փաստաթղթերի վերաբերյալ համատեղ քաղաքական հռչակագրին» համապատասխան՝ անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել հիմնավորված դեպքերում իրենց կողմից իրականացվող տեղայնացման միջոցառումների վերաբերյալ ծանուցմանը կից ներկայացնել հրահանգի բաղադրիչների եւ ազգային տեղայնացման փաստաթղթի համապատասխան մասերի միջեւ կապը բացատրող մեկ կամ մի քանի փաստաթուղթ: Սույն հրահանգի առնչությամբ՝ այդ փաստաթղթերի փոխանցումը հիմնավորված է:
- 54) 96/29/Եվրատոմ հրահանգը եւ դրան լրացնող 89/618/Եվրատոմ, 90/641/Եվրատոմ, 97/43/Եվրատոմ եւ 2003/122/Եվրատոմ հրահանգները պետք է ուժը կորցրած ճանաչվեն:

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ*Հոդված 1***Կարգավորման առարկան**

Սույն հրահանգով սահմանվում են իոնացնող ճառագայթման հետեւանքով առաջացող վտանգներից մասնագիտական, բժշկական եւ հանրային ճառագայթահարման ենթարկվող անհատների առողջության պաշտպանության նպատակով անվտանգության միասնական հիմնական ստանդարտները:

*Հոդված 2***Գործողության ոլորտը**

1. Սույն հրահանգը կիրառվում է ցանկացած պլանավորված, առկա կամ վթարային ճառագայթահարման իրավիճակի նկատմամբ, որը ներառում է իոնացնող ճառագայթման ենթարկվելու վտանգ, որը չի կարող անտեսվել ճառագայթումից պաշտպանության տեսանկյունից կամ շրջակա միջավայրի առնչությամբ՝ մարդու առողջության երկարաժամկետ պաշտպանության նպատակով:
2. Սույն հրահանգը կիրառվում է, մասնավորապես, հետեւյալի նկատմամբ՝
 - ա) ռադիոակտիվ նյութի մշակում, արտադրություն, տեղափոխում, հեռացում, օգտագործում, պահեստավորում, պահում, փոխադրում, ներմուծում Համայնքի տարածք ու արտահանում Համայնքի տարածքից.
 - բ) իոնացնող ճառագայթում արձակող եւ ավելի, քան 5 կիլովոլտ (կՎ) էլեկտրական պոտենցիալի տարբերությամբ աշխատող բաղադրիչ մասեր պարունակող էլեկտրական սարքավորումների արտադրություն եւ շահագործում.
 - գ) մարդկային գործունեություն, որը ներառում է ճառագայթման բնական աղբյուրների առկայություն, որը հանգեցնում է աշխատողների կամ հանրության անդամների ճառագայթահարման զգալի աճի, մասնավորապես՝

- i) օդանավի եւ տիեզերանավի աշխատանքը՝ կապված անձնակազմերի ճառագայթահարման հետ.
 - ii) բնական ծագման ռադիոակտիվ իզոտոպներ ունեցող նյութերի մշակումը.
- դ) աշխատողների կամ հանրության անդամների ճառագայթահարումը փակ տարածքում գտնվող ռադոնից, արտաքին ճառագայթահարումը շինարարական նյութերից եւ վթարի կամ նախկինում իրականացված մարդկային գործունեության հետեւանքներից առաջացող տեսական ճառագայթահարման դեպքերը.
- ե) այնպիսի վթարային ճառագայթահարման իրավիճակներին պատրաստված լինելը, դրանց արձագանքման ծրագրումը եւ կառավարումը, որոնք հանրության անդամների կամ աշխատողների առողջությունը պաշտպանելու համար համարվում են երաշխավորող միջոցներ:

Հոդված 3

Գործողության ոլորտից բացառումը

Սույն հրահանգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

- ա) ճառագայթման բնական մակարդակի ենթարկում, ինչպիսիք են մարդու մարմնում պարունակվող ռադիոակտիվ իզոտոպները եւ տիեզերական ճառագայթումը, որը գերակայում է երկրի մակարդակում.
- բ) հանրության անդամների կամ օդային անձնակազմից կամ տիեզերական անձնակազմից բացի այլ աշխատողների ենթարկումը տիեզերական ճառագայթման թռիչքի ժամանակ կամ տիեզերքում.
- գ) երկրի չխախտված կեղեւում առկա ռադիոակտիվ իզոտոպներից վերգետնյա ճառագայթահարումը:

ԳԼՈՒԽ II

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 4

Սահմանումները

Սույն հրահանգի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- 1) «Կլանված դոզան» (Դ) կլանված էներգիան է միավոր զանգվածի համար

$$D = \frac{d\bar{\epsilon}}{dm}$$

որտեղ՝

$d\bar{\epsilon}$ -ը նյութի միավոր ծավալին իոնացնող ճառագայթմամբ փոխանցված միջին էներգիան է.

dm -ը՝ նյութի միավոր ծավալի զանգվածը:

Սույն հրահանգում կլանված դոզան ցույց է տալիս հյուսվածքում կամ օրգանում միջինացված դոզան: Կլանված դոզայի միավորը գրեյն է (Գր), որտեղ մեկ գրեյը հավասար է մեկ կիլոգրամ ջրույի՝ $1 \text{ Գր} = 1 \text{ Զ կգ}^{-1}$.

- 2) «արագացուցիչ» նշանակում է սարքավորում կամ կայանք, որում ակտիվանում են մասնիկները՝ արձակելով իոնացնող ճառագայթում 1 մեգաէլեկտրոն վոլտից ավելի հզորությամբ (ՄէՎ).
- 3) «պատահարային ճառագայթահարում» նշանակում է վթարային աշխատողներից բացի այլ անհատների ճառագայթահարում՝ պատահարի հետեւանքով.
- 4) «ակտիվացում» նշանակում է պրոցես, որի միջոցով կայուն իզոտոպը փոխակերպվում է ռադիոակտիվ իզոտոպի՝ մասնիկներով կամ

մեծ հզորության ֆոտոններով ճառագայթահարելով այն նյութը, որում պարունակվում է.

- 5) «ակտիվություն» (Ա)՝ տվյալ պահին տվյալ էներգետիկական վիճակում որոշակի քանակությամբ ռադիոակտիվ իզոտոպի ակտիվությունն է: Այն dN չափանիշն է dt -ում, որտեղ dN -ը dt ժամանակահատվածում տվյալ էներգետիկական վիճակից կատարվող միջուկային փոխակերպումների սպասվող թիվն է՝

$$A = \frac{dN}{dt}$$

Ակտիվության միավորը Բեքերելն է (Բք).

- 6) «փորձնակ» նշանակում է հատուկ հմտություն յուրացնելու նպատակով՝ կազմակերպությունում վերապատրաստում կամ ուսուցում ստացող անձ.
- 7) «թույլտվություն» նշանակում է գործելակերպի գրանցում կամ լիցենզավորում.
- 8) «Բեքերելը» (Բք) ակտիվության միավորի հատուկ անունն է: Մեկ Բեքերելը համարժեք է վայրկյանում մեկ միջուկային փոխակերպման՝ $1 \text{ Բք} = 1 \text{ վ}^{-1}$.
- 9) «շինարարական նյութ» նշանակում է ցանկացած շինարարական արտադրանք՝ շենքում կամ դրա մասերում մշտապես ներառելու համար, եւ որի արտադրողականությունն ազդում է շենքի արտադրողականության վրա՝ կապված դրա բնակիչների՝ իոնացնող ճառագայթման ենթարկվելու հետ.
- 10) «խնամողներ եւ սփոփողներ» նշանակում է անհատներ, որոնք, իրենց զբաղմունքի մաս լինելուց բացի այլ կերպ գիտակցաբար եւ իրենց կամքով ենթարկվում են իոնացնող ճառագայթման՝ օգնելով բժշկական ճառագայթահարման ենթարկվող կամ ենթարկված անհատներին աջակցելու եւ սփոփելու հարցում.

- 11) «կարգավորող հսկողությունից ազատման մակարդակներ» նշանակում է այն արժեքները, որոնք սահմանված են իրավասու մարմնի կողմից կամ ազգային օրենսդրությամբ եւ արտահայտված են տեսակարար ռադիոակտիվությամբ, որոնց հավասար կամ որից ցածր լինելու դեպքում ծանուցման կամ թույլտվության ենթակա որեւէ գործելակերպից առաջացող նյութերը կարող են ազատվել սույն հրահանգի պահանջներից.
- 12) «կլինիկական աուդիտ» նշանակում է բժշկական ճառագայթային պրոցեդուրաների կանոնավոր ուսումնասիրություն եւ վերանայում, որի նպատակն է կառուցվածքային վերանայման միջոցով բարելավել հիվանդների խնամքի որակը եւ արդյունքը, որով բժշկական ճառագայթային գործելակերպերը, պրոցեդուրաները եւ արդյունքներն ուսումնասիրվում են լավ բժշկական ճառագայթային պրոցեդուրաների համաձայնեցված ստանդարտների հետ համեմատությամբ՝ անհրաժեշտության դեպքում գործելակերպերի փոփոխություններով եւ նոր ստանդարտների կիրառմամբ.
- 13) «կլինիկական պատասխանատվություն» նշանակում է բուժաշխատողի պատասխանատվությունն անհատական բժշկական ճառագայթահարման համար, մասնավորապես՝ անհրաժեշտության դեպքում հիմնավորման, օպտիմալացման, արդյունքի կլինիկական գնահատման, այլ մասնագետների եւ աշխատակազմի հետ բժշկական ճառագայթային պրոցեդուրաների գործնական կողմերի վերաբերյալ համագործակցության, անհրաժեշտության դեպքում, նախորդ զննությունների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու, առկա բժշկական ճառագայթային տեղեկությունները եւ (կամ) բժշկական քարտում առկա տեղեկություններն ըստ պահանջի այլ բուժաշխատողների եւ (կամ) ուղեգիր նշանակողին տրամադրելու, ինչպես նաեւ հիվանդներին եւ ներգրավված այլ անհատների, ըստ անհրաժեշտության, իոնացնող ճառագայթման վտանգի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար.

- 14) «սպասվող արդյունարար դոզան» ($E(\tau)$) կլանման արդյունքում օրգանում կամ հյուսվածքում համարժեք դոզաների $H_i(\tau)$ գումարը՝ բազմապատկված համապատասխան հյուսվածքի կշռային գործակցով w_T : Դա հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$E(\tau) = \sum_T W_T H_T(\tau)$$

$E(\tau)$ -ն սահմանելիս արտահայտվում է տարիների քանակով, որոնց ընթացքում կուտակում է տեղի ունենում: Սույն հրահանգով սահմանված դոզաների սահմանները բավարարելու նպատակով՝ չափահասների դեպքում ընդունվում է կլանմանը հաջորդող 50 տարի ժամկետը, իսկ մանուկների եւ երեխաների դեպքում՝ մինչեւ 70 տարեկանը: Սպասվող արդյունարար դոզայի միավորը Ջիվերտոն է (Ջվ):

- 15) «սպասվող համարժեք դոզան» ($H_i(\tau)$) մարդու կողմից կլանման արդյունքում հյուսվածքում կամ օրգանում T համարժեք դոզաների հզորության գումարն է ժամանակի (t) մեջ:

Դա հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$(H_T(\tau) \int_{t_0}^{t_0+\tau} H_T(t) dt$$

t_0 ժամանակում կլանման համար, որտեղ՝

$H_t(t)$ -ն օրգանում կամ հյուսվածքում T համապատասխան համարժեք դոզայի հզորությունն է t ժամանակում,

τ -ն այն ժամանակն է, որի ընթացքում կուտակում է տեղի ունենում:

$H_T(\tau)$ -ն սահմանելիս արտահայտվում է տարիների քանակով, որոնց ընթացքում կուտակում է տեղի ունենում: Սույն հրահանգով սահմանված

- դոզաների սահմանները բավարարելու նպատակով՝ Խ-ն չափահասների դեպքում ընդունվում է կլանմանը հաջորդող 50 տարի ժամկետը, իսկ մանուկների եւ երեխաների դեպքում՝ մինչեւ 70 տարեկանը: Սպասվող համարժեք դոզայի միավորը Ջիվերտոն է (Ջվ):
- 16) «իրավասու մարմին» նշանակում է մարմին կամ մարմինների համակարգ՝ անդամ պետությունների կողմից նշանակված որպես սույն հրահանգի նպատակներով օրինական լիազորություն ունեցող.
- 17) «սպառողական ապրանք» նշանակում է սարք կամ արտադրված իր, որում դիտավորյալ միավորել են մեկ կամ ավելի ռադիոակտիվ իզոտոպներ, կամ որն արտադրվել է ակտիվացման միջոցով, կամ որն առաջացնում է իոնացնող ճառագայթում, եւ որը կարող է վաճառվել կամ հասանելի դարձվել հանրության անդամներին՝ առանց վաճառքից հետո հատուկ վերահսկողության կամ կարգավորող հսկողության.
- 18) «աղտոտվածություն» նշանակում է ռադիոակտիվ նյութերի չկանխամտածված կամ անցանկալի ներկայությունը մակերեսներին կամ կարծր, հեղուկ կամ գազային նյութերում կամ մարդու մարմնի վրա.
- 19) «հսկման գոտի» նշանակում է տարածք, որի նկատմամբ կիրառվում են հատուկ կանոններ՝ իոնացնող ճառագայթումից պաշտպանության կամ ռադիոակտիվ աղտոտման տարածումը կանխարգելելու նպատակով, իսկ մուտքն այդ տարածք հսկվում է.
- 20) «ախտորոշիչ էտալոնային մակարդակներ» նշանակում է դոզայի մակարդակները բժշկական ճառագայթային ախտորոշիչ կամ միջամտական ճառագայթման գործելակերպերում կամ, ռադիոդեղագործական արտադրանքի դեպքում, ակտիվության աստիճանը ստանդարտ չափերի հիվանդների խմբերի կամ ստանդարտ ֆանտոմների բնորոշ զննությունների համար՝ սարքավորումների ավելի լայնորեն սահմանված տեսակների համար.

- 21) «անօգտագործելի աղբյուր» նշանակում է փակ աղբյուր, որն այլևս չի օգտագործվում կամ չի նախատեսվում օգտագործման համար, որի գործածման համար շնորհվել է թույլտվություն, սակայն այն շարունակում է պահանջել անվտանգ կառավարում.
- 22) «դոզայի բաժնեմաս» նշանակում է բաժնեմաս, որը սահմանվել է որպես անհատական դոզաների առավելագույն շեմ, որն օգտագործվում է ճառագայթահարման պլանավորված իրավիճակում ճառագայթման տվյալ աղբյուրի օպտիմալացման գործընթացում այլընտրանքների միջակայքը սահմանելու համար.
- 23) «դոզայի սահման» նշանակում է արդյունարար դոզայի (եթե կիրառելի է՝ սպասվող արդյունարար դոզայի) կամ համարժեք դոզայի արժեքը սահմանված ժամանակահատվածում, որն անհատի դեպքում չպետք է գերազանցվի.
- 24) «դոզիմետրային հսկողության ծառայություն» նշանակում է մարմին կամ անհատ, որը պատասխանատու է առանձին մոնիթորինգ իրականացնող սարքերի ստուգաճշտման, ընթերցման կամ մեկնաբանության կամ մարդու մարմնում կամ կենսաբանական նմուշներում ռադիոակտիվության չափման կամ դոզաների գնահատման համար, որի՝ այդ մասով իրավասությունը ճանաչված է իրավասու մարմնի կողմից.
- 25) «արդյունարար դոզան» (E) ներքին եւ արտաքին ճառագայթահարման հետեւանքով մարմնի բոլոր հյուսվածքներում եւ օրգաններում համարժեք դոզայի եւ կշռային գործակցի գումարն է: Դա հաշվարկվում է հետեւյալ արտահայտությամբ՝

$$E = \sum_T W_T H_T = \sum_T W_T \sum_R W_R D_{T,R}$$

որտեղ՝

$D_{T,R}$ -ը T հյուսվածքում կամ օրգանում միջին կլանված դոզան է՝ ըստ R ճառագայթման,

w_R -ը ճառագայթման կշռային գործակիցն է, եւ

w_T -ն T հյուսվածքում կամ օրգանում հյուսվածքային կշռային գործակիցն է:

w_T -ի եւ w_R -ի արժեքները սահմանված են II հավելվածում: Արդյունարար դոզայի միավորը Չիվերտոն է (Չվ).

- 26) «վթար» նշանակում է ճառագայթման աղբյուր ներառող ոչ սովորական իրավիճակ կամ դեպք, որն առաջացնում է անհապաղ գործողություն ձեռնարկելու անհրաժեշտություն՝ մարդու առողջության եւ անվտանգության, կյանքի որակի, գույքի կամ շրջակա միջավայրի վրա լուրջ բացասական հետեւանքները կամ այն վտանգները մեղմացնելու համար, որոնք կարող են առաջացնել այդպիսի լուրջ բացասական հետեւանքներ.
- 27) «վթարային ճառագայթահարման իրավիճակ» նշանակում է վթարի հետեւանքով ճառագայթահարման իրավիճակ.
- 28) «վթարների կառավարման համակարգ» նշանակում է իրավական կամ վարչական դաշտ, որով սահմանվում են վթարներին պատրաստվածության եւ արձագանքելու պատասխանատվություններ, եւ վթարային ճառագայթահարման իրավիճակում որոշումներ կայացնելու մասով կարգադրություններ.
- 29) «մասնագիտական վթարային ճառագայթահարում» նշանակում է վթարային ճառագայթահարման իրավիճակում վթարային աշխատակցի ստացած ճառագայթահարում.
- 30) «վթարին արձագանքման ծրագիր» նշանակում է վթարային ճառագայթահարման իրավիճակում ենթադրյալ դեպքերի եւ դրանց հետ կապված սցենարների հիման վրա պատշաճ արձագանքելու մասով կարգադրություններ.

- 31) «վթարային աշխատակից» նշանակում է վթարի դեպքում սահմանված դեր ունեցող ցանկացած անձ, որը վթարին արձագանքելու ժամանակ գործողություն ձեռնարկելիս կարող է ենթարկված լինել ճառագայթահարման.
- 32) «շրջակա միջավայրի դիտանցում» նշանակում է շրջակա միջավայրում ռադիոակտիվ նյութերի առկայության կամ շրջակա միջավայրի բաղադրիչներում ռադիոակտիվ իզոտոպների կուտակման հետեւանքով արտաքին դրզայի հզորության չափում.
- 33) «համարժեք դոզա» (H_T) նշանակում է T հյուսվածքում կամ օրգանում կլանված դոզա՝ հաշվարկված R ճառագայթման տեսակի եւ որակի կշռային գործակցով: Դա հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$H_{T,R} = W_R D_{T,R}$$

որտեղ՝

$D_{T,R}$ -ը T հյուսվածքում կամ օրգանում միջին կլանված դոզան է՝ ըստ R ճառագայթման.

w_R -ը ճառագայթման կշռային գործակիցն է:

Երբ ճառագայթման դաշտը բաղկացած է w_R -ի տարբեր արժեքների ունեցող տեսակներից եւ էներգիաներից, գումարային համարժեք դոզան՝ H_T -ն, հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$H_T = \sum_R W_R D_{T,R}$$

w_r -ի արժեքները սահմանված են II հավելվածի «Ա» բաժնով: Համարժեք դոզայի միավորը Չիվերտոն է (Չվ).

- 34) «կարգավորող ազդեցությունից ազատման մակարդակ» նշանակում է իրավասու մարմնի կողմից կամ օրենսդրությամբ սահմանված եւ

տեսակարար ռադիոակտիվությամբ կամ գումարային ակտիվությամբ արտահայտված արժեք, որի դեպքում կամ որից ցածր ճառագայթման աղբյուրը ենթակա չէ ծանուցման կամ թույլտվության ստացման.

- 35) «ճառագայթահարման առկա իրավիճակ» նշանակում է ճառագայթահարման իրավիճակ, որն արդեն իսկ առկա է, երբ պետք է կայացնել դրա հսկողության մասին որոշում, եւ որը չի պահանջում կամ այլեւս չի պահանջում, որ ձեռնարկվեն հրատապ միջոցներ.
- 36) «ճառագայթահարման ենթարկվող աշխատող» նշանակում է անձ՝ ինքնազբաղ կամ գործատուի մոտ աշխատող, որը ենթակա է ճառագայթահարման սույն հրահանգով կարգավորվող գործելակերպի շրջանակներում աշխատանք իրականացնելիս, եւ որը հակված է ստանալ հանրային ճառագայթահարման դոզաների սահմաններից մեկը կամ մի քանիսը գերազանցող դոզա.
- 37) «ճառագայթահարում» նշանակում է ճառագայթահարելու գործընթացը կամ մարմնից դուրս (արտաքին ճառագայթահարում) կամ մարմնի ներսում (ներքին ճառագայթահարում) արձակվող իոնացնող ճառագայթահարման ենթարկված լինելու վիճակը.
- 38) «վերջույթներ» նշանակում է ձեռքերը, նախաբազուկները, ոտքերը եւ կոճերը.
- 39) «վնաս առողջությանը» նշանակում է կյանքի տեւողության կրճատում եւ որակի նվազեցում, որը բնակչության շրջանում առաջանում է ճառագայթահարումից հետո, այդ թվում՝ նրանք, որոնք առաջանում են հյուսվածքային ռեակցիաներից, քաղցկեղից եւ լուրջ գենետիկ խանգարումներից.
- 40) «բժշկական զննություն» նշանակում է բժշկական ճառագայթային կայանքներ օգտագործելու միջոցով բնակչության վտանգված խմբերի վաղ ախտորոշման համար իրականացվող գործընթաց.

- 41) «բարձր ակտիվության փակ աղբյուր» նշանակում է փակ աղբյուր, որի դեպքում պարունակվող ռադիոակտիվ իզոտոպի ակտիվությունը հավասար է կամ գերազանցում է III հավելվածով սահմանված ակտիվության համապատասխան արժեքը.
- 42) «անհատական վնաս» նշանակում է կլինիկորեն դիտարկելի այնպիսի վնասակար ազդեցություններ անհատների կամ նրանց հետնորդների համար, որոնք առաջանում են կա՛մ անմիջապես, կա՛մ ավելի ուշ, եւ, վերջին դեպքում, ենթադրվում է առաջացման հավանականություն, այլ ոչ՝ որոշակիություն.
- 43) «ստուգում» նշանակում է որեւէ իրավասու մարմնի կողմից կամ անունից անցկացվող քննություն՝ ազգային իրավական պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար.
- 44) «կլանում» նշանակում է ռադիոակտիվ իզոտոպի ընդհանուր ակտիվությունն արտաքին միջավայրից մարմին ներթափանցելիս.
- 45) «միջամտական ճառագայթաբանություն» նշանակում է ռենտգենյան ճառագայթների միջոցով պատկերման օգտագործում՝ ախտորոշիչ կամ բուժման նպատակներով մարմնում սարքերի ներդնումը եւ ուղղորդումը դյուրացնելու համար.
- 46) «իոնացնող ճառագայթում» նշանակում է էներգիայի փոխանցում մասնիկների կամ էլեկտրամագնիսական ճառագայթների ձեւով՝ 100 նանոմետր կամ պակաս ալիքի երկարությամբ ($3 \cdot 10^{15}$ Հց կամ ավելի հաճախականությամբ), որոնք ունակ են ուղղակիորեն կամ անուղղակիորեն իոններ առաջացնելու.
- 47) «լիցենզիա» նշանակում է իրավասու մարմնի կողմից փաստաթղթում տրված թույլտվություն՝ այդ փաստաթղթում սահմանված կոնկրետ պայմաններին համապատասխան գործունեություն իրականացնելու համար.

- 48) «բժշկական ճառագայթահարում» նշանակում է ճառագայթահարում, որին ենթարկվում են հիվանդները կամ ախտանիշներ չունեցող անհատները՝ որպես իրենց սեփական կամ ատամնաբուժական ախտորոշման կամ բուժման մաս, եւ որը նպատակ ունի օգուտ տալ նրանց առողջությանը, ինչպես նաեւ ճառագայթահարում, որին ենթարկվում են խնամողներն ու սփոփողները եւ կամավորները բժշկական կամ կենսաբժշկական հետազոտության ընթացքում.
- 49) «բժշկական ֆիզիկայի փորձագետ» նշանակում է անհատ կամ, եթե ազգային օրենսդրությամբ նախատեսված է, անհատների խումբ, որն ունի գիտելիքներ, վերապատրաստում եւ փորձ՝ գործելու կամ խորհուրդ տալու բժշկական ճառագայթահարման դեպքում կիրառվող ճառագայթային ֆիզիկայի հետ կապված հարցերում, որի իրավասությունն այդ առնչությամբ ճանաչված է իրավասու մարմնի կողմից.
- 50) «բժշկական ճառագայթային» նշանակում է ճառագայթային ախտորոշման կամ ճառագայթային թերապիայի պրոցեդուրաներին եւ միջամտական ճառագայթաբանությանը կամ պլանավորման, ուղղորդման կամ ստուգման նպատակներով իոնացնող ճառագայթման բժշկական այլ կիրառությունների վերաբերող.
- 51) «բժշկական ճառագայթային կայանք» նշանակում է հարմարանք, որում կատարվում են բժշկական ճառագայթային պրոցեդուրաները.
- 52) «բժշկական ճառագայթային պրոցեդուրա» նշանակում է բժշկական ճառագայթահարում առաջացնող ցանկացած գործընթաց.
- 53) «հանրության անդամներ» նշանակում է անհատներ, որոնք կարող են ենթարկվել հանրային ճառագայթահարման.
- 54) «ճառագայթման բնական աղբյուր» նշանակում է իոնացնող ճառագայթման բնական, երկրային կամ տիեզերական ծագման աղբյուր.

- 55) «ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարում» նշանակում է մարդկանց ցանկացած դիտավորյալ ճառագայթահարում պատկերման նպատակներով, եթե ճառագայթահարման առաջնային մտադրությունը ճառագայթահարման ենթարկվող անհատի առողջությանն օգուտ տալը չէ.
- 56) «բնականոն ճառագայթահարում» նշանակում է ճառագայթահարում, որն ակնկալվում է, որ կառաջանա հարմարանքի աշխատանքի կամ գործունեության բնականոն պայմաններում (այդ թվում՝ պահպանման, ստուգման, ապասարքավորման), այդ թվում՝ փոքր միջադեպերը, որոնք կարող են պահվել հսկողության տակ, այսինքն՝ բնականոն գործունեության ընթացքում եւ շահագործման ընթացքում ակնկալվող դեպքերը.
- 57) «ծանուցում» նշանակում է տեղեկությունների ներկայացում իրավասու մարմին՝ սույն հրահանգի շրջանակում գործունեություն իրականացնելու մտադրության մասին ծանուցելու համար.
- 58) «մասնագիտական ճառագայթահարում» նշանակում է աշխատողների, փորձնականների եւ ուսանողների ճառագայթահարում, որն առաջացել է նրանց աշխատանքի ընթացքում.
- 59) «մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայություն» նշանակում է առողջապահության ոլորտի մասնագետ կամ մարմին, որն իրավասու է իրականացնելու ճառագայթահարման ենթարկվող աշխատողների բժշկական վերահսկողություն, եւ որի իրավասությունը՝ գործելու այդ առնչությամբ, ճանաչված է իրավասու մարմնի կողմից.
- 60) «տիրազուրկ աղբյուր» նշանակում է ռադիոակտիվ աղբյուր, որը ո՛չ ազատված է կարգավորող հսկողությունից, ո՛չ գտնվում է դրա ներքո, օրինակ՝ քանի որ այն երբեք չի եղել կարգավորող հսկողության ներքո կամ քանի որ դրանից հրաժարվել են, այն կորել է, տեղին չի եղել, գողացվել է կամ այլ կերպ փոխանցվել է՝ առանց պատշաճ թույլտվության.

- 61) «բացօթյա տարածքներում աշխատող» նշանակում է ցանկացած ճառագայթահարման ենթարկվող աշխատող, որը չի աշխատում վերահսկվող եւ հսկվող գոտիների համար պատասխանատու կազմակերպությունում, սակայն գործունեություն է իրականացնում այդ գոտիներում, այդ թվում՝ փորձնակները եւ ուսանողները.
- 62) «ճառագայթահարման պլանավորված իրավիճակ» նշանակում է ճառագայթահարման իրավիճակ, որն առաջանում է ճառագայթման աղբյուրի պլանավորված աշխատանքից կամ մարդկային գործունեությունից, որը փոփոխում է ճառագայթահարման ուղիները, որպեսզի առաջացնի մարդկանց կամ շրջակա միջավայրի ճառագայթահարում կամ հնարավոր ճառագայթահարում: Ճառագայթահարման պլանավորված իրավիճակները կարող են ներառել թե՛ բնականոն ճառագայթահարումներ, թե՛ հնարավոր ճառագայթահարումներ.
- 63) «հնարավոր ճառագայթահարում» նշանակում է ճառագայթահարում, որը որոշակիությամբ չի ակնկալվում, սակայն կարող է առաջանալ հավանական բնույթի դեպքի կամ դեպքերի հաջորդականության հետեւանքով, այդ թվում՝ սարքավորումների խափանումների եւ գործառնական սխալների հետեւանքով.
- 64) «բժշկական ճառագայթային պրոցեդուրաների գործնական ասպեկտները» նշանակում է բժշկական ճառագայթահարման ֆիզիկական վարքը եւ ցանկացած հիմնավորող ասպեկտ, այդ թվում՝ բժշկական ճառագայթային սարքավորումների օգտագործումը, տեխնիկական եւ ֆիզիկական հարաչափերի (այդ թվում՝ ճառագայթման դոզաների) գնահատումը, սարքավորումների ստուգաճշտումը եւ պահպանումը, ռադիոդեղագործական արտադրանքի պատրաստումն ու կառավարումը եւ պատկերների մշակումը.

- 65) «գործելակերպ» նշանակում է մարդկային գործունեություն, որը կարող է բարձրացնել ճառագայթման աղբյուրից անհատների ճառագայթահարումը եւ կառավարվում է որպես ճառագայթահարման պլանավորված իրավիճակ.
- 66) «բուժաշխատող» նշանակում է բժիշկ, ատամնաբույժ կամ առողջապահության ոլորտի այլ մասնագետ, որն իրավասու է ստանձնել կլինիկական պատասխանատվություն անհատական բժշկական ճառագայթահարման համար՝ ազգային պահանջներին համապատասխան.
- 67) «մշակում» նշանակում է քիմիական կամ ֆիզիկական գործողություններ, որոնք կատարվում են ռադիոակտիվ նյութերի նկատմամբ, այդ թվում՝ տրոհվող կամ պարարտացնող միջուկային նյութերի հանքարդյունաբերություն, փոխարկում, հարստացում եւ աշխատած վառելիքի վերամշակում.
- 68) «պաշտպանիչ միջոցներ» նշանակում է ուղղիչ միջոցներից բացի այլ միջոցներ՝ այն դոզաներից խուսափելու կամ դրանք նվազեցնելու նպատակով, որոնք կարող են հակառակ դեպքում ստացվել վթարային ճառագայթահարման իրավիճակում կամ ճառագայթահարման առկա իրավիճակում.
- 69) «հանրային ճառագայթահարում» նշանակում է անհատների ճառագայթահարում՝ բացառությամբ մասնագիտական ճառագայթահարման կամ բժշկական ճառագայթահարման.
- 70) «որակի ապահովում» նշանակում է բոլոր այն պլանավորված եւ համակարգային գործողությունները, որոնք անհրաժեշտ են պատշաճ կերպով ապահովելու համար, որ կառույցը, համակարգը, բաղադրիչը կամ պրոցեդուրան բավարար կերպով իրականանան՝ համաձայնեցված ստանդարտներին համապատասխան: Որակի հսկողությունը որակի ապահովման մասն է.

- 71) «որակի հսկողություն» նշանակում է գործողությունների խումբ (ծրագրավորում, համակարգում, իրականացում), որը նախատեսված է որակը պահպանելու կամ բարելավելու համար: Այն ընդգրկում է սարքավորումների աշխատանքի բոլոր այն բնորոշիչների դիտանցումը, գնահատումը եւ պահանջվող մակարդակում պահպանումը, որոնք կարող են սահմանվել, չափվել եւ հսկվել:
- 72) «ճառագայթման գեներատոր» նշանակում է սարք, որն ունակ է առաջացնելու իոնացնող ճառագայթում, ինչպիսիք են ռենտգենյան ճառագայթները, էլեկտրոնները կամ այլ լիցքավորված մասնիկներ:
- 73) «ճառագայթումից պաշտպանության փորձագետ» նշանակում է անհատ կամ, եթե ազգային օրենսդրությամբ նախատեսված է, անհատների խումբ, որն ունի գիտելիքներ, վերապատրաստում եւ փորձ՝ ճառագայթումից պաշտպանության մասով խորհուրդ տալու՝ անհատների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով, եւ որի իրավասությունն այդ առնչությամբ ճանաչված է իրավասու մարմնի կողմից:
- 74) «ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձ» նշանակում է անհատ, որը տեխնիկապես իրավասու է ճառագայթումից պաշտպանության՝ գործելակերպի տվյալ տեսակին համապատասխան հարցերում՝ վերահսկելու կամ իրականացնելու ճառագայթումից պաշտպանության մասով կարգադրությունները:
- 75) «ճառագայթման աղբյուր» նշանակում է սուբյեկտ, որը կարող է ճառագայթահարում առաջացնել, ինչպես, օրինակ՝ իոնացնող ճառագայթում արձակելու կամ ռադիոակտիվ նյութ բաց թողնելու միջոցով:
- 76) «ռադիոակտիվ նյութ» նշանակում է նյութ, որը ներառում է ռադիոակտիվ նյութեր:
- 77) «ռադիոակտիվ աղբյուր» նշանակում է ճառագայթման աղբյուր, որը ներառում է ռադիոակտիվ նյութ՝ դրա ռադիոակտիվությունն օգտագործելու նպատակով:

- 78) «ռադիոակտիվ նյութ (սուբստանցիա)» նշանակում է ցանկացած նյութ, որը պարունակում է մեկ կամ մի քանի ռադիոակտիվ իզոտոպներ, որոնց ակտիվությունը կամ տեսակարար ակտիվությունը չի կարող անտեսվել ճառագայթային պաշտպանության առումով.
- 79) «ռադիոակտիվ թափոն» նշանակում է գազային, հեղուկ կամ պինդ վիճակում գտնվող ռադիոակտիվ նյութ, որի համար անդամ պետությունը կամ իրավաբանական կամ ֆիզիկական այն անձը, որի որոշումն ընդունվում է անդամ պետության կողմից, չի նախատեսում կամ դիտարկում հետագա օգտագործում, եւ որն իրավասու կարգավորող մարմնի կողմից կարգավորվում է որպես ռադիոակտիվ թափոն՝ անդամ պետության իրավական եւ կարգավորող շրջանակներին համապատասխան.
- 80) «ճառագայթային ախտորոշում» նշանակում է in-vivo ախտորոշիչ միջուկային բժշկությանը, իոնացնող ճառագայթում օգտագործող բժշկական ախտորոշիչ ճառագայթաբանությանը եւ ատամնաբուժական ճառագայթմանը վերաբերող.
- 81) «բուժիչ ճառագայթային» նշանակում է ճառագայթային բուժմանը վերաբերող, այդ թվում՝ միջուկային բժշկությանը՝ բուժիչ նպատակներով.
- 82) «ռադոն» նշանակում է Rn-222 ռադիոակտիվ իզոտոպ եւ, անհրաժեշտության դեպքում, դրա տրոհման արդյունքում առաջացող դուստր իզոտոպներ.
- 83) «ռադոնից ճառագայթահարում» նշանակում է ճառագայթահարում ռադոնի տրոհումից.
- 84) «էտալոնային մակարդակ» նշանակում է վթարային ճառագայթահարման իրավիճակում կամ ճառագայթահարման առկա իրավիճակում արդյունարար դոզայի կամ համարժեք դոզայի մակարդակը կամ տեսակարար ակտիվությունը, որից ավելիի դեպքում պատշաճ չի համարվում թույլ տալ, որ առաջանան ճառագայթահարումներ այդ ճառագայթահարման իրավիճակի արդյունքում՝ նույնիսկ եթե դա այնպիսի սահմանաչափ չէ, որը չի կարելի գերազանցել.

- 85) «ուղեգիր նշանակող» նշանակում է բժիշկ, ատամնաբույժ կամ առողջապահության ոլորտի այլ մասնագետ, որն իրավասու է անհատներին բժշկական ճառագայթային պրոցեդուրաներ ստանալու համար ուղղորդել բուժաշխատողի մոտ՝ ազգային պահանջներին համապատասխան.
- 86) «գրանցում» նշանակում է թույլտվություն, որն իրավասու մարմնի կողմից տրամադրվում է փաստաթղթում կամ տրամադրվում է ազգային օրենսդրությամբ՝ պարզեցված ընթացակարգով՝ գործելակերպի տվյալ տեսակի կամ դասի համար ազգային օրենսդրությունում կամ իրավասու մարմնի կողմից սահմանված պայմաններին համապատասխան.
- 87) «կարգավորող հսկողություն» նշանակում է հսկողության կամ կարգավորման ցանկացած ձեւ, որը կիրառվում է մարդկային գործունեության նկատմամբ՝ ճառագայթումից պաշտպանության պահանջների կատարման համար.
- 88) «ուղղիչ միջոցներ» նշանակում է ճառագայթման աղբյուրի հեռացում կամ դրա մագնիտուդի նվազեցում (ակտիվության եւ քանակի առումով) կամ ճառագայթահարման ուղիների ընդհատում կամ դրանց ազդեցության նվազեցում՝ այն դոզաներից խուսափելու կամ դրանք նվազեցնելու նպատակներով, որոնք կարող են հակառակ դեպքում ստացվել ճառագայթահարման առկա իրավիճակում.
- 89) «ներկայացուցիչ» նշանակում է դոզա ստացող անհատ, որը բնակչության ավելի բարձր դոզա ստացող անհատների ներկայացուցիչ է՝ բացառությամբ այն անհատների, որոնք ունեն ծայրահեղ կամ հազվադեպ հանդիպող սովորություններ.
- 90) «փակ աղբյուր» նշանակում է ռադիոակտիվ աղբյուր, որում ռադիոակտիվ նյութը մշտապես փակված է պատիճում կամ ներառված է պինդ վիճակում՝ օգտագործման բնականոն պայմաններում ռադիոակտիվ նյութերի ցանկացած քայքայում կանխելու նպատակով.

- 91) «Զիվերտը» (Զվ) համարժեք կամ արդյունարար դոզայի միավորի հատուկ անվանումն է: Մեկ Զիվերտը հավասար է մեկ կիլոգրամ ջրույի՝ $1 \text{ Զվ} = 1 \text{ Զ կգ}^{-1}$.
- 92) «պահեստավորում» նշանակում է ռադիոակտիվ նյութի, այդ թվում՝ աշխատած վառելիքի, ռադիոակտիվ աղբյուրի կամ ռադիոակտիվ թափոնների պահպանում տեղակայանքում՝ տեղափոխելու մտադրությամբ.
- 93) «դիտարկման գոտի» նշանակում է գոտի, որը ենթակա է դիտարկման՝ իոնացնող ճառագայթումից պաշտպանելու նպատակով.
- 94) «աղբյուրի կոնտեյներ» նշանակում է բաղադրիչների հավաքածու՝ նախատեսված փակ աղբյուրի հերմետիկությունը երաշխավորելու համար, եթե այն աղբյուրի բաղկացուցիչ մասը չէ, այլ նախատեսված է աղբյուրը դրա փոխադրման եւ տեղափոխման ընթացքում պաշտպանելու համար.
- 95) «տիեզերանավ» նշանակում է մարդու կողմից ղեկավարվող տրանսպորտային միջոց՝ նախատեսված ծովի մակարդակից 100 կմ-ից ավելի բարձրության վրա աշխատելու համար.
- 96) «ստանդարտ արժեքներ եւ հարաբերություններ» նշանակում է արտաքին ճառագայթահարման դոզաների նախահաշվարկման համար ՃՊՄՀ-ի 116-րդ հրապարակման 4-րդ եւ 5-րդ գլուխներում առաջարկվող, իսկ ներքին ճառագայթահարման դոզաների նախահաշվարկման համար՝ ՃՊՄՀ-ի 119-րդ հրապարակման 1-ին գլխում առաջարկվող արժեքները եւ հարաբերությունները, այդ թվում՝ անդամ պետությունների կողմից հաստատված արժեքները եւ հարաբերությունները: Անդամ պետությունը կարող է հաստատել ռադիոակտիվ իզոտոպի ֆիզիկաքիմիական հատկությունների կամ ճառագայթահարման իրավիճակի կամ ճառագայթահարման ենթարկված անհատի այլ բնութագրերի հետ կապված կոնկրետ դեպքերում հատուկ մեթոդների օգտագործումը.

- 97) «տորոն» նշանակում է Rn-Rn-220 ռադիոակտիվ իզոտոպ եւ, անհրաժեշտության դեպքում, դրա տրոհման արդյունքում առաջացող դուստր իզոտոպներ.
- 98) «կազմակերպություն» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ազգային օրենսդրությամբ ունի իրավական պատասխանատվություն՝ գործունեություն իրականացնելու կամ ճառագայթման աղբյուրի (այդ թվում՝ այն դեպքերի, երբ ճառագայթման աղբյուրի սեփականատերը կամ տիրապետողը չի իրականացնում հարակից մարդկային գործունեություն) համար.
- 99) «չնախատեսված ճառագայթահարում» նշանակում է բժշկական ճառագայթահարում, որը զգալիորեն տարբեր է տվյալ նպատակով բժշկական ճառագայթահարումից:

ԳԼՈՒԽ III

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 5

Ճառագայթումից պաշտպանության ընդհանուր սկզբունքները

Անդամ պետությունները սահմանում են իրավական պահանջներ եւ կարգավորող հսկողության պատշաճ ռեժիմ, որը ճառագայթահարման բոլոր իրավիճակների դեպքում արտացոլում է ճառագայթումից պաշտպանության համակարգը՝ հիմնված հիմնավորման, օպտիմալացման եւ դոզայի սահմանափակման սկզբունքների վրա.

- ա) Հիմնավորումը. Գործելակերպ ներդնելու վերաբերյալ որոշումները պետք է հիմնավորվեն այն իմաստով, որ այդպիսի որոշումները պետք է կայացվեն՝ մտադրություն ունենալով ապահովելու, որ գործելակերպի արդյունքում առաջացող անհատական կամ հասարակական օգուտը գերազանցի առողջության այն վնասը, որն այն կարող է պատճառել: Ճառագայթահարման առկա իրավիճակում կամ վթարային ճառագայթահարման իրավիճակում ճառագայթահարման ուղի ներդնելու կամ այն փոփոխելու մասին որոշումները պետք է հիմնավորվեն այն իմաստով, որ դրանք պետք է ավելի շատ օգուտ տան, քան վնասեն:
- բ) Օպտիմալացումը. Հանրային կամ մասնագիտական ճառագայթահարման ենթակա անհատների պաշտպանությունը ճառագայթամից պետք է օպտիմալացվի՝ անհատական դոզաների մագնիտուդը, ճառագայթահարման հավանականությունը եւ ճառագայթահարման ենթարկված անհատների թիվը ողջամտության սահմաններում հնարավորինս ցածր պահելու նպատակով՝ հաշվի առնելով տեխնիկական գիտելիքների ներկայիս վիճակը եւ տնտեսական ու հասարակական գործոնները: Բժշկական ճառագայթահարման ենթակա անհատների պաշտպանության օպտիմալացումը պետք է կիրառվի անհատական դոզաների մագնիտուդի նկատմամբ եւ համապատասխան լինի ճառագայթահարման բժշկական նպատակներին՝ ինչպես նկարագրված է 56-րդ հոդվածում: Այս սկզբունքը պետք է կիրառվի ոչ միայն արդյունարար դոզայի, այլեւ, անհրաժեշտության դեպքում, համարժեք դոզաների առումով՝ որպես նախազգուշական միջոց, որը հնարավորություն կտա առողջությանը պատճառվող վնասի մասով անորոշությունները հյուսվածքային ռեակցիաների շեմից ներքեւ պահպանել:
- գ) Դոզայի սահմանափակումը. Ճառագայթահարման պլանավորված իրավիճակներում անհատի ստացած դոզաների հանրագումարը չպետք է

գերազանցի մասնագիտական կամ հանրային ճառագայթահարման համար սահմանված դոզայի սահմանները: Դոզայի սահմանները չեն կիրառվում բժշկական ճառագայթահարումների նկատմամբ:

ԲԱԺԻՆ 1

Օպտիմալացման գործիքները

Հոդված 6

Դոզայի սահմանափակումները մասնագիտական, հանրային եւ բժշկական ճառագայթահարումների համար

1. Անդամ պետություններն ապահովում են, որ, անհրաժեշտության դեպքում, դոզայի սահմանափակումները սահմանվեն պաշտպանության օպտիմալացման նպատակներով.
 - ա) մասնագիտական ճառագայթահարման դեպքում դոզայի սահմանափակումը պետք է սահմանվի որպես գործառնական գործիք՝ կազմակերպության կողմից իրավասու մարմնի ընդհանուր վերահսկողության ներքո օպտիմալացման համար: Բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում դոզայի սահմանափակումը պետք է սահմանվի գործատուի եւ կազմակերպության միջեւ համագործակցությամբ:
 - բ) հանրային ճառագայթահարման դեպքում դոզայի սահմանափակումը պետք է սահմանվի այն անհատական դոզայի համար, որը հանրության անդամները ստանում են ճառագայթման կոնկրետ աղբյուրի պլանավորված աշխատանքից: Իրավասու մարմինը պետք է ապահովի, որ սահմանափակումները համապատասխանեն բոլոր թույլատրված գործունեություններից միեւնույն անհատի ստացած դոզաների հանրագումարի դոզայի սահմանին:

գ) բժշկական ճառագայթահարման դեպքում դոզայի սահմանափակումները պետք է կիրառվեն միայն խնամողների ու սփոփողների եւ բժշկական կամ կենսաբժշկական հետազոտությանը մասնակցող կամավորների պաշտպանության առնչությամբ:

2. Դոզայի սահմանափակումները պետք է սահմանվեն սահմանված համապատասխան ժամանակահատվածում անհատական արդյունարար կամ համարժեք դոզաների առումով:

Հոդված 7

Էտալոնային մակարդակները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ սահմանվեն էտալոնային մակարդակներ վթարային կամ ճառագայթահարման առկա իրավիճակների համար: Պաշտպանության օպտիմալացմամբ պետք է առաջնահերթությունը տրվի էտալոնային մակարդակից բարձր ճառագայթահարումներին եւ շարունակի իրականացվել էտալոնային մակարդակից ներքե:

2. Էտալոնային մակարդակների համար ընտրված արժեքները պետք է կախված լինեն ճառագայթահարման իրավիճակի տեսակից: Էտալոնային մակարդակների ընտրությամբ պետք է հաշվի առնվեն թե՛ ճառագայթումից պաշտպանության մասով պահանջները, թե՛ հասարակական չափորոշիչները: Հանրային ճառագայթահարման դեպքում էտալոնային մակարդակների սահմանմամբ պետք է հաշվի առնվի I հավելվածում սահմանված էտալոնային մակարդակների միջակայքերը:

3. Ռադոնից ճառագայթահարման առկա իրավիճակների դեպքում էտալոնային մակարդակները պետք է սահմանվեն օդում ռադոնի տեսակարար ակտիվության առումով՝ հանրության անդամների համար՝ ինչպես սահմանված է 74-րդ հոդվածում, աշխատողների համար՝ ինչպես սահմանված է 54-րդ հոդվածում:

ԲԱԺԻՆ 2

Դոզայի սահմանը*Հոդված 8***Ճառագայթահարման ենթարկվող
աշխատողների տարիքային սահմանը**

Անդամ պետություններն ապահովում են, որ համաձայն 11(2) հոդվածի՝ 18 տարին չլրացած անձանց չի կարող հանձնարարվել այնպիսի աշխատանք, որի հետեւանքով նրանք կարող են ենթարկվել ճառագայթահարման:

*Հոդված 9***Դոզայի սահմանները մասնագիտական
ճառագայթահարման դեպքում**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ մասնագիտական ճառագայթահարման դոզայի սահմանները կիրառվեն աշխատողի՝ բոլոր թույլատրված գործելակերպերից մասնագիտական ճառագայթահարման, 54(3) հոդվածին համապատասխան ծանուցում պահանջող՝ աշխատավայրում ռադոնից մասնագիտական ճառագայթահարման եւ 100(3) հոդվածին համապատասխան ճառագայթահարման առկա իրավիճակներից այլ մասնագիտական ճառագայթահարման տարեկան հանրագումարի նկատմամբ: Մասնագիտական վթարային ճառագայթահարման նկատմամբ կիրառվում է 53-րդ հոդվածը:

2. Արդյունաբար դոզայի սահմանը մասնագիտական ճառագայթահարման դեպքում պետք է լինի 20 մՋվ՝ ցանկացած տարում: Այնուամենայնիվ, հատուկ հանգամանքներում կամ ազգային օրենսդրությամբ սահմանված՝ ճառագայթահարման որոշակի իրավիճակներում իրավասու մարմնի կողմից կարող է թույլատրվել մեկ տարվա ընթացքում ավելի բարձր՝ մինչեւ 50 մՋվ

արդյունարար դոզա՝ պայմանով, որ ցանկացած հինգ հաջորդական տարիների, այդ թվում՝ այն տարիների ընթացքում, որոնց համար դոզայի սահմանը գերազանցվել է, միջին տարեկան դոզան չգերազանցի 20 մՋվ-ն:

3. Ի հավելումն 2-րդ պարբերության մեջ սահմանված արդյունարար դոզայի սահմանների՝ կիրառվում են համարժեք դոզայի հետեւյալ սահմանները՝

ա) աչքի ոսպնյակի համար համարժեք դոզայի սահմանը պետք է լինի մեկ տարվա ընթացքում 20 մՋվ կամ 100 մՋվ ցանկացած հինգ հաջորդական տարիների ընթացքում, որոնք ենթակա են մեկ տարվա ընթացքում առավելագույնը 50 մՋվ դոզայի՝ ինչպես սահմանված է ազգային օրենսդրությամբ.

բ) մաշկի համար համարժեք դոզայի սահմանը մեկ տարվա ընթացքում պետք է լինի 500 մՋվ. այս սահմանը կիրառվում է ցանկացած 1սմ² հատվածում միջին դոզայի նկատմամբ՝ անկախ ճառագայթահարման ենթարկվող հատվածից.

գ) վերջույթների համար համարժեք դոզայի սահմանը մեկ տարվա ընթացքում պետք է լինի 500 մՋվ:

Հոդված 10

Հղի եւ կերակրող աշխատողների պաշտպանությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ դեռեւս չծնված երեխայի պաշտպանությունը համեմատելի լինի հանրության անդամների համար տրամադրվող պաշտպանությանը: Հենց որ հղի աշխատողը տեղեկացնում է կազմակերպությանը, իսկ բացօթյա տարածքներում աշխատողի դեպքում՝ գործատուին հղիության մասին, ազգային օրենսդրությանը համապատասխան՝ կազմակերպությունը եւ գործատուն ապահովում են, որ հղի աշխատողի աշխատանքային պայմանները լինեն այնպիսին, որ դեռեւս չծնված երեխայի

համար համարժեք դոզան լինի ողջամտության սահմաններում հնարավորինս ցածր եւ հավանական չլինի, որ հղիության առնվազն մնացած ժամանակահատվածում գերազանցի 1 մՁվ-ն:

2. Հենց որ աշխատողները տեղեկացնում են կազմակերպությանը, իսկ բացօթյա տարածքներում աշխատողի դեպքում՝ գործատուին, որ իրենք կրծքով կերակրում են նորածնի, նրանք չպետք է ներգրավվեն ռադիոակտիվ իզոտոպների կլանման կամ մարմնական աղտոտման նշանակալի վտանգ ներառող աշխատանքում:

Հոդված 11

Դոզայի սահմանները փորձակների եւ ուսանողների համար

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ուսուցման ընթացքում ճառագայթման աղբյուրների հետ աշխատելու պարտականություն ունեցող 18 տարին լրացած փորձակների եւ ուսանողների համար դոզայի սահմանները նույնը լինեն, ինչ մասնագիտական ճառագայթահարման դեպքում՝ 9-րդ հոդվածով սահմանված դոզայի սահմանները:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ ուսուցման ընթացքում ճառագայթահարման աղբյուրների հետ աշխատելու պարտականություն ունեցող 16-18 տարեկան փորձակների եւ ուսանողների համար արդյունաբար դոզայի սահմանը տարեկան 6 մՁվ լինի:

3. Ի հավելումն 2-րդ պարբերության մեջ սահմանված արդյունաբար դոզայի սահմանների՝ կիրառվում են համարժեք դոզայի հետեւյալ սահմանները՝

ա) աչքի ոսպնյակի համար համարժեք դոզայի սահմանը մեկ տարվա ընթացքում պետք է լինի 15 մՁվ.

- բ) մաշկի համար համարժեք դոզայի սահմանը մեկ տարվա ընթացքում պետք է լինի 150 մՁվ՝ միջինացված ցանկացած 1սմ² հատվածի համար՝ անկախ ճառագայթահարման ենթարկվող հատվածից.
- գ) վերջույթների համար համարժեք դոզայի սահմանը մեկ տարվա ընթացքում պետք է լինի 150 մՁվ:
4. Անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթներին չենթարկվող փորձնականների եւ ուսանողների համար դոզայի սահմանները նույնը լինեն, ինչ հանրության անդամների համար 12-րդ հոդվածով սահմանված դոզայի սահմանները:

Հոդված 12

Դոզայի սահմանները հանրային ճառագայթահարման դեպքում

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հանրային ճառագայթահարման դեպքում դոզայի սահմանները կիրառվեն հանրության անդամի՝ բոլոր թույլատրված գործելակերպերից առաջացող տարեկան ճառագայթահարումների հանրագումարի նկատմամբ:
2. Անդամ պետությունները հանրային ճառագայթահարման արդյունարար դոզայի սահմանը սահմանում են 1 մՁվ:
3. Ի հավելումն 2-րդ պարբերության մեջ նշված դոզայի սահմանի՝ կիրառվում են համարժեք դոզայի հետեւյալ սահմանները՝
- ա) աչքի ոսպնյակի համար համարժեք դոզայի սահմանը մեկ տարվա ընթացքում պետք է լինի տարեկան 15 մՁվ.
- բ) մաշկի համար համարժեք դոզայի սահմանը մեկ տարվա ընթացքում պետք է լինի 50 մՁվ՝ միջինացված մաշկի ցանկացած 1սմ² հատվածի համար՝ անկախ ճառագայթահարման ենթարկվող հատվածից:

*Հոդված 13***Արդյունարար եւ համարժեք դոզայի հաշվարկը**

Արդյունարար եւ համարժեք դոզաների հաշվարկման համար օգտագործվում են պատշաճ ստանդարտ արժեքները եւ հարաբերությունները: Արտաքին ճառագայթման համար օգտագործվում են ՃՊՄՀ-ի 116-րդ հրապարակման 2.3 բաժնում սահմանված գործառնական քանակները:

ԳԼՈՒԽ IV

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ ԵՎ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ***Հոդված 14***Կրթության, վերապատրաստման եւ տեղեկությունների
տրամադրման համար ընդհանուր պատասխանատվությունները**

1. Անդամ պետությունները սահմանում են պատշաճ օրենսդրական եւ վարչական շրջանակ, որով ապահովվում է ճառագայթումից պաշտպանության վերաբերյալ կրթության, վերապատրաստման եւ տեղեկությունների ապահովումը բոլոր անհատներին, որոնց առաջադրանքներով պահանջվում են ճառագայթումից պաշտպանության հատուկ իրավասություններ: Վերապատրաստումը եւ տեղեկությունների տրամադրումը պետք է կրկնվի պատշաճ պարբերականությամբ եւ փաստաթղթավորվի:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ կատարվեն կարգադրություններ՝ կրթության, վերապատրաստման եւ կրկնակի

վերապատրաստման սահմանման համար, որպեսզի հնարավոր լինի ճանաչել ճառագայթումից պաշտպանության փորձագետներին եւ բժշկական ֆիզիկայի փորձագետներին, ինչպես նաեւ մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայությունները եւ դոզիմետրային հսկողության ծառայությունները՝ կապված գործելակերպի տեսակի հետ:

3. Անդամ պետությունները կարող են կատարել կարգադրություններ՝ կրթության, վերապատրաստման եւ կրկնակի վերապատրաստման սահմանման համար, որպեսզի հնարավոր լինի ճանաչել ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձանց, եթե ազգային օրենսդրությամբ այդպիսի ճանաչում նախատեսված է:

Հոդված 15

Ճառագայթահարման ենթարկվող աշխատողների վերապատրաստումը եւ նրանց տրամադրվող տեղեկությունները

1. Անդամ պետությունները կազմակերպությունից պահանջում են ճառագայթահարման ենթարկվող աշխատողին տեղեկացնել՝
 - ա) իրենց աշխատանքը կատարելու ընթացքում առողջությանը սպառնացող վտանգների մասին.
 - բ) ճառագայթումից պաշտպանության ընդհանուր ընթացակարգերի եւ ձեռնարկվելիք նախազգուշական միջոցների մասին.
 - գ) ճառագայթումից պաշտպանության ընթացակարգերի եւ նախազգուշական միջոցների մասին, որոնք կապված են թե՛ ընդհանրապես գործելակերպի, թե՛ աշխատակայանի կամ այն աշխատանքի գործառնական եւ աշխատանքային պայմանների հետ, որոնք նրանց կարող են հանձնարարվել.

դ) վթարներին արձագանքման ծրագրերի եւ ընթացակարգերի համապատասխան մասերի մասին.

ե) տեխնիկական, բժշկական եւ վարչական պահանջները կատարելու կարելիության մասին:

Բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում նրանց գործատուն ապահովում է, որ տրամադրվեն «ա», «բ» եւ «ե» կետերով պահանջվող տեղեկությունները:

2. Անդամ պետությունները կազմակերպությունից կամ բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում՝ գործատուից պահանջում են ճառագայթահարման ենթարկվող աշխատողներին տեղեկացնել հղիության մասին վաղ հայտարարելու կարելիության մասին՝ հաշվի առնելով դեռեւս չծնված երեխայի ճառագայթահարման վտանգները:

3. Անդամ պետությունները կազմակերպությունից, կամ բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում՝ գործատուից պահանջում են ճառագայթահարման ենթարկվող աշխատողներին տեղեկացնել նորածին կրծքով կերակրելու մտադրության մասին հայտարարելու կարելիության մասին՝ հաշվի առնելով կրծքով կերակրվող նորածնի ճառագայթահարման վտանգները ռադիոակտիվ իզոտոպների կլանումից կամ մարմնական աղտոտումից հետո:

4. Անդամ պետությունները պահանջում են, որ կազմակերպությունը կամ բացօթյա տարածքներում աշխատողի դեպքում՝ գործատուն անցկացնի ճառագայթումից պատշաճ պաշտպանության վերաբերյալ վերապատրաստում եւ տեղեկատվական ծրագրեր ապահովի ճառագայթահարվող աշխատողների համար:

5. Ի հավելումն 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ պարբերություններում սահմանված՝ ճառագայթումից պաշտպանության բնագավառում տեղեկությունների եւ վերապատրաստման՝ անդամ պետությունները պահանջում են, որ բարձր ակտիվությամբ փակ աղբյուրների համար պատասխանատու

կազմակերպություններն ապահովեն, որ այդպիսի վերապատրաստումը ներառի բարձր ակտիվությամբ փակ աղբյուրների անվտանգ կառավարման եւ հսկողությանը ներկայացվող կոնկրետ պահանջներ՝ համապատասխան աշխատողներին ճառագայթումից պաշտպանության վրա ազդող ցանկացած դեպքին պատշաճորեն նախապատրաստելու նպատակով: Տեղեկատվության մեջ եւ վերապատրաստման ընթացքում պետք է առանձնահատուկ ձեռով շեշտադրվեն անվտանգության համար անհրաժեշտ պահանջները եւ պետք է հատուկ տեղեկություններ տրամադրվեն բարձր ակտիվության փակ աղբյուրների նկատմամբ համապատասխան հսկողության կորստի հնարավոր հետեւանքների մասին:

Հոդված 16

Տիրազուրկ աղբյուրներից հնարավոր ճառագայթահարման ենթարկվող աշխատողների տեղեկատվությունը եւ վերապատրաստումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ այն կայանքների ղեկավարությունը, որտեղ ամենահավանականն է, որ գտնվեն կամ մշակվեն տիրազուրկ աղբյուրներ, այդ թվում՝ մետաղի ջարդոնի խոշոր հրապարակների եւ մետաղի ջարդոնի վերամշակման հիմնական տեղակայանքների ղեկավարությունը, եւ տարանցման հանգուցային կարեւոր կետերում տեղեկացվեն այն հնարավորության մասին, որ նրանք կարող են հանդիպել ճառագայթման աղբյուրի:

2. Անդամ պետությունները խրախուսում են, որ 1-ին պարբերության մեջ նշված կայանքների ղեկավարությունն ապահովի, որ եթե աշխատողներն իրենց կայանքներում կարող են հանդիպել ճառագայթման աղբյուրի, ապա նրանք՝

ա) խորհրդատվություն եւ վերապատրաստում ստանան ճառագայթման աղբյուրների եւ դրանց կոնտեյնրների տեսողական հայտնաբերման մասով.

- բ) տեղեկացվեն իոնացնող ճառագայթման եւ դրա ազդեցությունների վերաբերյալ հիմնական փաստերի մասին.
- գ) տեղեկացվեն եւ վերապատրաստվեն այն գործողությունների մասով, որոնք պետք է ձեռնարկվեն ճառագայթման աղբյուրի հայտնաբերման կամ հայտնաբերման կասկածի դեպքում:

Հոդված 17

Վթարային աշխատողների նախնական տեղեկացվածությունը եւ վերապատրաստումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ վթարային աշխատողներին, որոնք ընդգրկվում են վթարին արձագանքման ծրագրում կամ կառավարման համակարգում, տրամադրվեն պատշաճ եւ պարբերաբար թարմացվող տեղեկություններ առողջությանը սպառնացող այն վտանգների մասին, որոնք կարող են ի հայտ գալ իրենց միջամտությամբ, եւ այն նախազգուշական միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկվեն այդպիսի դեպքում: Այդ տեղեկություններով պետք է հաշվի առնել հնարավոր վթարների շարքը եւ միջամտության տեսակը:
2. Վթար առաջանալուն պես 1-ին պարբերության մեջ նշված տեղեկությունները պետք է պատշաճորեն լրացվեն՝ հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ վթարային աշխատողների պաշտպանության համար պատասխանատու կազմակերպությունը 1-ին պարբերության մեջ նշված վթարային աշխատողներին տրամադրի պատշաճ վերապատրաստում՝ ինչպես նախատեսված է 97-րդ հոդվածում սահմանված՝ վթարների կառավարման համակարգում: Անհրաժեշտության դեպքում այդ վերապատրաստումը պետք է ներառի գործնական վարժանքներ:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ, ի հավելումն 3-րդ պարբերության մեջ նշված՝ վթարին արձագանքման մասով վերապատրաստմանը, վթարային աշխատողների պաշտպանության համար պատասխանատու կազմակերպությունն այդ աշխատողներին տրամադրի պատշաճ վերապատրաստում եւ տեղեկություններ ճառագայթումից պատշաճ պաշտպանության մասով:

Հոդված 18

Բժշկական ճառագայթահարման բնագավառի վերաբերյալ կրթությունը, վերապատրաստումը եւ տեղեկությունները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բուժաշխատողները եւ բժշկական ճառագայթային պրոցեդուրաների գործնական ասպեկտներում ներգրավված անհատներն ունենան պատշաճ կրթություն, տեղեկություններ եւ տեսական ու գործնական վերապատրաստում՝ բժշկական ճառագայթային գործելակերպերի նպատակով, ինչպես նաեւ համապատասխան իրավասություն՝ ճառագայթումից պաշտպանության մասով:

Այդ նպատակով անդամ պետություններն ապահովում են, որ սահմանվեն պատշաճ ուսումնական ծրագրեր եւ ճանաչվեն համապատասխան դիպլոմները, հավաստագրերը կամ պաշտոնական որակավորումները:

2. Համապատասխան վերապատրաստման ծրագրի մասնակցող անհատները կարող են մասնակցել բժշկական ճառագայթային պրոցեդուրաների գործնական ասպեկտներին՝ ինչպես սահմանված է 57(2) հոդվածում:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ շարունակական կրթությունը եւ վերապատրաստումը որակավորումը տրամադրվելուց հետո, իսկ նոր տեխնոլոգիաների կլինիկական օգտագործման հատուկ դեպքում՝ վերապատրաստում ապահովվի այդ տեխնիկաների եւ ճառագայթումից պաշտպանության համապատասխան պահանջների մասով:

4. Անդամ պետությունները խրախուսում են, որ բժշկական և ատամնաբուժական դպրոցներում հիմնական ուսումնական ծրագրերում ճառագայթումից պաշտպանության դասընթաց ներդրվի:

ԳԼՈՒԽ V

ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ 1

Գործելակերպերի հիմնավորումը և արգելումը

Հոդված 19

Գործելակերպերի հիմնավորումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ իոնացնող ճառագայթում առաջացնող գործելակերպերի նոր դասերը կամ տեսակները հիմնավորվեն՝ մինչև և ընդունվելը:
2. Անդամ պետությունները հաշվի են առնում իրենց հիմնավորման առնչությամբ գործելակերպերի առկա դասերի կամ տեսակների վերանայումը, երբ էլ որ առկա է նոր և կարելի է արագացրել դրանց արդյունավետության կամ հնարավոր հետեւանքների վերաբերյալ կամ նոր և կարելի է տեղեկություններ այլ տեխնիկաների և տեխնոլոգիաների վերաբերյալ:
3. Մասնագիտական և հանրային ճառագայթահարում ներառող գործելակերպերը հիմնավորվում են որպես գործելակերպի դաս կամ տեսակ՝ հաշվի առնելով ճառագայթահարումների երկու կատեգորիաներն էլ:

4. Բժշկական ճառագայթահարում ներառող գործելակերպերը հիմնավորվում են թե՛ որպես գործելակերպի դաս կամ տեսակ՝ հաշվի առնելով բժշկական եւ, անհրաժեշտության դեպքում, դրա հետ կապված մասնագիտական եւ հանրային ճառագայթահարումները եւ յուրաքանչյուր անհատական բժշկական ճառագայթահարման մակարդակով՝ ինչպես սահմանված է 55-րդ հոդվածում:

Հոդված 20

Սպառողական ապրանքներ ներառող գործելակերպերը

1. Անդամ պետությունները պահանջում են, որ ցանկացած կազմակերպություն, որը մտադիր է արտադրել կամ ներմուծել սպառողական ապրանք, որի համար նպատակային օգտագործումը հավանական է, որ լինի գործելակերպի նոր դաս կամ տեսակ, իրավասու մարմինն տրամադրի համապատասխան բոլոր տեղեկությունները, այդ թվում՝ IV հավելվածի «Ա» բաժնում նշվածները, 19(1) հոդվածում առկա՝ հիմնավորման պահանջի իրականացումը թույլ տալու համար:

2. Այդ տեղեկությունների գնահատման հիման վրա անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը, ինչպես սահմանված է IV հավելվածի «Բ» բաժնում, որոշում կայացնի այն մասին, թե արդյո՞ք սպառողական ապրանքի նպատակային օգտագործումը հիմնավորված է:

3. Չխախտելով 1-ին պարբերությունը՝ անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը, որն այդ պարբերությանը համապատասխան ստացել է տեղեկություններ, տեղեկացնի անդամ պետությունների իրավասու մարմինների համար կապի ապահովման կենտրոնին այդ ստացման մասին եւ, ըստ պահանջի, դրա որոշման եւ այդ որոշման հիմքի մասին:

4. Անդամ պետություններն արգելում են սպառողական ապրանքների վաճառքը եւ դրանք հասանելի դարձնելը հանրությանը, եթե դրանց նպատակային օգտագործումը հիմնավորված չէ, կամ դրանց օգտագործումը չէր բավարարի 26-րդ հոդվածով սահմանված՝ ծանուցումից ազատման չափորոշիչները:

*Հոդված 21***Գործելակերպերի արգելումը**

1. Անդամ պետություններն արգելում են սննդամթերքի, անասնակերի, գեղահարդարման միջոցների արտադրության մեջ ռադիոակտիվ նյութերի միտումնավոր ավելացումը եւ արգելում են այդպիսի ապրանքների ներմուծումը կամ արտահանումը:
2. Չխախտելով 1999/2/ԵՀ հրահանգը՝ գործելակերպերը, որոնք ներառում են նյութի ակտիվացում, որը հանգեցնում է սպառողական ապրանքի մեջ ակտիվության բարձրացմանը, ինչը շուկայահանման պահին չի կարող անտեսվել ճառագայթումից պաշտպանության տեսանկյունից, պետք է համարվի չհիմնավորված: Այնուամենայնիվ, իրավասու մարմինը կարող է գնահատել գործելակերպերի այդ դասի կոնկրետ տեսակներ՝ դրանց հիմնավորման առնչությամբ:
3. Անդամ պետություններն արգելում են խաղալիքների եւ անձնական զարդերի արտադրության մեջ ռադիոակտիվ նյութերի միտումնավոր ավելացումը եւ արգելում են այդպիսի ապրանքների ներմուծումը կամ արտահանումը:
4. Անդամ պետություններն արգելում են խաղալիքների եւ անձնական զարդերի մեջ օգտագործվող նյութերի ակտիվացում ներառող գործելակերպերը, որոնք ապրանքների շուկայահանման կամ դրանց արտադրման պահին հանգեցնում են ակտիվության բարձրացման, ինչը չի կարող անտեսվել ճառագայթումից պաշտպանության տեսանկյունից, եւ արգելում են այդպիսի ապրանքների կամ նյութերի ներմուծումը կամ արտահանումը:

*Հոդված 22***Մարդկանց ոչ բժշկական պատկերման նպատակներով դիտավորյալ
ճառագայթահարում ներառող գործելակերպերը**

1. Անդամ պետություններն ապահովում են ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարման գործելակերպերի սահմանում, մասնավորապես՝ հաշվի առնելով V հավելվածում ներառված գործելակերպերը:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ հատուկ ուշադրություն դարձվի ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարման գործելակերպերի հիմնավորմանը, մասնավորապես՝
 - ա) ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարում ներառող գործելակերպերի բոլոր տեսակները պետք է հիմնավորվեն՝ նախքան դրանց համընդհանուր ընդունումը.
 - բ) գործելակերպի համընդհանուր ընդունված տեսակի յուրաքանչյուր կոնկրետ կիրառում պետք է հիմնավորվի.
 - գ) ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարման բոլոր անհատական պրոցեդուրաները, որոնց դեպքում օգտագործվում են բժշկական ճառագայթային սարքավորումները, պետք է հիմնավորվեն նախապես՝ հաշվի առնելով պրոցեդուրայի կոնկրետ նպատակները եւ ներգրավված անհատի բնութագրերը.
 - դ) ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարում ներառող գործելակերպերի ընդհանուր եւ կոնկրետ հիմնավորումը, ինչպես սահմանված է «ա» եւ «բ» կետերում, կարող է ենթակա լինել վերանայման.
 - ե) առանց յուրաքանչյուր ճառագայթահարման անհատական հիմնավորման ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարումը երաշխավորող հանգամանքները պետք է ենթակա լինեն կանոնավոր վերանայման:

3. Անդամ պետությունները կարող են ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարում ներառող այն հիմնավորված գործելակերպերը, որոնց դեպքում օգտագործվում են բժշկական ճառագայթային սարքավորումներ, ազատել դոզայի սահմանափակումների պահանջից՝ 6(1) հոդվածի «բ» կետին համապատասխան, եւ 12-րդ հոդվածում սահմանված դոզայի սահմաններից:

4. Եթե անդամ պետությունը որոշել է, որ ոչ բժշկական նպատակներով պատկերման ճառագայթահարում ներառող կոնկրետ գործելակերպը հիմնավորված է, ապա այն ապահովում է, որ՝

ա) գործելակերպը ենթակա լինի թույլատրման.

բ) իրավասու մարմնի կողմից, անհրաժեշտության դեպքում, այլ համապատասխան մարմինների եւ բժշկական գիտական ասոցիացիաների հետ համագործակցությամբ սահմանվեն գործելակերպին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ անհատական իրականացման չափորոշիչները.

գ) բժշկական ճառագայթային սարքավորումներ օգտագործող պրոցեդուրաների դեպքում՝

i) կիրառվեն բժշկական ճառագայթահարման համար սահմանված համապատասխան պահանջները՝ ինչպես սահմանված է VII գլխում, այդ թվում՝ սարքավորումներին, օպտիմալացմանը, պատասխանատվություններին, վերապատրաստմանը եւ հղիության ընթացքում հատուկ պաշտպանությանը ներկայացվող պահանջները եւ բժշկական ֆիզիկայի փորձագետի պատշաճ ներգրավվածությունը.

ii) անհրաժեշտության դեպքում կազմվեն հատուկ արձանագրություններ, որոնք համապատասխանում են ճառագայթահարման նպատակին եւ պատկերի պահանջվող որակին.

iii) անհրաժեշտության դեպքում գործեն ախտորոշման հատուկ էտալոնային մակարդակներ.

- դ) բժշկական ճառագայթային սարքավորումներ չօգտագործող պրոցեդուրաների դեպքում դոզայի սահմանափակումները նշանակալիորեն ցածր են հանրության անդամների համար սահմանված դոզայի սահմանից.
- ե) տեղեկությունները տրամադրվեն ճառագայթահարման ենթարկվելիք անձին եւ ստացվի նրա համաձայնությունը՝ թույլատրելով այն դեպքերը, երբ իրավապահ մարմինները կարող են գործել առանց անհատի համաձայնության՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

ԲԱԺԻՆ 2

Կարգավորող հսկողությունը

Հոդված 23

Բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութ

ներառող գործելակերպերի սահմանումը

Անդամ պետություններն ապահովում են բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութ ներառող եւ աշխատողների կամ հանրության անդամների այնպիսի ճառագայթահարմանը հանգեցնող գործելակերպերի դասերի կամ տեսակների սահմանումը, որը չի կարող անտեսվել ճառագայթման տեսանկյունից: Այդպիսի սահմանումը պետք է կատարվի պատշաճ միջոցներով՝ հաշվի առնելով VI հավելվածում թվարկված արդյունաբերական ոլորտները:

Հոդված 24

Կարգավորող հսկողության նկատմամբ աստիճանական մոտեցումը

1. Անդամ պետությունները պահանջում են, որ գործելակերպերը ճառագայթումից պաշտպանության նպատակով ծանուցման, թույլտվության եւ

պատշաճ ստուգումների միջոցով ենթարկվեն գործելակերպից առաջացող ճառագայթահարման մագնիտուդի ու հավանականությանը համարժեք եւ այն ազդեցությանը համարժեք կարգավորող հսկողության, որը կարգավորող հսկողությունը կարող է ունենալ այդպիսի ճառագայթահարումները նվազեցնելու կամ ճառագայթային անվտանգությունը բարելավելու հարցում:

2. Չհակասելով 27-րդ եւ 28-րդ հոդվածներին, անհրաժեշտության դեպքում, եւ VII հավելվածում սահմանված՝ ազատման ընդհանուր չափորոշիչներին համապատասխան՝ կարգավորող հսկողությունը կարող է սահմանափակվել ծանուցմամբ եւ ստուգումների պատշաճ հաճախականությամբ: Այդ նպատակով անդամ պետությունները կարող են սահմանել ընդհանուր ազատումներ կամ իրավասու մարմնին թույլատրեն որոշել ծանուցված գործելակերպերն ազատել թույլտվություն ստանալու պահանջից՝ VII հավելվածում սահմանված ընդհանուր չափորոշիչների հիման վրա. նյութի չափավոր քանակությունների դեպքում, ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից, այդ նպատակով կարող են օգտագործվել VII հավելվածի «Բ» աղյուսակի 2-րդ սյունակում սահմանված տեսակարար ակտիվության արժեքները:

3. Ծանուցված գործելակերպերը, որոնք ազատված չեն թույլտվություն ստանալուց, ենթակա են կարգավորող հսկողության՝ գրանցման կամ լիցենզավորման միջոցով:

Հոդված 25

Ծանուցումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բոլոր հիմնավորված գործելակերպերի, այդ թվում՝ 23-րդ հոդվածին համապատասխան սահմանված գործելակերպերի համար պահանջվի ծանուցում: Ծանուցումը կատարվում է նախքան գործելակերպն սկսելը կամ, արդեն իսկ առկա գործելակերպերի դեպքում, այդ պահանջը կիրառելի դառնալուց հետո՝ հնարավորինս շուտ:

Ծանուցման ենթակա գործելակերպերի համար անդամ պետությունները սահմանում են այն տեղեկությունները, որոնք պետք է տրամադրվեն ծանուցման հետ: Եթե ներկայացվում է թույլտվություն ստանալու դիմում, ապա առանձին ծանուցման անհրաժեշտություն չկա:

Գործելակերպերը կարող են ազատվել ծանուցումից՝ ինչպես սահմանված է 26-րդ հոդվածում:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ ծանուցում պահանջվի 54(3) հոդվածում սահմանված աշխատավայրերի եւ ճառագայթահարման առկա այն իրավիճակների համար, որոնք կառավարվում են որպես ճառագայթահարման պլանավորված իրավիճակ՝ ինչպես սահմանված է 100(3) հոդվածում:

3. Չնայած 26-րդ հոդվածում սահմանված՝ ազատման չափորոշիչներին՝ անդամ պետությունների կողմից սահմանված այն իրավիճակներում, երբ կա մտահոգություն, որ 23-րդ հոդվածին համապատասխան սահմանված գործելակերպը կարող է հանգեցնել այն ջրում բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպների առկայության, որը ազդեցություն է գործում խմելու ջրի պաշարների որակի վրա կամ ազդում է ճառագայթահարման ցանկացած այլ ուղու վրա՝ այնպես, որ ճառագայթահարման տեսանկյունից մտահոգվելու տեղիք տա, իրավասու մարմինը կարող է պահանջել, որ տվյալ գործելակերպը ենթակա լինի ծանուցման:

4. Մարդկային գործունեությունը, որը ներառում է թույլատրված բացթողումների կամ 30-րդ հոդվածին համապատասխան կարգավորող հսկողությունից ազատման հետեւանքով ռադիոակտիվ աղտոտված նյութեր, չպետք է կառավարվի որպես ճառագայթահարման պլանավորված իրավիճակ եւ, հետեւաբար, չի պահանջվում, որ ծանուցում կատարվի դրա մասին:

*Հոդված 26***Ծանուցումից ազատումը**

1. Անդամ պետությունները կարող են որոշել, որ հետեւյալը ներառող հիմնավորված գործելակերպերի մասին ծանուցելու անհրաժեշտություն չկա՝

ա) ռադիոակտիվ նյութեր, եթե տվյալ ակտիվության քանակությունները ընդհանուր առմամբ չեն գերազանցում VII հավելվածի «Բ» աղյուսակի 3-րդ սյունակում սահմանված՝ ազատման արժեքները կամ ավելի բարձր արժեքները, որոնք կոնկրետ կիրառությունների դեպքում հաստատված են իրավասու մարմնի կողմից եւ բավարարում են VII հավելվածում սահմանված՝ ազատման եւ կարգավորող հսկողությունից ազատման ընդհանուր չափորոշիչները. կամ

բ) չխախտելով 25(4) հոդվածը, ռադիոակտիվ նյութերը, եթե տեսակարար ակտիվությունը չի գերազանցում VII հավելվածի «Ա» աղյուսակում սահմանված՝ ազատման արժեքները կամ ավելի բարձր արժեքները, որոնք կոնկրետ կիրառությունների դեպքում հաստատված են իրավասու մարմնի կողմից եւ բավարարում են VII հավելվածում սահմանված ազատման եւ կարգավորող հսկողությունից ազատման ընդհանուր չափորոշիչները. կամ

գ) փակ աղբյուր պարունակող սարք՝ պայմանով, որ՝

i) սարքի տեսակը հաստատված է իրավասու մարմնի կողմից.

ii) բնականոն աշխատանքի պայմաններում դոզայի հզորությունը չի գերազանցում $1 \mu\text{R} \cdot \text{d}^{-1}$ ցանկացած հասանելի մակերեսից 0,1մ հեռավորության վրա. եւ

iii) վերամշակման կամ շահագործումից հանելու պայմանները սահմանվել են իրավասու մարմնի կողմից. կամ

դ) ցանկացած էլեկտրական սարք՝ պայմանով, որ՝

- i) այն էլեկտրաճառագայթային խողովակ է՝ նախատեսված վիզուալ պատկերների ցուցադրման համար, կամ 30 կիլովոլտը (կՎ) չգերազանցող էլեկտրական պոտենցիալի տարբերությամբ աշխատող այլ էլեկտրական սարք, կամ դրա տեսակը հաստատված է իրավասու մարմնի կողմից. եւ
- ii) բնականոն աշխատանքի պայմաններում դոզայի հզորությունը չի գերազանցում 1 μ Չվ. Ժ-1 ցանկացած հասանելի մակերեսից 0,1մ հեռավորության վրա:

2. Անդամ պետությունները կարող են գործելակերպերի հատուկ տեսակներն ազատել VII հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ ազատման ընդհանուր չափորոշիչներին համապատասխանեցման ենթակա ծանուցման պահանջից՝ այնպիսի գնահատման հիման վրա, որը ցույց է տալիս, որ ազատումը լավագույն տարբերակն է:

Հոդված 27

Գրանցումը կամ լիցենզավորումը

1. Անդամ պետությունները պահանջում են հետեւյալ գործելակերպերի կա՛մ գրանցումը, կա՛մ լիցենզավորումը՝
 - ա) ճառագայթման գեներատորների կամ արագացուցիչների կամ ռադիոակտիվ աղբյուրների աշխատանքը՝ բժշկական ճառագայթահարման կամ ոչ բժշկական պատկերման նպատակներով.
 - բ) ճառագայթման գեներատորների կամ արագացուցիչների աշխատանքը՝ բացառությամբ էլեկտրոնային մանրադիտակների կամ ռադիոակտիվ աղբյուրների՝ «ա» կետով չկարգավորվող նպատակներով:
2. Անդամ պետությունները կարող են պահանջել այլ տեսակի գործելակերպերի գրանցումը կամ լիցենզավորումը:

3. Գործելակերպերի տեսակները գրանցման կամ լիցենզավորման ներկայացնելու մասին նորմատիվ որոշումը կարող է հիմնված լինել կարգավորման փորձի վրա՝ հաշվի առնելով ակնկալվող կամ հնարավոր դրզանների մագնիտուդը, ինչպես նաև գործունեության բարդությունը:

Հոդված 28

Լիցենզավորումը

Անդամ պետությունները պահանջում են հետևյալ գործելակերպերի լիցենզավորումը՝

- ա) բժշկական կամ անասնաբուժական ախտորոշման, բուժման կամ հետազոտության նպատակով՝ ռադիոակտիվ նյութերի ներարկում մարդկանց, իսկ այնքանով, որքանով հարցն առնչվում է մարդկանց ճառագայթային պաշտպանությանը, ռադիոակտիվ նյութերի ներարկում կենդանիներին.
- բ) միջուկային տեղակայանքի շահագործում ու շահագործման դադարեցում եւ ուրանի հանքերի շահագործում ու փակում.
- գ) ռադիոակտիվ նյութերի դիտավորյալ ավելացումը սպառողական ապրանքների կամ այլ ապրանքների, այդ թվում՝ դեղերի արտադրության եւ մշակման մեջ, եւ այդպիսի ապրանքների ներմուծումը.
- դ) բարձր ակտիվությամբ փակ աղբյուր ներառող ցանկացած գործելակերպ.
- ե) ռադիոակտիվ թափոնների երկարաժամկետ պահեստավորման կամ հեռացման որեւէ տեղակայանքի, այդ թվում՝ այդ նպատակով ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների շահագործումը, շահագործումը դադարեցնելը եւ փակելը.
- զ) շրջակա միջավայր օդածին կամ հեղուկ ռադիոակտիվ թափոնների հետ ռադիոակտիվ նյութերի զգալի քանակներ արտանետող գործելակերպերը:

*Հոդված 29***Թույլտվության տրամադրման ընթացակարգը**

1. Թույլտվության տրամադրման նպատակներով՝ անդամ պետությունները պահանջում են ճառագայթումից պաշտպանության համար կարելի է այնպիսի տեղեկությունների տրամադրում, որոնք համարժեք են գործելակերպի բնույթին եւ ճառագայթման առկա ռիսկերին:
2. Լիցենզավորման դեպքում եւ որոշելիս, թե ինչ տեղեկություններ պետք է տրամադրվեն 1-ին պարբերության համաձայն, անդամ պետությունները հաշվի են առնում IX հավելվածի օրինակելի ցանկը:
3. Լիցենզիան ներառում է, անհրաժեշտության դեպքում, հատուկ պայմաններ եւ հղում ազգային օրենսդրության մեջ առկա դրույթներին, որպեսզի ապահովվի, որ լիցենզիայի տարրերն օրինականորեն կիրառելի լինեն, եւ պատշաճ սահմանափակումներ կիրառվեն գործառնության գործառնական սահմանների եւ պայմանների նկատմամբ: Ազգային օրենսդրությամբ կամ հատուկ պայմաններով նաեւ պահանջվում է, անհրաժեշտության դեպքում, օպտիմալացման սկզբունքի պաշտոնական եւ փաստաթղթավորված իրականացում:
4. Անհրաժեշտության դեպքում, ազգային օրենսդրությունը կամ լիցենզիան ներառում է ռադիոակտիվ արտանետումների արտազատման պայմաններ՝ VIII գլխում շրջակա միջավայր ռադիոակտիվ արտանետումների արտազատման թույլտվության համար սահմանված պահանջներին համապատասխան:

*Հոդված 30***Կարգավորող հսկողությունից ազատումը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ռադիոակտիվ նյութերի հեռացումը, վերամշակումը կամ օգտահանումը, որն առաջանում է որեւէ թույլատրված գործելակերպից, ենթակա լինի թույլտվության:

2. Հեռացման, վերամշակման կամ օգտահանման նյութերը կարող են ազատվել կարգավորող հսկողությունից՝ պայմանով, որ տեսակարար ակտիվությունը՝

ա) պինդ նյութի դեպքում չի գերազանցում VII հավելվածի «Ա» աղյուսակում սահմանված՝ կարգավորող հսկողությունից ազատման մակարդակները. կամ

բ) բավարարում են կարգավորող հսկողությունից ազատման կոնկրետ մակարդակները եւ հարակից պահանջները, որոնք ներկայացվում են կոնկրետ նյութերին կամ գործելակերպերի կոնկրետ տեսակներից առաջացող նյութերին. կարգավորող հսկողությունից ազատման այդ կոնկրետ մակարդակները սահմանվում են ազգային օրենսդրության մեջ կամ իրավասու ազգային մարմնի կողմից՝ VII հավելվածում սահմանված՝ ընդհանուր ազատման եւ կարգավորող հսկողությունից ազատման չափորոշիչներին համապատասխան եւ հաշվի առնելով Համայնքի կողմից տրամադրվող տեխնիկական ուղղորդումը:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպներ պարունակող նյութերի՝ կարգավորող հսկողությունից ազատման դեպքում, եթե դրանք առաջանում են թույլատրված գործելակերպերի արդյունքում, որոնցում բնական ռադիոակտիվ իզոտոպները մշակվում են իրենց ռադիոակտիվ, տրոհվող կամ պարարտացնող նպատակներով, կարգավորող հսկողությունից ազատման մակարդակները համապատասխանեն արհեստական ռադիոակտիվ իզոտոպներ պարունակող նյութերի կարգավորող հսկողությունից ազատման դրգայի չափորոշիչներին:

4. Անդամ պետությունները թույլ չեն տալիս ռադիոակտիվ նյութերի դիտավորյալ նոսրացումը կարգավորող հսկողությունից դրանք ազատելու նպատակով: Նյութերը խառնելը, որը տեղի է ունենում բնականոն գործունեության ժամանակ, երբ ռադիոակտիվությունը հաշվի չի առնվում, ենթակա չէ այս

արգելմանը: Իրավասու մարմինը կարող է կոնկրետ հանգամանքներում թույլատրել ռադիոակտիվ եւ ոչ ռադիոակտիվ նյութերը խառնելն օգտահանման կամ վերամշակման նպատակներով:

ԳԼՈՒԽ VI

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Հոդված 31

Պարտականությունները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ կազմակերպությունը պատասխանատվություն կրի ճառագայթահարման ենթարկվող աշխատողների ճառագայթումից պաշտպանությանն ուղղված միջոցառումների գնահատման ու իրականացման համար:

2. Բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում կազմակերպության եւ բացօթյա տարածքներում աշխատողների գործատուի պատասխանատվությունները սահմանված են 51-րդ հոդվածում:

3. Չխախտելով 1-ին եւ 2-րդ պարբերությունները՝ անդամ պետությունները կազմակերպում են ճառագայթահարման ցանկացած իրավիճակում աշխատողների պաշտպանության համար պատասխանատվությունների հստակ բաշխումը կազմակերպության, գործատուի կամ որեւէ այլ կազմակերպության միջեւ, մասնավորապես՝ հետեւյալ անձանց պաշտպանության համար՝

ա) վթարային աշխատողներ.

բ) աղտոտված հողի, շենքերի եւ այլ կառույցների վերականգնման աշխատանքներում ներգրավված աշխատողներ.

գ) աշխատավայրում ռադոնից ճառագայթահարման ենթարկվող աշխատողները՝ 54(3) հոդվածում սահմանված իրավիճակներում:

Դա կիրառվում է նաեւ ինքնազբաղ անհատների եւ կամավոր հիմունքներով աշխատող անհատների պաշտպանության նկատմամբ:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ գործատուներին մատչելի լինեն մեկ այլ գործատուի կամ կազմակերպության պատասխանատվության տակ գտնվող իրենց աշխատողների հնարավոր ճառագայթահարման վերաբերյալ տեղեկությունները:

Հոդված 32

Ճառագայթահարման ենթարկված աշխատողների պաշտպանությունն աշխատանքների ժամանակ

Անդամ պետություններն ապահովում են, որ ճառագայթահարման ենթարկված աշխատողների պաշտպանությունն աշխատանքների ժամանակ, սույն հրահանգի համապատասխան դրույթների համաձայն, հիմնված լինի հետեւյալի վրա՝

ա) ճառագայթահարման ենթարկվող անձնակազմի ճառագայթային վտանգի բնույթը եւ մագնիտուդը որոշելու համար նախնական գնահատում.

բ) ճառագայթումից պաշտպանության օպտիմալացում աշխատանքային բոլոր պայմաններում, այդ թվում՝ մասնագիտական ճառագայթահարումներ բժշկական ճառագայթահարում ներառող գործելակերպի հետեւանքով.

գ) ճառագայթահարման ենթարկվող աշխատակազմի դասակարգումն ըստ տարբեր կատեգորիաների.

- դ) տարբեր տարածքների եւ աշխատանքային պայմանների առնչությամբ հսկիչ միջոցներ եւ դիտանցում, անհրաժեշտության դեպքում նաեւ՝ առանձին դիտանցում.
- ե) բժշկական հսկողություն.
- զ) կրթություն եւ վերապատրաստում:

Հոդված 33

Փորձնակների եւ ուսանողների պաշտպանությունն աշխատանքների ժամանակ

1. Անդամ պետություններն ապահովում են, որ 11(1) հոդվածում նշված 18 կամ ավելի բարձր տարիքի փորձնակները եւ ուսանողները, անհրաժեշտության դեպքում, ապահովվեն ճառագայթահարման նույն պայմաններով եւ աշխատանքային միջավայրում համարժեք պաշտպանությամբ, ինչ «Ա» կամ «Բ» կատեգորիայի՝ ճառագայթահարման ենթարկվող աշխատողները:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ 11(2) հոդվածում նշված 16-18 տարեկան փորձնակները եւ ուսանողներն ապահովվեն ճառագայթահարման համանման պայմաններով եւ աշխատանքային միջավայրում համարժեք պաշտպանությամբ, ինչ «Բ» կատեգորիայի՝ ճառագայթահարման ենթարկվող աշխատողները:

Հոդված 34

խորհրդակցությունները ճառագայթումից պաշտպանության փորձագետի հետ

Անդամ պետությունները կազմակերպություններից պահանջում են խորհուրդ հարցնել ճառագայթումից պաշտպանության փորձագետից իրենց

իրավասություններում գտնվող ոլորտների վերաբերյալ՝ ինչպես ընդգծված է 82-րդ հոդվածում՝ ստորեւ ներկայացված այն հարցերի հետ կապված, որոնք կարելի է գործելակերպի համար՝

- ա) պաշտպանիչ սարքերի եւ չափման գործիքների ուսումնասիրություն եւ փորձարկում.
- բ) կայանքներին առնչվող ծրագրերի նախնական կրիտիկական վերանայում ճառագայթային պաշտպանության տեսանկյունից.
- գ) ճառագայթման նոր կամ փոփոխված աղբյուրների՝ շահագործման ընդունումը ճառագայթային պաշտպանության տեսանկյունից.
- դ) պաշտպանիչ սարքերի եւ մեթոդների արդյունավետության պարբերական ստուգում.
- ե) չափող գործիքների պարբերական ստուգաճշտում եւ դրանց պիտանելիության ու ճիշտ օգտագործման պարբերական ստուգում:

Հոդված 35

Աշխատավայրերում իրականացվող միջոցառումները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ճառագայթումից պաշտպանության նպատակով իրականացվեն միջոցառումներ բոլոր աշխատավայրերում, որտեղ աշխատողները կարող են ստանալ տարեկան 1 մՋվ-ից բարձր արդյունարար դոզա կամ աչքի ոսպնյակների համար տարեկան 15 մՋվ-ին համարժեք դոզա կամ մաշկի եւ վերջույթների համար տարեկան 50 մՋվ-ին համարժեք դոզա:

Այդպիսի միջոցառումները պետք է համապատասխանեն կայանքների ու աղբյուրների բնույթին եւ ռիսկերի մագնիտուդին ու բնույթին:

2. 54(3) հոդվածում սահմանված աշխատավայրերի համար եւ այն դեպքում, երբ աշխատողների ճառագայթահարումը կարող է գերազանցել տարեկան 6 մՋվ արդյունարար դոզան կամ անդամ պետությունների կողմից որոշված՝ ռադոնից ճառագայթահարման՝ ժամանակի մեջ ինտեգրված համապատասխան արժեքը, դրանք պետք է կառավարվեն որպես ճառագայթահարման պլանավորված իրավիճակ, եւ անդամ պետությունները որոշում են, թե սույն գլխում սահմանված ո՞ր պահանջներն են համապատասխան: 54(3) հոդվածում սահմանված աշխատավայրերի համար եւ այն դեպքում, երբ աշխատողների ճառագայթահարումը պակաս է տարեկան 6 մՋվ արդյունարար դոզայից կամ հավասար է դրան կամ ճառագայթահարումը ռադոնից ճառագայթահարման՝ ժամանակի մեջ ինտեգրված համապատասխան արժեքից փոքր է, իրավասու մարմինը պահանջում է, որ ճառագայթահարումները պարբերաբար վերանայվեն:

3. Օդանավ շահագործող կազմակերպության համար, որտեղ տիեզերական ճառագայթումից անձնակազմի արդյունարար դոզան կարող է գերազանցել տարեկան 6 մՋվ-ն, կիրառվում են սույն գլխում սահմանված համապատասխան պահանջները՝ հնարավոր դարձնելով ճառագայթահարման այս իրավիճակի առանձնահատկությունները: Անդամ պետություններն ապահովում են, որ այն դեպքում, երբ անձնակազմի արդյունարար դոզան կարող է լինել տարեկան 1 մՋվ-ից ավելի, իրավասու մարմինը կազմակերպությունից պահանջի ձեռնարկել պատշաճ միջոցներ, մասնավորապես՝

- ա) համապատասխան անձնակազմի ճառագայթահարումը գնահատելու համար.
- բ) աշխատանքային ժամանակացույցը կազմելիս գնահատված ճառագայթումը հաշվի առնելու համար՝ ճառագայթահարման բարձր դոզաների ենթարկված անձնակազմի դոզաները նվազեցնելու նպատակով.

- գ) իրենց աշխատանքի հետեւանքով առողջությանը սպառնացող վտանգների եւ իրենց անհատական դոզաների մասին համապատասխան աշխատողներին տեղեկացնելու համար.
- դ) 10(1) հոդվածը օդանավի հղի անձնակազմի նկատմամբ կիրառելու համար:

Հոդված 36

Աշխատավայրերի դասակարգումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ աշխատավայրերում իրականացվող միջոցառումները ներառեն դասակարգում ըստ տարբեր գոտիների, անհրաժեշտության դեպքում, ակնկալվող տարեկան դոզաների գնահատման եւ հնարավոր ճառագայթահարումների հավանականության ու մագնիտուդի հիման վրա:
2. Հսկման եւ դիտարկման գոտիները պետք է տարբերակվեն: Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը սահմանի կոնկրետ հանգամանքների առնչությամբ ուղղորդում հսկման եւ դիտարկման գոտիների դասակարգման վերաբերյալ:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ կազմակերպությունը պարբերաբար վերանայի հսկման եւ դիտարկման գոտիներում աշխատանքային պայմանները:

Հոդված 37

Հսկման գոտիները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հսկվող գոտիներին ներկայացվող նվազագույն պահանջները լինեն հետեւյալը՝
 - ա) հսկման գոտիները սահմանազօվում են, այդ տարածքներ կարող են մուտք գործել միայն համապատասխան ցուցումներ ստացած անձինք, իսկ մուտքը

հսկվում է կազմակերպության կողմից ներկայացվող գրավոր ընթացակարգերին համապատասխան: Եթե առկա է ռադիոակտիվ աղտոտման տարածման վտանգ, ապա պետք է իրականացվեն կոնկրետ միջոցառումներ, այդ թվում՝ անհատների եւ ապրանքների մուտքի եւ ելքի համար ու հսկվող գոտում աղտոտվածության դիտանցման համար եւ, անհրաժեշտության դեպքում, հարակից գոտում.

- բ) հաշվի առնելով հսկման գոտում ճառագայթային վտանգների բնույթն ու չափը՝ կազմակերպվում է աշխատավայրի ճառագայթային վերահսկողություն՝ 39-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.
- գ) ցուցադրվում են գոտու տեսակը, աղբյուրների բնույթը եւ դրանց ներհատուկ վտանգները նշող նշաններ.
- դ) սահմանվում են աշխատանքային ցուցումներ, որոնք համապատասխանում են աղբյուրներին եւ ներգրավված գործառնություններին առնչվող ճառագայթային վտանգին.
- ե) աշխատողն ստանում է հատուկ վերապատրաստում՝ կապված աշխատավայրի եւ գործունեության բնութագրերի հետ.
- զ) աշխատողին տրամադրվում են անհատական պաշտպանության պատշաճ միջոցներ:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ կազմակերպությունը պատասխանատվություն կրի այդ պարտականությունների իրականացման համար՝ հաշվի առնելով ճառագայթումից պաշտպանության փորձագետից ստացած խորհուրդը:

Հոդված 38

Դիտարկման գոտիները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ դիտարկման գոտիներին ներկայացվող պահանջները լինեն հետեւյալը՝

- ա) հաշվի առնելով դիտարկման գոտում ճառագայթային վտանգների բնույթն ու չափը՝ կազմակերպվում է աշխատավայրի ճառագայթային վերահսկողություն՝ 39-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.
- բ) անհրաժեշտության դեպքում, ցուցադրվում են գոտու տեսակը, աղբյուրների բնույթը եւ դրանց ներհատուկ վտանգները նշող նշաններ.
- գ) անհրաժեշտության դեպքում, սահմանվում են աշխատանքային ցուցումներ, որոնք համապատասխանում են աղբյուրներին եւ ներգրավված գործառնություններին առնչվող ճառագայթային վտանգին:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ կազմակերպությունը պատասխանատվություն կրի այդ պարտականությունների իրականացման համար՝ հաշվի առնելով ճառագայթումից պաշտպանության փորձագետից ստացած խորհուրդը:

Հոդված 39

Աշխատավայրի ճառագայթային վերահսկողությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ 37(1) հոդվածի «բ» կետում եւ 38(1) հոդվածի «ա» կետում նշված՝ աշխատավայրի ճառագայթային վերահսկողությունը, անհրաժեշտության դեպքում, ներառի՝
- ա) արտաքին ճառագայթահարման դոզայի հզորության չափում՝ նշելով տվյալ ճառագայթման բնույթը եւ որակը.
- բ) աղտոտող ռադիոակտիվ իզոտոպների՝ օդում տեսակարար ակտիվության եւ մակերեսության խտության չափում՝ նշելով դրանց բնույթը եւ ֆիզիկական ու քիմիական վիճակը:
2. Այդ չափումների արդյունքները գրառվում եւ, անհրաժեշտության դեպքում, օգտագործվում են առանձին դոզաներ հաշվարկելու համար՝ ինչպես նախատեսված է 41-րդ հոդվածով:

Հոդված 40

Ճառագայթահարման ենթարկվող անձնակազմի դասակարգումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ դիտանցման ու վերահսկողության նպատակով տարբերակվի ճառագայթահարման ենթարկվող անձնակազմի երկու կատեգորիա՝

ա) «Ա» կատեգորիա՝ ճառագայթահարման ենթարկվող այն աշխատողները, որոնք կարող են ստանալ տարեկան 6 մՋվ-ից բարձր արդյունարար դոզա կամ աչքի ոսպնյակների համար տարեկան 15 մՋվ-ից բարձր դոզա կամ մաշկի եւ վերջույթների համար տարեկան 150 մՋվ-ից բարձր դոզա.

բ) «Բ» կատեգորիա՝ ճառագայթահարման ենթարկվող այն աշխատողները, որոնք չեն դասվում աշխատողների «Ա» կատեգորիային:

2. Անդամ պետությունները պահանջում են, որ կազմակերպությունը կամ, բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում, գործատուն որոշում կայացնի առանձին աշխատողների դասակարգման վերաբերյալ՝ նախքան նրանք սկսեն այնպիսի աշխատանք, որը կարող է առաջացնել ճառագայթահարում, եւ կանոնավոր վերանայեն այդ դասակարգումը՝ աշխատանքային պայմանների եւ բժշկական հսկողության հիման վրա: Տարբերակմամբ պետք է հաշվի առնել նաեւ հնարավոր ճառագայթահարումները:

Հոդված 41

Անհատական դիտանցումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ «Ա» կատեգորիայի աշխատողները կանոնավոր դիտանցման ենթարկվեն՝ դոզիմետրային հսկողության ծառայության կողմից կատարվող անհատական չափումների հիման վրա: Եթե «Ա» կատեգորիայի աշխատողները կարող են ստանալ զգալի ներքին

ճառագայթահարում կամ աչքի ոսպնյակի կամ վերջույթների զգալի ճառագայթահարում, ապա պետք է ստեղծվի դիտանցման պատշաճ համակարգ:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ «Բ» կատեգորիայի աշխատողների դիտանցումն առնվազն բավարար լինի՝ ցույց տալու համար, որ այդպիսի աշխատողները ճիշտ են դասակարգված «Բ» կատեգորիայում: Անդամ պետությունները կարող են պահանջել «Բ» կատեգորիայի աշխատողների անհատական դիտանցում եւ, անհրաժեշտության դեպքում, անհատական չափումներ, որոնք կատարվում են դոզիմետրային հսկողության ծառայության կողմից:

3. Եթե անհնար կամ անհարմար է կատարել անհատական չափումներ, ապա անհատական դիտանցումը պետք է հիմնված լինի ճառագայթահարման ենթարկվող այլ աշխատողների վրա կատարված անհատական չափումների կամ 39-րդ հոդվածով նախատեսված աշխատավայրի վերահսկողության արդյունքների կամ իրավասու մարմնի կողմից հաստատված հաշվարկման մեթոդների հիման վրա ստացված հաշվարկի վրա:

Հոդված 42

Դոզայի գնահատումը պատահարային

ճառագայթահարման դեպքում

Անդամ պետություններն ապահովում են, որ պատահարային ճառագայթահարման դեպքում կազմակերպությունից պահանջվի գնահատել համապատասխան դոզաները եւ դրանց բաշխումը մարմնում:

*Հոդված 43***Արդյունքների արձանագրումը եւ զեկուցումը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ «Ա» կատեգորիայի եւ «Բ» կատեգորիայի յուրաքանչյուր աշխատողի համար կազմվի անհատական դիտանցման արդյունքներ պարունակող արձանագրություն, եթե այդպիսի դիտանցումը պահանջվում է անդամ պետության կողմից:

2. 1-ին պարբերության նպատակներով՝ պետք է պահպանվեն ճառագայթահարման ենթարկվող աշխատողների վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները՝

ա) կախված դեպքից՝ անհատական դոզաների չափված կամ հաշվարկված ճառագայթահարումների վերաբերյալ արձանագրություն՝ համաձայն 41-րդ, 42-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածների եւ, եթե անդամ պետությունն այդպես է որոշում, համաձայն 35(2) հոդվածի եւ 54(3) հոդվածի.

բ) 42-րդ, 52-րդ եւ 53-րդ հոդվածներում նշված ճառագայթահարումների դեպքում՝ հանգամանքների եւ ձեռնարկված գործողության մասին հաշվետվություններ.

գ) անհրաժեշտության դեպքում՝ անհատական դոզաները գնահատելու համար օգտագործված՝ աշխատավայրի դիտանցման արդյունքները:

3. 1-ին պարբերության մեջ նշված տեղեկությունները պահպանվում են նրանց՝ իոնացնող ճառագայթահարման ենթարկվելու աշխատանքային կյանքի ընթացքում եւ դրանից հետո՝ մինչեւ անձի 75 տարին լրանալը, սակայն, ամեն դեպքում, ճառագայթահարում ենթադրող աշխատանքը դադարեցնելուց հետո ոչ պակաս, քան 30 տարվա ընթացքում:

4. Ինչպես նշված է 42-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներում եւ, եթե անդամ պետությունն այդպես է որոշում համաձայն 35(2) հոդվածի եւ 54(3) հոդվածի,

ճառագայթահարումները պետք է 1-ին պարբերության մեջ նշված՝ դոզաների վերաբերյալ արձանագրության մեջ գրառվեն առանձին:

5. 1-ին պարբերության մեջ նշված՝ դոզաների վերաբերյալ արձանագրությունը պետք է ներկայացվի անդամ պետության կողմից X հավելվածին համապատասխան ստեղծված անհատական ճառագայթային դիտանցման տվյալների համակարգ:

Հոդված 44

Մատչելիությունն անհատական դիտանցման արդյունքներին

1. Անդամ պետությունները պահանջում են, որ 41-րդ, 42-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներում սահմանված եւ, եթե անդամ պետությունն այդպես է որոշում համաձայն 35(2) հոդվածի եւ 54(3) հոդվածի, անհատական դիտանցման արդյունքները՝

ա) հասանելի դարձվեն իրավասու մարմնին, կազմակերպությանը եւ բացօթյա տարածքներում աշխատողների գործատուին.

բ) հասանելի լինեն տվյալ աշխատողի համար՝ 2-րդ պարբերությանը համապատասխան.

գ) ներկայացվեն մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայություն՝ մարդու առողջության համար արդյունքների ենթադրությունները մեկնաբանելու նպատակով՝ ինչպես նախատեսված է 45(2) հոդվածով.

դ) ներկայացվեն անդամ պետության կողմից X հավելվածի դրույթներին համապատասխան ստեղծված անհատական ճառագայթային դիտանցման տվյալների համակարգ:

2. Անդամ պետությունները պահանջում են, որ կազմակերպությունը, իսկ բացօթյա տարածքներում աշխատողի դեպքում՝ գործատուն աշխատողներին նրանց պահանջով տրամադրի մատչելիություն իրենց անհատական դիտանցման արդյունքներին, այդ թվում՝ այն չափումների արդյունքներին, որոնք կարող են օգտագործված լինել այդ արդյունքները հաշվելիս, կամ իրենց դոզաների գնահատման արդյունքներին, որը կատարվել է աշխատավայրի վերահսկողության արդյունքում:

3. Անդամ պետությունները սահմանում են այն պայմանները, որոնց համաձայն փոխանցվում են անհատական դիտանցման արդյունքները:

4. Անհատական ճառագայթային դիտանցման տվյալների համակարգը պետք է ընդգրկի առնվազն X հավելվածի «Ա» բաժնում թվարկված տվյալները:

5. Պատահարային ճառագայթահարման դեպքում անդամ պետությունները կազմակերպությունից պահանջում են անհատական դիտանցման եւ դոզայի գնահատումների արդյունքների մասին անհապաղ հաղորդել անհատին եւ իրավասու մարմնին:

6. Անդամ պետություններն ապահովում են, որ գործեն կարգադրություններ կազմակերպության, իսկ բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում՝ նրանց գործատուի, իրավասու մարմնի, մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայության, ճառագայթումից պաշտպանության փորձագետների կամ դոզիմետրային հսկողության ծառայությունների միջեւ աշխատողի կողմից նախկինում ստացված դոզաների վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունների պատշաճ փոխանակման համար՝ նախքան աշխատանքի վերցնելը կամ 45-րդ հոդվածի համաձայն որպես «Ա» կատեգորիայի աշխատող դասակարգելը՝ բժշկական գննություն կատարելու եւ աշխատողների հետագա ճառագայթահարումը հսկելու նպատակով:

*Հոդված 45***Ճառագայթահարման ենթարկված
աշխատողների բժշկական հսկողությունը**

1. Անդամ պետությունները պահանջում են, որ ճառագայթահարման ենթարկվող աշխատողների բժշկական հսկողությունը հիմնվի մասնագիտական բժշկությունն ընդհանրապես կարգավորող սկզբունքների վրա:

2. «Ա» կատեգորիայի աշխատողների բժշկական հսկողությունը պետք է իրականացվի մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայության կողմից: Այդ բժշկական հսկողությունը պետք է հնարավորություն տա համոզվելու, որ հսկողության տակ գտնվող աշխատողների առողջական վիճակը համապատասխանում է նրանց հանձնարարված գործառույթներին: Այդ նպատակով մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայությանը պետք է մատչելի լինի ցանկացած համապատասխան տեղեկություն, որն այն կպահանջի, այդ թվում՝ աշխատանքային տարածքներում շրջակա միջավայրի պայմանների վերաբերյալ:

3. Բժշկական հսկողությունն ընդգրկում է՝

ա) բժշկական զննություն նախքան աշխատանքի վերցնելը կամ որպես «Ա» կատեգորիայի աշխատող դասակարգելը՝ «Ա» կատեգորիայի աշխատողի այն պաշտոնում աշխատողի պիտանիությունը որոշելու համար, որի համար աշխատողը դիտարկվում է.

բ) առողջության պարբերական ստուգում՝ առնվազն տարին մեկ անգամ՝ որոշելու համար, թե արդյոք «Ա» կատեգորիայի աշխատողները դեռևս պիտանի են իրենց պարտականությունները կատարելու համար: Այդ ստուգումների բնույթը, որոնք կարող են կատարվել այնքան, որքան մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայությունն անհրաժեշտ է համարում, պետք է կախված լինի աշխատանքի տեսակից եւ առանձին աշխատողի առողջական վիճակից:

4. Մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայությունը կարող է նշել աշխատանքը դադարեցնելուց հետո բժշկական հսկողությունը շարունակելու անհրաժեշտությունն այնքան ժամանակ, որքան այն անհրաժեշտ է համարում տվյալ անձի առողջությունը պաշտպանելու համար:

Հոդված 46

Բժշկական դասակարգումը

Անդամ պետություններն ապահովում են, որ որպես «Ա» կատեգորիայի աշխատող աշխատանքի համար պիտանիության առնչությամբ սահմանվի հետևյալ բժշկական դասակարգումը՝

- ա) պիտանի.
- բ) պիտանի՝ որոշակի պայմաններով.
- գ) ոչ պիտանի:

Հոդված 47

Ոչ պիտանի աշխատողներին աշխատանքի վերցնելու կամ դասակարգելու արգելքը

Անդամ պետություններն ապահովում են, որ հնարավոր չլինի որեւէ ժամանակահատվածով որեւէ աշխատողի աշխատանքի վերցնել կամ դասակարգել կոնկրետ պաշտոնում որպես «Ա» կատեգորիայի աշխատող, եթե բժշկական հսկողությամբ պարզվում է, որ աշխատողը պիտանի չէ այդ կոնկրետ պաշտոնի համար:

*Հոդված 48***Բժշկական քարտերը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ «Ա» կատեգորիայի յուրաքանչյուր աշխատողի համար բացվի բժշկական քարտ եւ այն թարմացվի՝ այնքան ժամանակ, որքան աշխատողը մնում է այդ կատեգորիայի աշխատող: Դրանից հետո այն պետք է պահպանվի մինչեւ անձի 75 տարին լրանալը, սակայն, ամեն դեպքում, իոնացնող ճառագայթահարում ենթադրող աշխատանքը դադարեցնելուց հետո ոչ պակաս, քան 30 տարվա ընթացքում:
2. Բժշկական քարտը պետք է պարունակի տեղեկություններ աշխատանքի բնույթի՝ նախքան որպես «Ա» կատեգորիայի աշխատող աշխատանքի անցնելը կամ դասակարգվելն անցած բժշկական զննությունների արդյունքների, առողջության պարբերական ստուգումների եւ 43-րդ հոդվածով պահանջվող դրզաների մասին արձանագրության վերաբերյալ:

*Հոդված 49***Հատուկ բժշկական հսկողությունը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ, ի հավելումն 45-րդ հոդվածով նախատեսված՝ ճառագայթահարման ենթարկվող աշխատողների առողջության հսկողությանը, նախատեսվի դրույթ մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայության կողմից ճառագայթահարման ենթարկվող անհատների առողջության պաշտպանության համար անհրաժեշտ համարվող հետագա որեւէ գործողության մասին, ինչպիսիք են բժշկական զննությունը, աղտոտվածության մաքրմանն ուղղված միջոցառումները, անհետաձգելի վերականգնողական բուժումը կամ մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայության կողմից սահմանված այլ գործողություններ:

2. Հատուկ բժշկական հսկողությունը պետք է կատարվի յուրաքանչյուր դեպքում, երբ գերազանցվում են 9-րդ հոդվածում սահմանված դոզայի սահմաններից որեւէ մեկը:

3. Հաջորդող ճառագայթահարման պայմանները պետք է կարգավորվեն մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայության համաձայնությամբ:

Հոդված 50

Բողոքները

Անդամ պետությունները սահմանում են 46-րդ, 47-րդ եւ 49-րդ հոդվածների համաձայն ստացված արդյունքների եւ կայացված որոշումների դեմ բողոքարկման ընթացակարգը:

Հոդված 51

Բացօթյա տարածքներում աշխատողների պաշտպանությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ անհատական ճառագայթային ռիտանցման համակարգով բացօթյա տարածքներում աշխատողներին տրամադրվի կազմակերպության կողմից մշտական հիմունքներով աշխատանքի վերցված՝ ճառագայթահարման ենթարկվող աշխատողներին տրամադրվող պաշտպանությանը համարժեք պաշտպանություն:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ կազմակերպությունն ուղղակի կամ բացօթյա տարածքներում աշխատողների գործատուի հետ պայմանագրային համաձայնությունների միջոցով պատասխանատվություն կրի բացօթյա տարածքներում աշխատողների՝ ճառագայթումից պաշտպանության գործառնական ասպեկտների համար, որոնք ուղղակիորեն կապված են կազմակերպությունում նրանց գործունեության բնույթի հետ:

3. Մասնավորապես, անդամ պետություններն ապահովում են, որ, որպես նվազագույն պահանջ, կազմակերպությունը պետք է՝

- ա) հսկվող գոտիներ մուտք գործող «Ա» կատեգորիայի աշխատողների դեպքում ստուգի, որ բացօթյա տարածքներում տվյալ աշխատողը զննությունն անցել է՝ համարվելով բժշկական տեսանկյունից պիտանի այն գործունեության համար, որը նրան հանձնարարվելու է.
- բ) ստուգի, թե արդյոք բացօթյա տարածքներում աշխատողի դասակարգումը համապատասխան է այն դոզաների մասով, որոնք նա կարող է ստանալ կազմակերպությունում.
- գ) հսկվող գոտիներ մուտք գործելու համար ապահովի, որ, ի հավելումն ճառագայթումից պաշտպանության առնչությամբ հիմնական վերապատրաստմանը, բացօթյա տարածքներում աշխատողը ստացած լինի կոնկրետ հրահանգներ եւ վերապատրաստում՝ կապված աշխատավայրի բնութագրերի եւ իրականացվող գործունեության հետ՝ 15(1) հոդվածի «գ» եւ «դ» կետերին համապատասխան.
- դ) դիտարկվող գոտի մուտք գործելու համար ապահովի, որ բացօթյա տարածքներում աշխատողն ստացած լինի աղբյուրների հետ կապված ճառագայթման ռիսկերին եւ տվյալ աշխատանքին համապատասխան աշխատանքային հրահանգներ՝ ինչպես պահանջվում է 38(1) հոդվածի «գ» կետում.
- ե) ապահովի, որ բացօթյա տարածքներում աշխատողին տրամադրվի անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ.
- զ) ապահովի, որ բացօթյա տարածքներում աշխատողը ենթարկվի աշխատանքի բնույթին համապատասխան անհատական ճառագայթահարման դիտանցման եւ ցանկացած այլ դոզիմետրային գործառնական դիտանցման, որը կարող է անհրաժեշտ լինել.

- է) ապահովի համապատասխանությունը պաշտպանության համակարգին՝ ինչպես սահմանված է III գլխում.
- ը) դիտարկվող գոտիներ մուտք գործելու համար ապահովի կամ ձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր գործողությունից հետո X հավելվածի «Բ» բաժնի 2-րդ կետի իմաստով բացօթյա տարածքներում «Ա» կատեգորիայի յուրաքանչյուր աշխատողի անհատական ճառագայթահարման դիտանցման ճառագայթային տվյալները գրառվեն:
4. Անդամ պետություններն ապահովում են, որ բացօթյա տարածքներում աշխատողների գործատուներն ուղղակի կամ կազմակերպության հետ պայմանագրային համաձայնությունների միջոցով ապահովեն, որ իրենց աշխատողների պաշտպանությունը ճառագայթումից համապատասխան լինի սույն հրահանգի համապատասխան դրույթներին, մասնավորապես՝
- ա) ապահովելով համապատասխանությունը պաշտպանության համակարգին՝ ինչպես սահմանված է III գլխում.
- բ) ապահովելով, որ տրամադրվեն 15(1) հոդվածի «ա», «բ» եւ «ե» կետերում, 15(2), (3) եւ (4) հոդվածում նշված տեղեկությունները եւ վերապատրաստումը ճառագայթումից պաշտպանության ոլորտում.
- գ) երաշխավորելով, որ իրենց աշխատողները ենթարկվեն ճառագայթահարման պատշաճ գնահատման եւ, «Ա» կատեգորիայի աշխատողների դեպքում, բժշկական հսկողության՝ 39-րդ եւ 41-49-րդ հոդվածներում սահմանված պայմանների համաձայն.
- դ) ապահովելով, որ իրենց «Ա» կատեգորիայի յուրաքանչյուր աշխատողի անհատական ճառագայթահարման դիտանցման ճառագայթային տվյալները X հավելվածի «Բ» բաժնի 1-ին կետի իմաստով թարմացված են 44(1) հոդվածի «դ» կետում նշված անհատական ճառագայթային դիտանցման տվյալների համակարգում:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ բոլոր բացօթյա տարածքներում աշխատողները հնարավորության սահմաններում իրենց նպաստն ունենան 1-ին պարբերության մեջ նշված անհատական ճառագայթային դիտանցման տվյալների համակարգով իրենց տրամադրվող պաշտպանության հարցում՝ չխախտելով կազմակերպության կամ գործատուի պատասխանատվությունները:

Հոդված 52

Հատուկ թույլտվությամբ ճառագայթահարումները

1. Անդամ պետությունները կարող են որոշել, որ ըստ դեպքի գնահատվող բացառիկ հանգամանքներում, բացառությամբ վթարների, իրավասու մարմինը կարող է, ելնելով կոնկրետ գործողության պահանջից, թույլատրել, որ աշխատողների անհատական մասնագիտական ճառագայթահարման դոզայի սահմանները գերազանցեն 9-րդ հոդվածով սահմանված քանակությունը՝ պայմանով, որ այդպիսի ճառագայթահարումները սահմանափակվեն ժամանակային առումով, տեղի ունենան որոշակի աշխատանքային տարածքում եւ կոնկրետ դեպքի համար իրավասու մարմնի կողմից սահմանված՝ ճառագայթահարման առավելագույն սահմաններում: Հաշվի են առնվում հետեւյալ պայմանները՝

- ա) միայն 40-րդ հոդվածով սահմանված «Ա» կատեգորիայի աշխատողները կամ տիեզերանավի անձնակազմը կարող են ենթարկվել այդպիսի ճառագայթահարումների.
- բ) փորձնակաները, ուսանողները, հղի աշխատողները եւ, եթե առկա է կլանման կամ մարմնական աղտոտման վտանգ, ապա կրծքով կերակրող աշխատողները ենթակա չեն այդպիսի ճառագայթահարումների.
- գ) կազմակերպությունն այդպիսի ճառագայթահարումները նախապես հիմնավորում է եւ դրանք մանրակրկիտ քննարկում է աշխատողների, նրանց

ներկայացուցիչների, մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայության եւ ճառագայթումից պաշտպանության փորձագետի հետ.

- դ) ներգրավված ռիսկերի մասին տեղեկությունները եւ գործողության ընթացքում ձեռնարկվելիք նախազգուշական միջոցները համապատասխան աշխատողներին են ներկայացվում նախապես.
- ե) աշխատողները համաձայնել են.
- զ) այդպիսի ճառագայթահարումներին առնչվող բոլոր դոզաներն առանձին-առանձին գրանցվում են 48-րդ հոդվածում նշված բժշկական քարտում եւ 43-րդ հոդվածում նշված անհատական քարտում:

2. Հատուկ թույլտվությամբ ճառագայթահարումների հետեւանքով դոզայի սահմանների գերազանցումն անպայմանորեն պատճառ չէ՝ աշխատողներին իրենց սովորական աշխատանքից հեռացնելու կամ տեղափոխելու համար՝ առանց նրանց համաձայնության:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ տիեզերանավի անձնակազմի՝ դոզայի սահմաններից ավելի ճառագայթահարումը կառավարվի որպես հատուկ թույլտվությամբ ճառագայթահարում:

Հոդված 53

Մասնագիտական վթարային ճառագայթահարումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ մասնագիտական վթարային ճառագայթահարումները մնան, հնարավորության դեպքում, 9-րդ հոդվածում սահմանված դոզայի սահմանների արժեքներից ցածր:
2. Այն իրավիճակների դեպքում, երբ վերոնշյալ պայմանն իրագործելի չէ, կիրառվում են հետեւյալ պայմանները՝

ա) մասնագիտական վթարային ճառագայթահարման էտալոնային մակարդակը պետք է սահմանվի ընդհանրապես 100 մՋվ արդյունարար դոզայից ցածր.

բ) բացառիկ իրավիճակներում, կյանքը փրկելու, առողջության վրա ճառագայթումից առաջացող ծանր հետեւանքները կանխելու կամ աղետալի պայմանների զարգացումը կանխելու նպատակով, վթարային աշխատողների արտաքին ճառագայթումից ստացվող արդյունարար դոզայի էտալոնային մակարդակը կարող է սահմանվել 100 մՋվ-ից ավելի, սակայն 500 մՋվ-ից ոչ ավելի:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ վթարային աշխատողները, որոնք կարող են ձեռնարկել գործողություններ, որոնցով 100 մՋվ արդյունարար դոզան կարող է գերազանցվել, նախապես հստակորեն եւ համապարփակ ձեւով տեղեկացվեն առողջության հետ կապված ռիսկերի եւ հասանելի պաշտպանության միջոցների մասին եւ այդ գործողությունները ձեռնարկեն կամավոր:

4. Մասնագիտական վթարային ճառագայթահարման դեպքում անդամ պետությունները պահանջում են վթարային աշխատողների ճառագայթային դիտանցման անցկացում: Անհատական դոզաների անհատական դիտանցումը կամ գնահատումը պետք է կատարվի ըստ հանգամանքների:

5. Մասնագիտական վթարային ճառագայթահարման դեպքում անդամ պետությունները պահանջում են, որ վթարային աշխատողների հատուկ բժշկական հսկողությունը, ինչպես սահմանված է 49-րդ հոդվածում, իրականացվի ըստ հանգամանքների:

*Հոդված 54***Ռադոնի առկայությունն աշխատավայրերում**

1. Անդամ պետությունները սահմանում են աշխատավայրերում փակ տարածքներում ռադոնի կոնցենտրացիայի ազգային էտալոնային մակարդակներ: Օդում տարեկան միջին տեսակարար ակտիվության էտալոնային մակարդակը չպետք է 300 Բք մ⁻³-ից բարձր լինի, եթե դա երաշխավորված չէ գերակայող ազգային հանգամանքներով:
2. Անդամ պետությունները պահանջում են, որ իրականացվեն ռադոնի չափումներ՝
 - ա) 103(3) հոդվածին համապատասխան սահմանված գոտիներում գտնվող այն աշխատավայրերում, որոնք գտնվում են առաջին հարկում կամ նկուղային մակարդակում՝ հաշվի առնելով գործողությունների ազգային ծրագրում պարունակվող հարաչափերը՝ ինչպես սահմանված է XVIII հավելվածի 2-րդ կետով, ինչպես նաև
 - բ) աշխատավայրերի հատուկ տեսակներում, որոնք սահմանված են գործողությունների ազգային ծրագրում՝ հաշվի առնելով XVIII հավելվածի 3-րդ կետը:
3. Աշխատավայրերում գտնվող այն գոտիներում, որտեղ ռադոնի կոնցենտրացիան (որպես տարեկան միջին) դեռևս գերազանցում է ազգային էտալոնային մակարդակը՝ չնայած III գլխով սահմանված օպտիմալացման սկզբունքներին համապատասխան ձեռնարկված գործողությանը, անդամ պետությունները պահանջում են, որ այդ իրավիճակի մասին ծանուցվի 25(2) հոդվածին համապատասխան, եւ կիրառվի 35(2) հոդվածը:

ԳԼՈՒԽ VII

ԲԺՇԿԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Հոդված 55

Հիմնավորումը

1. Բժշկական ճառագայթահարումը պետք է ապահովի բավարար մաքուր օգուտ՝ այն ընդհանուր հնարավոր ախտորոշիչ կամ թերապետիկ օգուտների համեմատությամբ, որոնք այն տալիս է, այդ թվում՝ անհատի առողջության վրա ունեցող անմիջական օգուտներն ու հասարակության վրա ունեցող օգուտները եւ այն անհատական վնասը, որն այդ ճառագայթահարումը կարող է պատճառել՝ հաշվի առնելով նույն նպատակն ունեցող, սակայն չներառող կամ ավելի քիչ իոնացնող ճառագայթում ներառող հասանելի այլընտրանքային տեխնիկաների արդյունավետությունը, օգուտները եւ ռիսկերը:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերության մեջ սահմանված սկզբունքը կիրառվի եւ, մասնավորապես, որ՝

- ա) բժշկական ճառագայթահարում ներառող նոր գործելակերպերը մինչեւ ընդհանուր ընդունումը նախապես հիմնավորվեն.
- բ) բոլոր անհատական բժշկական ճառագայթահարումները հիմնավորվեն նախապես՝ հաշվի առնելով ճառագայթահարման կոնկրետ նպատակները եւ ներգրավված անհատի բնութագրերը.
- գ) եթե բժշկական ճառագայթահարում ներառող գործելակերպի տեսակն ընդհանրապես հիմնավորված չէ, ապա այդ տեսակի անհատական հատուկ ճառագայթահարումը կարող է հիմնավորվել, անհրաժեշտության դեպքում, հատուկ հանգամանքներում, որոնք պետք է գնահատվեն ըստ դեպքի եւ փաստաթղթավորվեն.

- դ) ուղեգիր տրամադրողը եւ բուժաշխատողը, ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից, կիրառելի լինելու դեպքում, ձեռք բերեն պլանավորված ճառագայթահարման համար կարելու նախկին ախտորոշումների վերաբերյալ տեղեկություններ կամ բժշկական քարտեր եւ այդ տվյալները հաշվի առնեն՝ անհարկի ճառագայթահարումից խուսափելու համար.
- ե) բժշկական կամ կենսաբժշկական հետազոտության նպատակներով իրականացվող բժշկական ճառագայթահարումներն ուսումնասիրվում են էթիկայի հանձնաժողովի կողմից, որն ստեղծվում է ազգային ընթացակարգերին համապատասխան եւ (կամ) իրավասու մարմնի կողմից.
- զ) որպես բժշկական զննության ծրագրի մաս իրականացվող բժշկական ճառագայթային պրոցեդուրաների կոնկրետ հիմնավորումն իրականացվում է իրավասու մարմնի կողմից՝ պատշաճ բժշկական գիտական ասոցիացիաների կամ համապատասխան մարմինների հետ համատեղ.
- է) խնամողների եւ սփոփողների ճառագայթահարումն ապահովում է բավարար մաքուր օգուտ՝ հաշվի առնելով հիվանդի առողջության համար անմիջական օգուտները, խնամողի/սփոփողի համար հնարավոր օգուտները եւ այն վնասը, որն այդ ճառագայթահարումը կարող է պատճառել.
- ը) ախտանիշներ չունեցող անհատի վրա անցկացվող ցանկացած բժշկական ճառագայթային պրոցեդուրա, որն իրականացվելու է հիվանդության վաղ հայտնաբերման նպատակով, բժշկական զննության ծրագրի մաս է կամ պահանջում է այդ անհատի համար հատուկ փաստաթղթավորված հիմնավորում բուժաշխատողի կողմից՝ խորհրդակցելով ուղեգիր նշանակողի հետ եւ հետետելով համապատասխան բժշկական գիտական ասոցիացիաների եւ իրավասու մարմնի ուղենիշներին: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել բժշկական ճառագայթահարման ենթարկվող անձին տեղեկություններ տրամադրելուն՝ ինչպես պահանջվում է 57(1) հոդվածի «դ» կետով:

Հոդված 56

Օպտիմալացումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ճառագայթային ախտորոշման, միջամտական ճառագայթաբանության, պլանավորման, ուղղորդման եւ ստուգման նպատակներով բժշկական ճառագայթահարման հետեւանքով ստացվող բոլոր դոզաները պահվեն ողջամտության սահմաններում հնարավորինս ցածր՝ պահանջվող բժշկական տեղեկությունները ստանալու նպատակին համապատասխան՝ հաշվի առնելով տնտեսական եւ հասարակական գործոնները:

Ճառագայթային թերապիայի նպատակներով հիվանդների բոլոր բժշկական ճառագայթահարումների դեպքում թիրախային ծավալներով ճառագայթահարումները պետք է անհատապես պլանավորված լինեն, իսկ դրանց իրականացումը՝ պատշաճորեն ստուգված՝ հաշվի առնելով այն, որ ոչ թիրախային ծավալներով եւ հյուսվածքների համար դոզաները պետք է լինեն ողջամտության սահմաններում հնարավորինս ցածր եւ համապատասխան ճառագայթահարման նախատեսված ճառագայթային թերապետիկ նպատակներին:

2. Անդամ պետություններն ապահովում են ճառագայթային ախտորոշման զննությունների, իսկ պատշաճ դեպքում՝ միջամտական ճառագայթաբանական պրոցեդուրաների էտալոնային ախտորոշիչ մակարդակների սահմանումը, կանոնավոր վերանայումը եւ օգտագործումը՝ հաշվի առնելով, առկայության դեպքում, առաջարկվող եվրոպական ախտորոշիչ էտալոնային մակարդակները, եւ այդ նպատակներով ուղղորդման առկայությունը:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ բժշկական ճառագայթահարում ներառող յուրաքանչյուր բժշկական կամ կենսաբժշկական հետազոտության դեպքում՝

ա) տվյալ անհատները մասնակցեն կամավոր.

- բ) այդ անհատները տեղեկացված լինեն ճառագայթահարման ռիսկերի մասին.
- գ) սահմանվի դոզայի սահմանափակում այն անհատների համար, որոնց համար ճառագայթումից ուղղակի բժշկական օգուտ չի ակնկալվում.
- դ) այն հիվանդների դեպքում, որոնք կամավոր որոշում են փորձնական բժշկական պրոցեդուրա անցնել եւ ակնկալվում է, որ նրանք այդ պրոցեդուրայից ստանալու են ախտորոշիչ կամ թերապեւտիկ օգուտ, տվյալ դոզայի մակարդակները բուժաշխատողի եւ (կամ) ուղեգիր նշանակողի կողմից պետք է դիտարկվեն անհատապես՝ նախքան ճառագայթահարման իրականացումը:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ օպտիմալացումը ներառի սարքավորումների ընտրություն, համապատասխան ախտորոշիչ տեղեկությունների կամ թերապեւտիկ արդյունքների հետետողական ստացում, բժշկական ճառագայթային պրոցեդուրաների գործնական ասպեկտներ, որակի ապահովում եւ հիվանդների դոզաների գնահատում եւ ուսումնասիրություն կամ ներմուծված ակտիվության ստուգում՝ հաշվի առնելով տնտեսական եւ հասարակական գործոնները:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ.

- ա) անհրաժեշտության դեպքում, սահմանվեն դոզայի սահմանափակումներ՝ խնամողների եւ սփոփողների ճառագայթահարման համար.
- բ) սահմանվի պատշաճ ուղղորդում՝ խնամողների եւ սփոփողների ճառագայթահարման համար:

6. Անդամ պետություններն ապահովում են, որ ռադիոակտիվ իզոտոպներով բուժում կամ ախտորոշում անցնող հիվանդի դեպքում բուժաշխատողը կամ կազմակերպությունը, ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից, հիվանդին կամ նրա ներկայացուցչին տրամադրի իոնացնող ճառագայթման վտանգների մասին տեղեկություններ եւ պատշաճ ցուցումներ՝ հիվանդի հետ շփման մեջ գտնվող անձանց դոզաները ողջամտության սահմաններում

հնարավորինս սահմանափակելու նպատակով: Թերապեւտիկ պրոցեդուրաների դեպքում դրանք պետք է լինեն գրավոր ցուցումներ:

Այդ ցուցումները պետք է տրվեն մինչեւ հիվանդանոցից կամ կլինիկայից կամ նմանատիպ հաստատությունից հեռանալը:

Հոդված 57

Պարտականությունները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ.
 - ա) ցանկացած բժշկական ճառագայթահարում տեղի ունենա բուժաշխատողի կլինիկական պատասխանատվության ներքո.
 - բ) բուժաշխատողը, բժշկական ֆիզիկայի փորձագետը եւ նրանք, ովքեր իրավասու են իրականացնել բժշկական ճառագայթային պրոցեդուրաների գործնական ասպեկտները, ներգրավված լինեն օպտիմալացման գործընթացում՝ ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից.
 - գ) ուղեգիր նշանակողը եւ բուժաշխատողը ներգրավված լինեն անհատական բժշկական ճառագայթահարումների հիմնավորման գործընթացում՝ ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից.
 - դ) բուժաշխատողը կամ ուղեգիր նշանակողը, կիրառելիության դեպքում եւ նախքան ճառագայթահարման իրականացումը, ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից, ապահովում է, որ հիվանդին կամ նրա ներկայացուցչին տրամադրվեն պատշաճ տեղեկություններ՝ բժշկական ճառագայթահարումից ստացվող ճառագայթման դոզայի հետ կապված օգուտների եւ վտանգների վերաբերյալ: Նմանատիպ տեղեկություններ, ինչպես նաեւ համապատասխան ուղղորդում պետք է տրամադրվի խնամողներին եւ սփոփողներին՝ 56(5) հոդվածի «բ» կետին համապատասխան:

2. Բժշկական ճառագայթային պրոցեդուրաների գործնական ասպեկտները կարող են կազմակերպության կամ բուժաշխատողի կողմից, ըստ անհրաժեշտության, պատվիրակվել մեկ կամ ավելի անհատների, որոնք իրավասու են այդ առնչությամբ գործելու մասնագիտացման ճանաչված ոլորտում:

Հոդված 58

Ընթացակարգերը

Անդամ պետություններն ապահովում են, որ.

- ա) հիվանդների համապատասխան կատեգորիաների համար նախատեսված յուրաքանչյուր սարքավորման համար սահմանվեն գրավոր արձանագրություններ՝ ստանդարտ բժշկական ճառագայթային պրոցեդուրայի յուրաքանչյուր տեսակի համար.
- բ) հիվանդների ճառագայթահարման վերաբերյալ տեղեկությունները բժշկական ճառագայթային պրոցեդուրայի վերաբերյալ զեկույցի մասն են կազմում.
- գ) ուղեգիր նշանակողներին հասանելի լինեն բժշկական պատկերման էտալոնային ուղենիշներ՝ հաշվի առնելով ճառագայթման դոզաները.
- դ) բժշկական ֆիզիկայի փորձագետը պատշաճորեն ներգրավված լինի բժշկական ճառագայթային գործելակերպերում, եւ ներգրավվածության աստիճանը համարժեք լինի գործելակերպի ներկայացրած ճառագայթային վտանգին: Մասնավորապես՝
 - i) ստանդարտացված միջուկային բժշկության թերապեւտիկ գործելակերպերից բացի այլ ճառագայթային թերապեւտիկ գործելակերպերում պետք է սերտորեն ներգրավված լինի բժշկական ֆիզիկայի փորձագետ.

- ii) ստանդարտացված միջուկային բժշկության թերապևտիկ գործելակերպերում, ինչպես նաև ճառագայթային ախտորոշիչ եւ միջամտական ճառագայթաբանության գործելակերպերում, որոնք ներառում են բարձր դոզաներ, ինչպես նշված է 61(1) հոդվածի «գ» կետում, պետք է ներգրավված լինի բժշկական ֆիզիկայի փորձագետ.
- iii) «ա» եւ «բ» կետերով չկարգավորվող այլ բժշկական ճառագայթային գործելակերպերի դեպքում պետք է, ըստ անհրաժեշտության, ներգրավված լինի բժշկական ֆիզիկայի փորձագետ՝ բժշկական ճառագայթահարման մասով ճառագայթումից պաշտպանության հետ կապված հարցերով խորհրդատվության եւ խորհրդի համար.
- ե) իրականացվեն կլինիկական աուդիտներ՝ ազգային ընթացակարգերին համապատասխան.
- զ) ձեռնարկվեն պատշաճ տեղական վերանայումներ, երբ ախտորոշման էտալոնային մակարդակները մշտապես գերազանցվում են, եւ որ պատշաճ ուղղիչ գործողությունը ձեռնարկվի առանց անտեղի ուշացման:

Հոդված 59

Վերապատրաստումը եւ ճանաչումը

Անդամ պետություններն ապահովում են, որ վերապատրաստման եւ ճանաչման պահանջները, ինչպես սահմանված է 79-րդ, 14-րդ եւ 18-րդ հոդվածներում, բավարարվեն բուժաշխատողի, բժշկական ֆիզիկայի փորձագետի եւ 57(2) հոդվածում նշված անհատների դեպքում:

*Հոդված 60***Սարքավորումները**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ.
 - ա) օգտագործվող բոլոր բժշկական ճառագայթային սարքավորումները պահվեն խիստ վերահսկողության տակ՝ ճառագայթումից պաշտպանության մասով.
 - բ) իրավասու մարմինն հասանելի լինի յուրաքանչյուր բժշկական ճառագայթային կայանքի բժշկական ճառագայթային սարքավորման թարմացված գույքագրում.
 - գ) կազմակերպության կողմից իրականացվի որակի ապահովման պատշաճ ծրագրեր եւ դոզայի գնահատում կամ ներմուծված ակտիվության ստուգում.
եւ
 - դ) մինչեւ սարքավորումը կլինիկական նպատակներով առաջին անգամ օգտագործելը՝ իրականացվի ընդունման փորձարկում, իսկ դրանից հետո եւ ցանկացած սպասարկման գործընթացից հետո, որը կարող է ազդել աշխատանքի վրա, կանոնավոր իրականացվի աշխատանքի փորձարկում:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը քայլեր ձեռնարկի՝ ապահովելու համար, որ կազմակերպությունը ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ՝ բարելավելու օգտագործվող բժշկական ճառագայթային սարքավորումների ոչ պատշաճ կամ թերի աշխատանքը: Նրանք նաեւ ընդունում են սարքավորման ընդունելիության հատուկ չափանիշներ, որպեսզի նշվի, թե երբ է անհրաժեշտ համապատասխան ուղղիչ գործողություն, այդ թվում՝ սարքավորումը շահագործումից հանել:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ.
 - ա) արգելվի ռենտգենադիտման սարքավորումների օգտագործումն առանց դոզայի հզորությունն ինքնաբար հսկող սարքի կամ առանց պատկերի ուժեղացուցիչի կամ համարժեք սարքի.

- բ) հեռահար ճառագայթային բուժման համար օգտագործվող՝ 1 ՄՎտ նոմինալ հզորությունը գերազանցող ճառագայթային էներգիայով սարքավորումներն ունենան բուժման առանցքային հարաչափերը ստուգող սարք: Մինչեւ 2018 թվականի փետրվարի 6-ը տեղադրված սարքավորումները կարող են ազատվել այդ պահանջից .
- գ) միջամտական ճառագայթաբանության համար օգտագործվող ցանկացած սարքավորում ունենա սարք կամ հատկություն, որը բուժաշխատողին եւ բժշկական պրոցեդուրաների գործնական ասպեկտներն իրականացնող անձանց տեղեկություններ է հաղորդում պրոցեդուրայի ընթացքում սարքավորման կողմից արտադրված ճառագայթման քանակի մասին: Մինչեւ 2018 թվականի փետրվարի 6-ը տեղադրված սարքավորումները կարող են ազատվել այդ պահանջից .
- դ) միջամտական ճառագայթաբանության եւ համակարգչային տոմոգրաֆիայի համար օգտագործվող ցանկացած սարքավորում եւ պլանավորման, ուղղորդման եւ ստուգման նպատակով օգտագործվող ցանկացած նոր սարքավորում ունենա սարք կամ հատկություն, որը պրոցեդուրայի ավարտին բուժաշխատողին տեղեկություններ հաղորդի հիվանդի ստացած դոզան գնահատելու համապատասխան հարաչափերի մասին .
- ե) միջամտական ճառագայթաբանության եւ համակարգչային տոմոգրաֆիայի համար օգտագործվող սարքավորումն ունենա 3(դ) պարբերությամբ պահանջվող տեղեկությունները զննության արձանագրությանը փոխանցելու հնարավորություն: Մինչեւ 2018 թվականի փետրվարի 6-ը տեղադրված սարքավորումները կարող են ազատվել այդ պահանջից .
- զ) չխախտելով 3-րդ պարբերության «գ», «դ» եւ «ե» կետերը՝ իոնացնող ճառագայթում արտադրող ճառագայթային ախտորոշման բժշկական նոր սարքավորումներն ունենան սարք կամ համարժեք միջոց՝ բուժաշխատողին հիվանդի ստացած դոզան գնահատելու համապատասխան հարաչափերի

մասին տեղեկություններ հաղորդելու համար: Անհրաժեշտության դեպքում սարքավորումը պետք է ունենա այդ տեղեկությունները զննության արձանագրությանը փոխանցելու հնարավորություն.

Հոդված 61

Հատուկ գործելակերպերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ օգտագործվեն պատշաճ բժշկական ճառագայթային սարքավորումներ, գործնական տեխնիկաներ եւ օժանդակ սարքավորումներ՝

ա) երեխաների բժշկական ճառագայթահարման ընթացքում.

բ) որպես առողջության զննության ծրագրի մաս անցկացվող բժշկական ճառագայթահարման ընթացքում.

գ) հիվանդի համար բարձր դոզաներ ներառող բժշկական ճառագայթահարման ընթացքում, որը կարող է լինել միջամտական ճառագայթաբանության, միջուկային բժշկության, համակարգչային տոմոգրաֆիայի կամ ճառագայթային բուժման դեպքում:

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այդ գործելակերպերի որակի ապահովման ծրագրերին եւ դոզայի գնահատմանը կամ ներմուծված ակտիվության ստուգմանը:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ բուժաշխատողները եւ 57(2) հոդվածում նշված անհատները, որոնք իրականացնում են 1-ին պարբերության մեջ նշված ճառագայթահարումները, անցնեն համապատասխան վերապատրաստում այդ բժշկական ճառագայթային գործելակերպերի վերաբերյալ՝ ինչպես պահանջվում է 18-րդ հոդվածով:

*Հոդված 62***Հատուկ պաշտպանությունը հղիության
եւ կրծքով կերակրման ընթացքում**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ուղեգիր նշանակողը կամ բուժաշխատողն անհրաժեշտության դեպքում անդամ պետությունների կողմից սահմանված կարգով հարցում կատարի այն մասին, թե արդյոք բժշկական ճառագայթահարման ենթարկվող անհատը հղի է կամ կերակրում է կրծքով, եթե դա չի կարող բացառվել ակնհայտ պատճառներով կամ կարելու չէ ճառագայթային պրոցեդուրայի դեպքում:
2. Եթե հղիությունը չի կարող բացառվել եւ, կախված բժշկական ճառագայթային պրոցեդուրայից, մասնավորապես՝ թե արդյոք այն կապված է որովայնի կամ կոնքային հատվածների հետ, պետք է հատուկ ուշադրություն դարձնել հիմնավորմանը, մասնավորապես՝ հրատապությանը, եւ օպտիմալացմանը՝ հաշվի առնելով թե՛ հղի անհատին, թե՛ դեռեւս չծնված երեխային:
3. Կրծքով կերակրող անհատի դեպքում միջուկային բժշկության մեջ, կախված բժշկական ճառագայթային պրոցեդուրայից, պետք է հատուկ ուշադրություն դարձնել հիմնավորմանը, մասնավորապես՝ հրատապությանը, եւ օպտիմալացմանը՝ հաշվի առնելով թե՛ անհատին, թե՛ երեխային:
4. Չխախտելով 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունները՝ անդամ պետություններն այնպիսի միջոցներով, ինչպիսիք են պատշաճ վայրերում հրապարակային ծանուցումները, այն անհատների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցներ են ձեռնարկում, որոնց դեպքում կիրառվում է սույն հոդվածը:

*Հոդված 63***Պատահարային եւ չնախատեսված ճառագայթահարումները**

Անդամ պետություններն ապահովում են, որ.

- ա) ձեռնարկվեն բոլոր ողջամիտ միջոցները՝ բժշկական ճառագայթահարման ենթակա անհատների պատահարային կամ չնախատեսված ճառագայթահարումների հավանականությունը եւ մագնիսուդը նվազագույնի հասցնելու համար.
- բ) ճառագայթային թերապեւտիկ գործելակերպերի դեպքում որակի ապահովման ծրագիրը ներառում է պատահարային կամ չնախատեսված ճառագայթահարումների ռիսկերի ուսումնասիրություն.
- գ) բժշկական բոլոր ճառագայթահարումների դեպքում կազմակերպությունը կիրարկի այն դեպքերի վերաբերյալ գրառումների վարման եւ վերլուծության պատշաճ համակարգ, որոնք ներառում են կամ կարող են ներառել պատահարային կամ չնախատեսված ճառագայթահարումներ՝ գործելակերպի ներկայացրած ճառագայթային վտանգին համաչափ.
- դ) կատարվեն կարգադրություններ՝ ուղեգիր նշանակողին ու բուժաշխատողին եւ հիվանդին կամ նրա ներկայացուցչին կլինիկական կարելորություն ունեցող պատահարային կամ չնախատեսված ճառագայթահարումների եւ վերլուծության արդյունքների մասին տեղեկացնելու համար.
- ե) i) կազմակերպությունը հնարավորինս շուտ իրավասու մարմնին հայտնում է կարելոր դեպքերի առաջացման մասին՝ իրավասու մարմնի կողմից սահմանված կարգով.
ii) իրավասու մարմնին անդամ պետության կողմից սահմանված ժամկետում զեկուցվի այդպիսի դեպքերի քննության արդյունքների եւ դրանցից խուսափելուն ուղղված ուղղիչ միջոցների մասին.
- զ) գործեն կարելոր դեպքերից քաղված դասերի առնչությամբ բժշկական ճառագայթահարման ոլորտում ճառագայթումից պաշտպանության համար կարելոր տեղեկությունների ժամանակին տարածման մեխանիզմներ:

*Հոդված 64***Բնակչության համար սահմանված դոզաների հաշվարկները**

Անդամ պետություններն ապահովում են, որ ճառագայթային ախտորոշիչ եւ միջամտական ճառագայթաբանության նպատակներով ստացված բժշկական ճառագայթահարման անհատական դոզաների հաշվարկների բաշխումը որոշվի՝ հաշվի առնելով, անհրաժեշտության դեպքում, բաշխումն ըստ ճառագայթահարման ենթարկվողի տարիքի եւ սեռի:

ԳԼՈՒԽ VIII

ՀԱՆՐԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ԲԱԺԻՆ 1

Հանրության անդամների պաշտպանությունը եւ առողջության երկարաժամկետ պաշտպանությունը բնականոն պայմաններում

Հոդված 65

Հանրության անդամների պաշտպանությունն աշխատանքների ժամանակ

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բնականոն պայմաններում աշխատանքների ժամանակ հանրության անդամների պաշտպանությունը լիցենզավորման ենթակա գործելակերպերից ներառի, համապատասխան տեղակայանքների դեպքում, հետեւյալը՝

- ա) տեղակայանքի առաջարկվող վայրի զննություն եւ հաստատում ճառագայթումից պաշտպանության տեսանկյունից՝ հաշվի առնելով համապատասխան ժողովրդագրական, օդերեութաբանական, երկրաբանական, հիդրոլոգիական եւ էկոլոգիական պայմանները .
- բ) այն տեղակայանքի ընդունումը շահագործման, որը ենթակա է պատշաճ պաշտպանության, որը տրամադրվում է տեղակայանքի տրամագծից դուրս տարածվելու հնարավորություն ունեցող ռադիոակտիվ աղտոտումից կամ տեղակայանքի տակ գտնվող հողում տարածվելու հնարավորություն ունեցող ռադիոակտիվ աղտոտումից .
- գ) հեղուկ ռադիոակտիվ արտանետումների արտազատման վերաբերյալ նախագծերի ուսումնասիրություն եւ հաստատում .
- դ) միջոցներ՝ հանրության անդամների համար տեղակայանքի մատչելիությունը հսկելու համար:

2. Իրավասու մարմինն անհրաժեշտության դեպքում սահմանում է թույլատրված սահմաններ՝ որպես արտազատման թույլտվության եւ հեղուկ ռադիոակտիվ արտանետումների արտազատման պայմանների մաս, որոնցով՝

- ա) հաշվի են առնվում ճառագայթումից պաշտպանության օպտիմալացման արդյունքները .
- բ) արտացոլվում են նմանատիպ տեղակայանքների աշխատանքի լավագույն գործելակերպերը:

Ի հավելումն դրա՝ արտազատումների այդ թույլտվություններով անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվեն ընդհանուր զննության գնահատման արդյունքները՝ հիմնված միջազգայնորեն ճանաչված գիտական ուղղորդման վրա, եթե այդպիսի գնահատումը պահանջվել է անդամ պետության կողմից՝ ցույց տալու համար, որ մարդու առողջության երկարաժամկետ պաշտպանության՝ շրջակա միջավայրին առնչվող չափորոշիչները բավարարվում են:

3. Գրանցման ենթակա գործելակերպերի դեպքում անդամ պետությունները հանրության անդամների պաշտպանությունը բնականոն պայմաններում ապահովում են համապատասխան ազգային կարգավորումների եւ ուղղորդման միջոցով:

Հոդված 66

Հանրության անդամների ստացած դոզաների հաշվարկումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ արվեն թույլատրված գործելակերպերից հանրության անդամների ստացած դոզաների հաշվարկմանն ուղղված կարգադրություններ: Այդ կարգադրությունների ծավալը պետք է համաչափ լինի ճառագայթահարման տվյալ ռիսկին:

2. Անդամ պետություններն ապահովում են այն գործելակերպերի սահմանում, որոնց համար պետք է իրականացվի հանրության անդամների ստացած դոզայի գնահատում: Անդամ պետությունները սահմանում են այն գործելակերպերը, որոնց համար տվյալ գնահատումն անհրաժեշտ է իրականացնել իրատեսական եղանակով, եւ նրանք, որոնց համար բավարար է զննության գնահատումը:

3. Հանրության անդամների ստացած դոզայի իրատեսական գնահատման համար իրավասու մարմինը պետք է՝

ա) որոշում կայացնի հարցումների այն ողջամիտ ծավալի վերաբերյալ, որոնք պետք է իրականացվեն, եւ այն տեղեկությունների վերաբերյալ, որոնք պետք է հաշվի առնել՝ ներկայացուցիչը սահմանելու նպատակով՝ հաշվի առնելով ռադիոակտիվ նյութերի փոխանցման արդյունավետ ուղիները.

բ) որոշում կայացնի համապատասխան հարաչափերի դիտանցման ողջամիտ հաճախականության վերաբերյալ՝ «ա» կետով սահմանված կարգով.

- գ) ապահովի, որ ներկայացուցչի ստացած դոզաների հաշվարկները ներառեն՝
- i) արտաքին ճառագայթահարման հետեւանքով ստացվող դոզաների գնահատումը՝ անհրաժեշտության դեպքում նշելով տվյալ ճառագայթման տեսակը.
 - ii) ռադիոակտիվ իզոտոպների կլանման գնահատում՝ նշելով ռադիոակտիվ իզոտոպների բնույթը, անհրաժեշտության դեպքում նաեւ դրանց ֆիզիկական ու քիմիական վիճակը, ինչպես նաեւ այդ ռադիոակտիվ իզոտոպների տեսակարար ակտիվությունը սննդի եւ խմելու ջրի մեջ կամ շրջակա միջավայրի այլ կարելուր բաղադրիչներում.
 - iii) այն դոզաների գնահատումը, որոնք, ինչպես սահմանված է «ա» կետում, կարող է ստանալ ներկայացուցիչը.
- դ) պահանջի, որ արտաքին ճառագայթահարման եւ աղտոտվածության չափումների, ռադիոակտիվ իզոտոպների կլանման հաշվարկների, ինչպես նաեւ ներկայացուցչի կողմից ստացված դոզաների գնահատման արդյունքների վերաբերյալ գրառումներ վարվեն եւ ըստ պահանջի հասանելի դարձվեն բոլոր շահագրգիռ անձանց:

Հոդված 67

Ռադիոակտիվ արտազատումների դիտանցումը

1. Անդամ պետությունները պահանջում են, որ այն գործելակերպերի համար պատասխանատու կազմակերպությունը, որտեղ տրամադրվում է արտազատման թույլտվություն, պատշաճ դիտանցում իրականացնի կամ, անհրաժեշտության դեպքում, գնահատի բնականոն աշխատանքի ընթացքում շրջակա միջավայր օդածին կամ հեղուկ ռադիոակտիվ արտազատումների քանակը եւ արդյունքների մասին զեկուցի իրավասու մարմնին:

2. Անդամ պետություններն ատոմային էներգառեակտորների կամ վերամշակող կայանների համար պատասխանատու ցանկացած կազմակերպությունից պահանջում են իրականացնել ռադիոակտիվ արտազատումների դիտանցում եւ դրանց մասին զեկուցել՝ ստանդարտացված տեղեկություններին համապատասխան:

Հոդված 68

Կազմակերպության առաջադրանքները

Անդամ պետությունները կազմակերպությունից պահանջում են իրականացնել հետեւյալ առաջադրանքները՝

- ա) հասնել հանրության անդամների պաշտպանության օպտիմալ մակարդակի ու պահպանել այն.
- բ) շահագործման ընդունել հանրության անդամների ճառագայթահարման եւ շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտվածության չափմանն ու գնահատմանն համար պատշաճ սարքավորումներ եւ ընթացակարգեր.
- գ) ստուգել «բ» կետում նշված սարքավորումների արդյունավետությունն ու պահպանումը եւ ապահովել չափման գործիքների կանոնավոր ստուգաճշտումը.
- դ) «ա», «բ» եւ «գ» կետերում նշված առաջադրանքների կատարման վերաբերյալ խորհուրդ հարցնել ճառագայթումից պաշտպանության փորձագետից:

*ԲԱԺԻՆ 2***Վթարային ճառագայթահարման իրավիճակները***Հոդված 69***Վթարին արձագանքելը**

1. Անդամ պետությունները կազմակերպությունից պահանջում են իրավասու մարմնին անհապաղ ծանուցել այն գործելակերպերի հետ կապված վթարների վերաբերյալ, որոնց համար այն պատասխանատու է, եւ ձեռնարկել պատշաճ գործողություններ՝ հետեւանքները նվազեցնելու համար:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց տարածքում վթարի դեպքում տվյալ կազմակերպությունը կատարի վթարի հանգամանքների եւ հետեւանքների նախնական անցումային գնահատում եւ օժանդակի պաշտպանիչ միջոցներով:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ նախատեսվի դրույթ՝ պաշտպանիչ այն միջոցների մասով, որոնք առնչվում են՝

ա) ճառագայթման աղբյուրին՝ նվազեցնելու կամ դադարեցնելու ճառագայթումը, այդ թվում՝ ռադիոակտիվ իզոտոպների արտանետումը .

բ) շրջակա միջավայրին՝ համապատասխան ուղիների միջոցով նվազեցնելու ռադիոակտիվ նյութերի հետեւանքով անհատների ստացած ճառագայթահարումը .

գ) անհատներին՝ նվազեցնելու նրանց ճառագայթահարումը:

4. Իր տարածքում կամ տարածքից դուրս վթարի դեպքում՝ անդամ պետությունը պահանջում է՝

ա) պատշաճ պաշտպանիչ միջոցների կազմակերպում՝ հաշվի առնելով վթարի իրական բնութագրերը եւ պաշտպանության օպտիմալացված

ռազմավարությանը համապատասխան՝ որպես վթարին արձագանքման ծրագրի մաս, որով այն տարրերը, որոնք պետք է ընդգրկվեն վթարին արձագանքման ծրագրում, նշված են XI հավելվածի «Բ» բաժնում:

բ) վթարի հետեանքների, ինչպես նաև պաշտպանիչ միջոցների արդյունավետության գնահատում եւ գրառում:

5. Եթե իրավիճակն այդպես է պահանջում, ապա անդամ պետությունն ապահովում է, որ նախատեսվի դրանից ազդեցություն կրած անձանց բուժման կազմակերպում:

Հոդված 70

Հանրության այն անդամներին ներկայացվող տեղեկությունները, որոնք հավանական է, որ վթարի դեպքում կենթարկվեն ազդեցության

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հանրության այն անդամներին, որոնք հավանական է, որ ազդեցություն կկրեն վթարի դեպքում, տրամադրվեն տեղեկություններ առողջության պաշտպանության՝ նրանց նկատմամբ կիրառելի միջոցների եւ այն գործողության մասին, որը նրանք պետք է ձեռնարկեն այդպիսի վթարի դեպքում:

2. Տրամադրվող տեղեկությունները պետք է ներառեն առնվազն այն տարրերը, որոնք սահմանված են XII հավելվածի «Ա» բաժնում:

3. Այդ տեղեկություններն առանց որեւէ պահանջի հաղորդվում են 1-ին պարբերության մեջ նշված հանրության անդամներին:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ տեղեկությունները թարմացվեն ու տարածվեն պարբերաբար եւ որեւէ կարելի փոփոխություն կատարվելու դեպքում: Այդ տեղեկությունները պետք է մշտապես հասանելի լինեն հանրությանը:

*Հոդված 71***Հանրության այն անդամներին ներկայացվող տեղեկությունները, որոնք վթարի դեպքում փաստացի ենթարկվել են ազդեցության**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ վթար առաջանալու դեպքում հանրության այն անդամներին, որոնք փաստացի ենթարկվել են ազդեցության, անհապաղ տեղեկացնեն վթարի փաստերի, ձեռնարկվելիք քայլերի եւ, անհրաժեշտության դեպքում, առողջության պաշտպանության՝ հանրության այդ անդամների նկատմամբ կիրառելի միջոցների մասին:
2. Տրամադրվող տեղեկությունները պետք է ներառեն XII հավելվածի «Բ» բաժնում թվարկված այն կետերը, որոնք համապատասխանում են վթարի այդ տեսակին:

ԲԱԺԻՆ 3**Ճառագայթահարման առկա իրավիճակը***Հոդված 72***Շրջակա միջավայրի դիտանցման ծրագիրը**

Անդամ պետություններն ապահովում են, որ գործի շրջակա միջավայրի դիտանցման պատշաճ ծրագիր:

Հոդված 73

Աղտոտված գոտիները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ աղտոտված գոտիների կառավարման օպտիմալացված պաշտպանության ռազմավարությունները ներառեն, կիրառելիության դեպքում, հետևյալը՝

ա) նպատակներ, այդ թվում՝ երկարաժամկետ նպատակներ, որոնց ձգտում են հասնել ռազմավարությամբ, եւ համապատասխան էտալոնային մակարդակներ՝ 7-րդ հոդվածին համապատասխան .

բ) ազդեցության ենթարկված գոտիների սահմանագծում եւ հանրության՝ ազդեցության ենթարկված անդամների սահմանում .

գ) ազդեցության ենթարկված գոտիների եւ հանրության անդամների նկատմամբ կիրառվելիք պաշտպանիչ միջոցների անհրաժեշտության եւ ծավալի քննարկում .

դ) ազդեցության ենթարկված գոտիների մատչելիությունը կանխելու կամ հսկելու կամ այդ գոտիներում կենսապայմանների նկատմամբ սահմանափակումներ կիրառելու անհրաժեշտության քննարկում .

ե) բնակչության տարբեր խմբերում ճառագայթահարման գնահատում եւ անհատներին իրենց սեփական ճառագայթահարումը հսկելու համար հասանելի միջոցների գնահատում:

2. Երկարաժամկետ մնացորդային աղտոտվածությամբ գոտիներում, որտեղ անդամ պետությունը որոշել է թույլատրել բնակությունը եւ սոցիալական ու տնտեսական գործունեության վերսկսումը, անդամ պետությունները պետք է շահագրգիռ անձանց հետ խորհրդակցությամբ ապահովեն, որ, ըստ անհրաժեշտության, գործեն կարգադրություններ՝ ուղղված ճառագայթահարման շարունակական հսկողությանը՝ այնպիսի կենսապայմաններ ստեղծելու նպատակով, որոնք կարող են համարվել բնականոն, այդ թվում՝

- ա) էտալոնային պատշաճ մակարդակների սահմանում.
- բ) ենթակառուցվածքի ստեղծում՝ ազդեցության ենթարկված գոտիներում ինքնապաշտպանության շարունակական այնպիսի միջոցներին աջակցելու նպատակով, ինչպիսիք են տեղեկությունների տրամադրումը, խորհրդատվությունը եւ դիտանցումը.
- գ) անհրաժեշտության դեպքում, վերականգնմանն ուղղված միջոցներ.
- դ) անհրաժեշտության դեպքում, սահմանազღված գոտիներ:

Հոդված 74

Փակ տարածքում ռադոնից ճառագայթահարումը

1. Անդամ պետությունները սահմանում են փակ տարածքներում ռադոնի կոնցենտրացիայի ազգային էտալոնային մակարդակներ: Օդում տարեկան միջին տեսակարար ակտիվության էտալոնային մակարդակները չպետք է 300 Bq մ⁻³-ից բարձր լինեն:
2. 103-րդ հոդվածում նշված գործողությունների ազգային ծրագրով անդամ պետությունները պետք է խթանեն ռադոնի՝ էտալոնային մակարդակը գերազանցող կոնցենտրացիայով (որպես տարեկան միջին) կացարանների սահմանմանն ուղղված գործողությունը եւ խրախուսեն, անհրաժեշտության դեպքում՝ տեխնիկական կամ այլ միջոցներով, այդ կացարաններում ռադոնի կոնցենտրացիայի նվազեցմանն ուղղված միջոցները:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ փակ տարածքում ռադոնից ճառագայթահարման եւ դրա հետ կապված առողջության վտանգների, ռադոնի չափումներ իրականացնելու կարելիության եւ ռադոնի առկա կոնցենտրացիան նվազեցնելու համար հասանելի տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղական եւ ազգային տեղեկությունները հասանելի դարձվեն:

*Հոդված 75***Գամմա ճառագայթումը շինարարական նյութերից**

1. Շինարարական նյութերից արձակվող գամմա ճառագայթումից փակ տարածքներում արտաքին ճառագայթահարման նկատմամբ կիրառվող էտալոնային մակարդակը, ի հավելումն բաց տարածքներում արտաքին ճառագայթահարման, պետք է տարեկան 1 մՋվ լինի:

2. Այն շինարարական նյութերի համար, որոնք անդամ պետության կողմից սահմանվել են որպես ճառագայթումից պաշտպանության տեսանկյունից մտահոգիչ՝ հաշվի առնելով XIII հավելվածում սահմանված նյութերի օրինակելի ցանկը՝ կապված դրանց կողմից արձակվող գամմա ճառագայթման հետ, անդամ պետություններն ապահովում են, որ մինչեւ այդպիսի նյութերի շուկայահանումը՝

ա) որոշվի VIII հավելվածում սահմանված ռադիոակտիվ իզոտոպների տեսակարար ակտիվությունը. եւ որ

բ) պահանջվելու դեպքում իրավասու մարմնին տրամադրվեն տեղեկություններ չափումների արդյունքների եւ տեսակարար ակտիվության համապատասխան ցուցանիշի, ինչպես նաեւ համապատասխան գործոնների վերաբերյալ՝ VIII հավելվածում սահմանված կարգով:

3. 2-րդ պարբերությանը համապատասխան սահմանված շինարարական նյութերի տեսակների համար, որոնք կարող են էտալոնային մակարդակը գերազանցող դոզա արտազատել, անդամ պետությունները որոշում են կայացնում պատշաճ միջոցների մասին, որոնք կարող են ներառել հատուկ պահանջներ համապատասխան շինարարական նորմերում կամ սահմանափակումներ այդպիսի նյութերի նախատեսվող օգտագործման նկատմամբ:

ԳԼՈՒԽ IX

**ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ***ԲԱԺԻՆ 1***Ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը***Հոդված 76***Իրավասու մարմինը**

1. Անդամ պետությունները նշանակում են իրավասու մարմին՝ սույն հրահանգին համապատասխան գործառույթներ իրականացնելու նպատակով: Նրանք ապահովում են, որ իրավասու մարմինը՝

ա) գործառույթների առումով առանձին լինի ցանկացած այլ մարմնից կամ կազմակերպությունից, որը զբաղվում է սույն հրահանգով կարգավորվող գործելակերպերի խթանմամբ կամ օգտագործմամբ՝ դրա կարգավորող գործառույթի վրա անտեղի ազդեցությունից արդյունավետ անկախություն ապահովելու նպատակով.

բ) ստանա օրինական լիազորություններ եւ մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են իր պարտավորությունները կատարելու համար:

2. Եթե անդամ պետությունը իրավասության տվյալ ոլորտի համար ունի մեկից ավելի իրավասու մարմիններ, ապա այն նշանակում է այլ անդամ պետությունների իրավասու մարմինների հետ հաղորդակցության նպատակով կապի ապահովման մեկ կենտրոն: Եթե իրավասության տարբեր ոլորտների

համար այդպիսի կապի ապահովման կենտրոններ նշելը ողջամտորեն կիրառելի չէ, ապա անդամ պետությունները նշանակում են կապի ապահովման միասնական կենտրոն:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ուղարկում կապի ապահովման կենտրոնների անվանումն ու հասցեն եւ դրանց իրավասության համապատասխան ոլորտները՝ իրենց մարմինների հետ արագ հաղորդակցությունն անհրաժեշտության դեպքում հնարավոր դարձնելու համար:

4. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ուղարկում 3-րդ պարբերությունում նշված տեղեկությունների ցանկացած փոփոխություն:

5. Հանձնաժողովը 3-րդ եւ 4-րդ պարբերություններում նշված տեղեկությունները տրամադրում է անդամ պետությունում առկա կապի ապահովման բոլոր կենտրոններին եւ դրանք պարբերաբար հրապարակում է *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*՝ երկու տարուց ոչ ավելի պարբերականությամբ:

Հոդված 77

Թափանցիկությունը

Անդամ պետություններն ապահովում են, որ գործելակերպերի դասերի կամ տեսակների հիմնավորման, ճառագայթման աղբյուրների եւ ճառագայթումից պաշտպանության հետ կապված տեղեկությունները հասանելի դարձվեն կազմակերպություններին, աշխատողներին, հանրության անդամներին, ինչպես նաեւ հիվանդներին եւ այլ անհատների, որոնք ենթարկվում են բժշկական ճառագայթահարման: Սույն պարտավորությամբ ապահովվում է, որ իրավասու մարմինը տեղեկություններ տրամադրի իր իրավասության շրջանակներում գտնվող բնագավառների վերաբերյալ: Տեղեկությունները հասանելի են դարձվում ազգային օրենսդրությանը եւ միջազգային պարտավորություններին

համապատասխան՝ պայմանով, որ դրանով չի վտանգվում ազգային օրենսդրությամբ կամ միջազգային պարտավորություններով ճանաչված այնպիսի այլ շահեր, ինչպիսին է, ի թիվս այլնի, անվտանգությունը:

Հոդված 78

Տեղեկություններ սարքավորումների մասին

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ռադիոակտիվ աղբյուրներ կամ ճառագայթման գեներատոր պարունակող սարքավորումներ ձեռք բերող ցանկացած կազմակերպության տրամադրվեն պատշաճ տեղեկություններ դրանց հնարավոր ճառագայթային վտանգների եւ պատշաճ օգտագործման, փորձարկման ու պահպանման մասին, եւ որ նրանց ցուցադրվի, որ նախագծումը թույլ է տալիս ճառագայթահարումները սահմանափակել մինչեւ այնպիսի մակարդակ, որը ողջամտության սահմաններում հնարավորինս ցածր է:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ բժշկական ճառագայթային սարքավորումներ ձեռք բերող ցանկացած կազմակերպության տրամադրվեն պատշաճ տեղեկություններ՝ հիվանդներին ներկայացվող վտանգի գնահատման եւ կլինիկական գնահատման հասանելի տարրերի մասին:

Հոդված 79

Ծառայությունների եւ փորձագետների ճանաչումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ գործեն կարգադրություններ հետեւյալի ճանաչման մասով՝

ա) մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայություններ.

բ) դոզիմետրային հսկողության ծառայություններ.

զ) ճառագայթումից պաշտպանության փորձագետներ.

դ) բժշկական ֆիզիկայի փորձագետներ:

Անդամ պետություններն ապահովում են, որ գործեն անհրաժեշտ կարգադրություններ՝ այդ ծառայությունների եւ փորձագետների փորձի շարունակականությունն ապահովելու համար:

Անհրաժեշտության դեպքում անդամ պետությունները կարող են կարգադրություններ սահմանել ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձանց ճանաչման մասով:

2. Անդամ պետությունները սահմանում են ճանաչման մասով պահանջները եւ դրանք տրամադրում են Հանձնաժողովին:

3. Հանձնաժողովը 2-րդ պարբերությանը համապատասխան իր ստացած տեղեկությունները հասանելի է դարձնում անդամ պետություններին:

Հոդված 80

Մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայությունները

Անդամ պետություններն ապահովում են, որ մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայությունները VI գլխին համապատասխան իրականացնեն ճառագայթահարման ենթարկված աշխատողների բժշկական հսկողություն իրենց իոնացնող ճառագայթահարման ենթարկելու եւ իրենց հանձնարարված այն առաջադրանքների համար պիտանիության առնչությամբ, որոնք իոնացնող ճառագայթման հետ աշխատանք են ներառում:

*Հոդված 81***Դոզիմետրային հսկողության ծառայությունները**

Անդամ պետություններն ապահովում են, որ դոզիմետրային հսկողության ծառայությունները որոշեն անհատական դիտանցման ենթակա ճառագայթահարված աշխատողների ստացած ներքին եւ արտաքին դոզաները՝ դոզան կազմակերպության, իսկ բացօթյա տարածքներում աշխատողների դեպքում՝ գործատուի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական հիվանդությունների դեմ պայքարի առողջապահական ծառայությունների հետ համատեղ գրառելու նպատակով:

*Հոդված 82***Ճառագայթումից պաշտպանության փորձագետը**

1. Անդամ պետությունն ապահովում է, որ ճառագայթումից պաշտպանության փորձագետը կազմակերպությանը տրամադրի որակավորված խորհրդատվություն մասնագիտական եւ հանրային ճառագայթահարման առնչությամբ կիրառելի իրավական պահանջներին համապատասխանության հետ կապված հարցերում:

2. Ճառագայթումից պաշտպանության փորձագետի խորհուրդը պետք է անհրաժեշտության դեպքում ընդգրկի հետեւյալը, սակայն չսահմանափակվի դրանցով՝

- ա) դոզայի պատշաճ սահմանափակումների օպտիմալացում եւ սահմանում.
- բ) ծրագրեր նոր կայանքների վերաբերյալ եւ ճառագայթման նոր կամ փոփոխված աղբյուրների ընդունում շահագործման՝ կապված ճառագայթումից պաշտպանության համար կարեւոր ինժեներական ցանկացած հսկողության, նախագծման հատկանիշների, անվտանգության հատկանիշների եւ նախազգուշացման սարքերի հետ.

- գ) հսկման եւ դիտարկման գոտիների դասակարգում.
 - դ) աշխատողների դասակարգում.
 - ե) աշխատավայրի եւ անհատական դիտանցման ծրագրեր եւ դրանց հետ կապված անհատական դոզիմետրիա.
 - զ) ճառագայթման դիտանցման պատշաճ գործիքակազմ.
 - է) որակի ապահովում.
 - ը) շրջակա միջավայրի դիտանցման ծրագիր.
 - թ) ռադիոակտիվ թափոնների կառավարման մասով կարգադրություններ.
 - ժ) պատահարների եւ միջադեպերի կանխմանն ուղղված կարգադրություններ.
 - ժա) ճառագայթահարման վթարային իրավիճակներին պատրաստվածություն եւ արձագանքում.
 - ժբ) ճառագայթահարման ենթարկված աշխատողների վերապատրաստման եւ կրկնակի վերապատրաստման ծրագրեր.
 - ժգ) պատահարների եւ միջադեպերի քննություն ու վերլուծություն եւ պատշաճ ուղղիչ գործողություններ.
 - ժդ) հղի եւ կրծքով կերակրող աշխատողների համար աշխատանքային պայմաններ.
 - ժե) պատշաճ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպիսիք են ռիսկերի նախնական գնահատումները եւ գրավոր ընթացակարգերը:
3. Ճառագայթումից պաշտպանության փորձագետն անհրաժեշտության դեպքում կապ է հաստատում բժշկական ֆիզիկայի փորձագետի հետ:
4. Ազգային օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում ճառագայթումից պաշտպանության փորձագետին կարող են հանձնարարվել աշխատողների եւ հանրության անդամների ճառագայթումից պաշտպանության առաջադրանքները:

*Հոդված 83***Բժշկական ֆիզիկայի փորձագետը**

1. Անդամ պետությունները բժշկական ֆիզիկայի փորձագետից պահանջում են անհրաժեշտության դեպքում գործել կամ տալ մասնագիտական խորհուրդ ճառագայթային ֆիզիկայի հետ կապված հարցերի վերաբերյալ՝ սույն հրահանգի VII գլխում եւ 22(4) հոդվածի «գ» կետում սահմանված պահանջներն իրականացնելու համար:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ, կախված բժշկական ճառագայթային գործունեությունից, բժշկական ֆիզիկայի փորձագետը պատասխանատվություն ստանձնի դոզիմետրիայի, այդ թվում՝ հիվանդի եւ բժշկական ճառագայթահարման ենթարկվող այլ անհատների ստացած դոզայի գնահատման համար իրականացվող ֆիզիկական չափումների համար, խորհրդատվություն տրամադրի բժշկական ճառագայթային սարքավորումների վերաբերյալ եւ նպաստի, մասնավորապես, հետեւյալին՝

- ա) հիվանդների եւ բժշկական ճառագայթահարման ենթարկվող այլ անհատների ճառագայթումից պաշտպանության օպտիմալացում, այդ թվում՝ ախտորոշիչ էտալոնային մակարդակների կիրառում եւ օգտագործում.
- բ) բժշկական ճառագայթային սարքավորումների որակի ապահովման սահմանում եւ իրականացում.
- գ) բժշկական ճառագայթային սարքավորումների ընդունման փորձարկում.
- դ) բժշկական ճառագայթային սարքավորումների համար տեխնիկական մասնագրերի պատրաստում եւ կայանքների նախագծում.
- ե) բժշկական ճառագայթային կայանքների վերահսկողություն.
- զ) այնպիսի դեպքերի վերլուծություն, որոնք ներառում են կամ կարող են ներառել պատահարային կամ չնախատեսված բժշկական ճառագայթահարում.

- է) ճառագայթումից պաշտպանության մասով չափումներ իրականացնելու համար պահանջվող սարքավորումների ընտրություն.
- ը) բուժաշխատողների եւ այլ աշխատակազմի վերապատրաստում ճառագայթումից պաշտպանության համապատասխան ասպեկտների վերաբերյալ:
3. Բժշկական ֆիզիկայի փորձագետն անհրաժեշտության դեպքում կապ է հաստատում ճառագայթումից պաշտպանության փորձագետի հետ:

Հոդված 84

Ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձը

1. Անդամ պետությունները որոշում են, թե ո՞ր գործելակերպերում է անհրաժեշտ ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձ նշանակելը՝ կազմակերպությունում ճառագայթումից պաշտպանության մասով առաջադրանքները վերահսկելու կամ կատարելու համար: Անդամ պետությունները կազմակերպություններից պահանջում են ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձանց տրամադրել իրենց առաջադրանքները կատարելու համար նրանց անհրաժեշտ միջոցները: Ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձը զեկուցում է անմիջապես կազմակերպությանը: Անդամ պետությունները կարող են բացօթյա տարածքներում աշխատողների գործատուներից պահանջել նշանակել ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձ, որն այնքանով է անհրաժեշտ ճառագայթումից համապատասխան պաշտպանության մասով առաջադրանքները վերահսկելու կամ կատարելու համար, որքանով դրանք կապված են իրենց աշխատողների պաշտպանության հետ:
2. Կախված գործելակերպի բնույթից՝ ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձի՝ կազմակերպությանն օժանդակելու հարցում առաջադրանքները կարող են ներառել հետեւյալը՝

- ա) ապահովել, որ ճառագայթման հետ աշխատանքն իրականացվի ցանկացած սահմանված ընթացակարգի կամ տեղական կանոնների պահանջներին համապատասխան.
- բ) վերահսկել աշխատավայրի դիտանցման ծրագրի իրականացումը.
- գ) վարել ճառագայթման բոլոր աղբյուրների վերաբերյալ պատշաճ գրառումներ.
- դ) իրականացնել անվտանգության եւ նախազգուշացման համապատասխան համակարգերի պարբերական գնահատումներ.
- ե) վերահսկել անհատական դիտանցման ծրագրի իրականացումը.
- զ) վերահսկել առողջության հսկողության ծրագրի իրականացումը.
- է) նոր աշխատողներին տրամադրել պատշաճ համառոտ տեղեկություններ՝ տեղական կանոնների եւ ընթացակարգերի վերաբերյալ.
- ը) խորհրդատվություն եւ մեկնաբանություններ տրամադրել աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.
- թ) սահմանել աշխատանքային ծրագրեր.
- ժ) տրամադրել զեկույցներ տեղական ղեկավարությանը.
- ժա) մասնակցել ճառագայթահարման վթարային իրավիճակների կանխման, դրանց պատրաստվածության եւ արձագանքման մասով կարգադրություններին.
- ժբ) ճառագայթահարված աշխատողներին տեղեկությունների տրամադրում եւ նրանց վերապատրաստում.
- ժգ) կապ հաստատել ճառագայթումից պաշտպանության փորձագետի հետ:

3. Ճառագայթումից պաշտպանության համար պատասխանատու անձի առաջադրանքները կարող են իրականացվել կազմակերպությունում գործող ճառագայթային պաշտպանության կենտրոնի կամ ճառագայթումից պաշտպանության փորձագետի կողմից:

ԲԱԺԻՆ 2

Ռադիոակտիվ աղբյուրների հսկողությունը

Հոդված 85

Բաց աղբյուրներին ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ կարգադրություններ արվեն բաց աղբյուրների հսկողության մասով՝ դրանց գտնվելու վայրի, օգտագործման եւ, երբ այլեւս չեն պահանջվում, վերամշակման կամ հեռացման առնչությամբ:
2. Անդամ պետությունները կազմակերպությունից պահանջում են անհրաժեշտության դեպքում եւ հնարավորինս վարել դրա պատասխանատվության տակ գտնվող բաց աղբյուրների, այդ թվում՝ գտնվելու վայրի, տեղափոխման եւ հեռացման կամ արտազատման վերաբերյալ գրառումներ:
3. Անդամ պետությունները բաց ռադիոակտիվ աղբյուրի տիրապետող յուրաքանչյուր կազմակերպությունից պահանջում են իրավասու մարմնին անհապաղ ծանուցել ցանկացած կորստի, գողության, նշանակալից չափով թափվելու կամ չթույլատրված օգտագործման կամ արտանետման մասին:

Հոդված 86

Փակ աղբյուրներին ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ կարգադրություններ արվեն փակ աղբյուրների հսկողության մասով՝ դրանց գտնվելու վայրի, օգտագործման եւ, երբ այլեւս չեն պահանջվում, վերամշակման կամ հեռացման առնչությամբ:
2. Անդամ պետությունները կազմակերպությունից պահանջում են վարել դրա պատասխանատվության տակ գտնվող բոլոր փակ աղբյուրների, այդ թվում՝ գտնվելու վայրի, տեղափոխման եւ հեռացման վերաբերյալ գրառումներ:
3. Անդամ պետությունները սահմանում են համակարգ, որպեսզի հնարավոր լինի, որ նրանք պատշաճորեն տեղեկացվեն բարձր ակտիվությամբ փակ աղբյուրի ցանկացած տեղափոխման մասին եւ, անհրաժեշտության դեպքում, փակ աղբյուրների անհատական տեղափոխումների մասին:
4. Անդամ պետությունները փակ աղբյուրի տիրապետող յուրաքանչյուր կազմակերպությունից պահանջում են իրավասու մարմնին անհապաղ ծանուցել ցանկացած կորստի, նշանակալի արտահոսքի, գողության կամ չթույլատրված օգտագործման մասին:

Հոդված 87

Բարձր ակտիվությամբ փակ աղբյուրների հսկողությանը ներկայացվող պահանջները

Անդամ պետություններն ապահովում են, որ մինչեւ բարձր ակտիվությամբ փակ աղբյուրներ ներառող գործելակերպերի համար թույլտվություն տրամադրելը՝

ա) արվեն պատշաճ կարգադրություններ՝ ուղղված աղբյուրների անվտանգ կառավարմանը եւ հսկողությանը, այդ թվում՝ երբ դրանք դառնան անօգտագործելի: Այսպիսի կարգադրություններով կարող են նախատեսվել անօգտագործելի աղբյուրների տեղափոխում մատակարարների մոտ կամ դրանց

տեղադրումը հեռացման կամ պահեստավորման տեղակայանքներում կամ դրանք ստանալու պարտավորություն արտադրողի կամ մատակարարի համար.

բ) նախատեսվի պատշաճ դրույթ՝ ֆինանսական ապահովման կամ տվյալ աղբյուրին համապատասխան այլ համարժեք միջոցներով, աղբյուրների՝ անօգտագործելի աղբյուրներ դառնալու դեպքում անվտանգ կառավարման վերաբերյալ, այդ թվում՝ այն դեպքերում, երբ կազմակերպությունը դառնում է անվճարունակ կամ դադարեցնում է իր գործունեությունը:

Հոդված 88

Բարձր ակտիվությամբ փակ աղբյուրների լիցենզավորմանը ներկայացվող հատուկ պահանջները

Ի հավելումն V գլխում սահմանված՝ լիցենզավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջների, անդամ պետություններն ապահովում են, որ բարձր ակտիվությամբ փակ աղբյուր ներառող գործելակերպի լիցենզիան ներառի հետևյալը, սակայն չսահմանափակվի դրանցով՝

- ա) պատասխանատվություններ.
- բ) աշխատակազմի նվազագույն որակավորումներ, այդ թվում՝ տեղեկությունների տրամադրում եւ վերապատրաստում.
- գ) աղբյուրի, աղբյուրի կոնտեյնների եւ լրացուցիչ սարքավորումների աշխատանքի նվազագույն չափորոշիչներ.
- դ) վթարների դեպքում կիրառվող ընթացակարգերին եւ կապուղիներին ներկայացվող պահանջներ.
- ե) աշխատանքային ընթացակարգեր, որոնց պետք է հետեւել.
- զ) սարքավորումների, աղբյուրների եւ կոնտեյնրների սպասարկում.

է) անօգտագործելի աղբյուրների պատշաճ կառավարում, այդ թվում՝ անօգտագործելի աղբյուրներն անհրաժեշտության դեպքում արտադրողի, մատակարարի մոտ, մեկ այլ լիազորված կազմակերպություն կամ թափոնների հեռացման կամ պահեստավորման տեղակայանք տեղափոխելու վերաբերյալ պայմանագրեր:

Հոդված 89

Գրառումների վարումը կազմակերպության կողմից

Անդամ պետությունները պահանջում են, որ բարձր ակտիվությամբ փակ աղբյուրների վերաբերյալ արձանագրությունները ներառեն XIV հավելվածում սահմանված տեղեկությունները, եւ որ կազմակերպությունն իրավասու մարմինն տրամադրի այդ բոլոր արձանագրությունների կամ դրանց մի մասի էլեկտրոնային կամ գրավոր օրինակն ըստ պահանջի եւ առնվազն հետեւյալ պայմաններով՝

- ա) առանց անտեղի ուշացման, այդպիսի արձանագրությունները ստեղծելու պահին, ինչը պետք է լինի աղբյուրը ձեռք բերելուց հետո ողջամտության սահմաններում հնարավորինս շուտ.
- բ) անդամ պետությունների կողմից որոշվելիք պարբերականությամբ.
- գ) եթե տեղեկությունների թերթիկում նշված իրավիճակը փոխվել է.
- դ) առանց անտեղի ուշացման, կոնկրետ աղբյուրի վերաբերյալ գրառումները դադարեցնելուց հետո, երբ կազմակերպությունն այլեւս չի տիրապետում այդ աղբյուրին, որում պետք է ներառվեն կազմակերպության կամ թափոնների հեռացման կամ պահեստավորման այն տեղակայանքի անվանումը, ուր տեղափոխվում է աղբյուրը.
- ե) առանց անտեղի ուշացման, այդպիսի գրառումները դադարեցնելուց հետո, երբ կազմակերպությունն այլեւս չի տիրապետում որեւէ աղբյուրի:

Կազմակերպության գրառումները պետք է հասանելի լինեն իրավասու մարմնի կողմից ստուգման համար:

Հոդված 90

Գրառումների վարումն իրավասու մարմնի կողմից

Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը գրառումներ վարի բարձր ակտիվությամբ փակ աղբյուրներով գործելակերպեր իրականացնել լիազորված ցանկացած կազմակերպության եւ այն բարձր ակտիվությամբ փակ աղբյուրի վերաբերյալ, որին տիրապետում է: Այդ գրառումները պետք է ներառեն տվյալ ռադիոակտիվ իզոտոպը, ակտիվությունն արտադրման պահին կամ, եթե այդ ակտիվությունը հայտնի չէ, առաջին անգամ շուկայահանվելու պահին կամ կազմակերպության կողմից աղբյուրը ձեռք բերելու պահին առկա ակտիվությունը եւ աղբյուրի տեսակը: Իրավասու մարմինը գրառումները թարմացված է պահում՝ հաշվի առնելով աղբյուրների տեղափոխումները եւ այլ գործոններ:

Հոդված 91

Բարձր ակտիվությամբ փակ աղբյուրների հսկողությունը

1. Անդամ պետությունները պահանջում են, որ բարձր ակտիվությամբ փակ աղբյուրներ ներառող գործունեություն իրականացնող կազմակերպությունը բավարարի XV հավելվածում սահմանված պահանջները:
2. Անդամ պետությունները պահանջում են, որ արտադրողը, մատակարարը եւ յուրաքանչյուր կազմակերպություն ապահովի, որ բարձր ակտիվությամբ փակ աղբյուրները եւ կոնտեյներները բավարարեն սահմանմանը եւ մակնշմանը ներկայացվող պահանջները՝ ինչպես սահմանված է XVI հավելվածում:

*ԲԱԺԻՆ 3***Տիրազուրկ աղբյուրները**

Հոդված 92

Տիրազուրկ աղբյուրների հայտնաբերումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ արվեն կարգադրություններ՝
 - ա) որոնք բարձրացնում են տիրազուրկ աղբյուրների եւ դրանց հետ կապված վտանգների հնարավոր առաջացման վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածության մակարդակը. եւ
 - բ) որոնցով իրավասու մարմինն տեղեկացնելու եւ ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ ուղղորդում է տրամադրվում այն անձանց, որոնք կասկած ունեն կամ տեղյակ են տիրազուրկ աղբյուրի առկայության մասին:
2. Անդամ պետությունները խրախուսում են այն համակարգերի ստեղծումը, որոնք ուղղված են տիրազուրկ աղբյուրների հայտնաբերմանն այնպիսի վայրերում, ինչպիսիք են մետաղի ջարդոնի խոշոր հրապարակները եւ մետաղի ջարդոնի վերամշակման խոշոր կայանքները, որտեղ սովորաբար կարելի է հանդիպել տիրազուրկ աղբյուրների, կամ, պատշաճ դեպքերում, տարանցման հանգուցային կարեւոր կետերում:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ անհապաղ տեխնիկական հարցերով մասնագիտացված խորհրդատվություն եւ օժանդակություն տրամադրվի այն անձանց, որոնք կասկած ունեն տիրազուրկ աղբյուրի առկայության մասին, եւ որոնք սովորաբար ներգրավված չեն ճառագայթումից պաշտպանության մասով պահանջներին ենթակա գործողություններում: Խորհրդատվության եւ օժանդակության առաջնային նպատակն է աշխատողների եւ հանրության մյուս անդամների պաշտպանությունը ճառագայթումից եւ աղբյուրի անվտանգությունը:

Հոդված 93

Մետաղների աղտոտումը

1. Անդամ պետությունները խրախուսում են երրորդ երկրներից ներմուծված մետաղական ապրանքներում, այնպիսի վայրերում ռադիոակտիվ աղտոտվածության առկայության հայտնաբերման համակարգերի ստեղծումը, ինչպիսիք են մետաղների ներկրման խոշորագույն կայանքները կամ տարանցման հանգուցային կարելուր կետերը:
2. Անդամ պետությունները պահանջում են, որ մետաղի ջարդոնի վերամշակման խոշոր կայանքի ղեկավարությունն անհապաղ տեղեկացնի իրավասու մարմնին այն դեպքում, երբ կասկած ունի կամ տեղյակ է տիրազուրկ աղբյուրի հավելվու կամ դրա հետ այլ մետաղագործական գործողություններ կատարվելու մասին, եւ պահանջի, որ աղտոտված նյութերը չօգտագործվեն, չշուկայահանվեն կամ չհեռացվեն առանց իրավասու մարմնի ներգրավման:

Հոդված 94

Տիրազուրկ աղբյուրները վերադարձնելը, կառավարելը, հսկելը եւ հեռացնելը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը պատրաստ լինի կամ միջոցներ նախատեսի, այդ թվում՝ պատասխանատվություններ սահմանի, հսկելու եւ վերադարձնելու տիրազուրկ աղբյուրները եւ կառավարելու տիրազուրկ աղբյուրների հետեւանքով առաջացող վթարները, ինչպես նաեւ մշակած լինի արձագանքման պատշաճ պլաններ ու միջոցառումներ:
 2. Անդամ պետություններն ապահովում են, որ պատշաճ դեպքում կազմակերպվեն արշավներ՝ նախկին գործելակերպերից մնացած տիրազուրկ աղբյուրները վերադարձնելու նպատակով:
- Արշավները կարող են ներառել անդամ պետությունների ֆինանսական

մասնակցությունն աղբյուրները վերադարձնելու, կառավարելու, հսկելու եւ հեռացնելու հետ կապված ծախսերում եւ կարող են նաեւ ներառել այնպիսի մարմինների եւ կազմակերպությունների գրանցամատյանների ուսումնասիրություններ, ինչպիսիք են հետազոտական ինստիտուտները, նյութերի փորձարկման ինստիտուտները կամ հիվանդանոցները:

Հոդված 95

Տիրազուրկ աղբյուրների ֆինանսական ապահովումը

Անդամ պետություններն ապահովում են, որ ստեղծվի ֆինանսական ապահովման համակարգ կամ այլ համարժեք միջոց՝ տիրազուրկ աղբյուրների վերադարձման հետ կապված միջամտության ծախսերը եւ այն ծախսերը ծածկելու համար, որոնք կարող են առաջանալ 94-րդ հոդվածի կիրարկման հետեւանքով:

ԲԱԺԻՆ 4

Կարելոր դեպքերը

Հոդված 96

Կարելոր դեպքերի մասին ծանուցումը եւ դրանց արձանագրումը

Անդամ պետությունները կազմակերպությունից պահանջում են՝

- ա) պատշաճ դեպքում կիրառել այնպիսի կարելոր դեպքերի արձանագրման եւ վերլուծության համակարգ, որոնք ներառում են կամ հնարավոր է, որ ներառեն պատահարային կամ չնախատեսված ճառագայթահարումներ.
- բ) իրավասու մարմինն անհապաղ ծանուցել ցանկացած կարելոր դեպքի մասին, որի արդյունքում առաջանում է կամ կարող է առաջանալ անհատի

ճառագայթահարում մասնագիտական կամ հանրային ճառագայթահարման առնչությամբ թույլտվության պահանջներում սահմանված աշխատանքային սահմաններից կամ աշխատանքային պայմաններից ավելի քանակությամբ, կամ իրավասու մարմնի կողմից բժշկական ճառագայթահարման համար սահմանված կարգով, այդ թվում՝ այդպիսի դեպքերի քննության արդյունքների եւ դրանցից խուսափելուն ուղղված միջոցների մասին:

ԲԱԺԻՆ 5

Վթարային ճառագայթահարման իրավիճակները

Հոդված 97

Վթարների կառավարման համակարգը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հաշվի առնվի այն փաստը, որ իրենց տարածքներում կարող են առաջանալ վթարներ, եւ որ նրանք կարող են ազդեցություն կրել իրենց տարածքից դուրս առաջացող վթարներից: Անդամ պետությունները ստեղծում են վթարների կառավարման համակարգ եւ նախատեսում պատշաճ վարչական դրույթներ՝ այդ համակարգը վարելու համար: Վթարների կառավարման համակարգը պետք է ներառի XI հավելվածի «Ա» բաժնում թվարկված տարրերը:

2. Վթարների կառավարման համակարգը պետք է նախատեսված լինի այնպես, որ համաչափ լինի վթարային ճառագայթահարման հնարավոր իրավիճակների գնահատման արդյունքներին եւ կարողանա արդյունավետորեն արձագանքել վթարային ճառագայթահարման իրավիճակներին՝ կապված գործելակերպերի կամ չկանխատեսված դեպքերի հետ:

3. Վթարների կառավարման համակարգով պետք է նախատեսվի վթարներին արձագանքման ծրագրեր, որոնց նպատակն է խուսափել ազդեցության

ենթարկված բնակչության ցանկացած անհատի համար ծանր դետերմինիստական ազդեցությունների հանգեցնող հյուսվածքային ռեակցիաներից եւ նվազեցնել ստոխաստիկ ազդեցությունների վտանգը՝ հաշվի առնելով ճառագայթումից պաշտպանության ընդհանուր սկզբունքները եւ III գլխում նշված էտալոնային մակարդակները:

Հոդված 98

Պատրաստվածությունը վթարներին

1. Անդամ պետություններն ապահովում են, որ վթարներին արձագանքման ծրագրերը սահմանվեն նախապես՝ վթարների տարբեր տեսակների համար, որոնք սահմանվում են վթարային ճառագայթահարման հնարավոր իրավիճակների գնահատմամբ:
2. Վթարներին արձագանքման ծրագրերը պետք է ներառեն XI հավելվածի «Բ» բաժնում սահմանված տարրերը:
3. Վթարներին արձագանքման ծրագրերը պետք է նաեւ ներառեն դրույթ՝ վթարային ճառագայթահարման իրավիճակից ճառագայթահարման առկա իրավիճակին անցում կատարելու վերաբերյալ:
4. Անդամ պետություններն ապահովում են, որ վթարներին արձագանքման ծրագրերը պարբերաբար փորձարկվեն, վերանայվեն եւ, անհրաժեշտության դեպքում, լրամշակվեն՝ հաշվի առնելով վթարային ճառագայթահարման նախկին իրավիճակներից քաղված դասերը եւ ազգային ու միջազգային մակարդակով վթարների վերաբերյալ վարժանքներին մասնակցության արդյունքները:
5. Վթարին արձագանքման ծրագրերը պետք է անհրաժեշտության դեպքում ընդգրկեն 97-րդ հոդվածում նշված՝ վթարների կառավարման համակարգի համապատասխան տարրերը:

*Հոդված 99***Միջազգային համագործակցությունը**

1. Անդամ պետությունները համագործակցում են այլ անդամ պետությունների եւ երրորդ երկրների հետ՝ իրենց տարածքներում հնարավոր այն վթարներին արձագանքելու հարցում, որոնք կարող են ազդել այլ անդամ պետությունների կամ երրորդ երկրների վրա՝ այդ անդամ պետություններում կամ երրորդ երկրներում ճառագայթումից պաշտպանության կազմակերպումը դյուրացնելու նպատակով:
2. Յուրաքանչյուր անդամ պետություն այն վթարի դեպքում, որն առաջանում է իր տարածքում կամ հնարավոր է, որ իր տարածքում ճառագայթային հետեւանքներ ունենա, անհապաղ կապ է հաստատում մյուս բոլոր անդամ պետությունների եւ երրորդ երկրների հետ, որոնք կարող են ներգրավված լինել կամ հնարավոր է, որ ազդեցության ենթարկվեն՝ ճառագայթահարման իրավիճակի գնահատմամբ կիսվելու եւ պաշտպանիչ միջոցներն ու հանրային տեղեկությունները երկկողմ կամ միջազգային տեղեկությունների փոխանակման եւ համակարգման համակարգերն անհրաժեշտության դեպքում օգտագործելու միջոցով համակարգելու նպատակով: Այդ համակարգման միջոցառումները չեն խոչընդոտում կամ հետաձգում որեւէ անհրաժեշտ գործողություն, որը պետք է ձեռնարկվի ազգային մակարդակով:
3. Յուրաքանչյուր անդամ պետություն անհապաղ կիսվում է տեղեկություններով եւ համագործակցում է համապատասխան անդամ պետությունների, համապատասխան երրորդ երկրների եւ համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ՝ բարձր ակտիվությամբ փակ աղբյուրների, այլ ռադիոակտիվ աղբյուրների եւ մտահոգիչ ռադիոակտիվ նյութի կորստի, գողության կամ հայտնաբերման եւ դրանցից բխող հետագա գործողությունների կամ քննությունների առնչությամբ՝ չխախտելով գաղտնիության համապատասխան պահանջները եւ համապատասխան ազգային օրենսդրությունը:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն վթարային ճառագայթահարման իրավիճակից ճառագայթահարման առկա իրավիճակի անցում կատարելիս անհրաժեշտության դեպքում համագործակցում է այլ անդամ պետությունների եւ երրորդ երկրների հետ:

ԲԱԺԻՆ 6

Ճառագայթահարման առկա իրավիճակները

Հոդված 100

Ճառագայթահարման առկա իրավիճակների վերաբերյալ ծրագրերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ այն ճառագայթահարումների վերաբերյալ նշանների կամ ապացույցի դեպքում, որոնք չի կարելի անտեսել ճառագայթումից պաշտպանության տեսանկյունից, ձեռնարկվեն միջոցներ՝ ճառագայթահարման առկա իրավիճակները հայտնաբերելու եւ գնահատելու համար՝ հաշվի առնելով XVII հավելվածում թվարկված՝ ճառագայթահարման առկա իրավիճակների տեսակները, եւ համապատասխան մասնագիտական եւ հանրային ճառագայթահարումները որոշելու համար:
2. Անդամ պետությունները կարող են, հաշվի առնելով հիմնավորման ընդհանուր սկզբունքը, որոշել, որ ճառագայթահարման առկա իրավիճակը չի երաշխավորում պաշտպանիչ կամ ուղղիչ միջոցների քննարկում:
3. Ճառագայթահարման առկա այն իրավիճակները, որոնք մտահոգիչ են ճառագայթումից պաշտպանության տեսանկյունից, եւ որոնց համար չի կարող սահմանվել իրավական պատասխանատվություն, պետք է ենթակա լինեն ճառագայթահարման պլանավորված իրավիճակներին ներկայացվող համապատասխան պահանջներին եւ, համապատասխանաբար, պետք է պահանջվի, որ ճառագայթահարման այդպիսի իրավիճակների մասին ծանուցվի 25(2) հոդվածով սահմանված կարգով:

*Հոդված 101***Ռազմավարությունների սահմանումը**

1. Անդամ պետությունները կարգադրություններ են անում ռազմավարություններ սահմանելու մասով՝ ճառագայթահարման առկա իրավիճակների՝ ռիսկերի եւ պաշտպանիչ միջոցների արդյունավետությանը համաչափ պատշաճ կառավարումն ապահովելու համար:
2. Յուրաքանչյուր ռազմավարություն պետք է ներառի
 - ա) հետապնդվող նպատակները.
 - բ) պատշաճ էտալոնային մակարդակներ՝ հաշվի առնելով I հավելվածում սահմանված էտալոնային մակարդակները:

*Հոդված 102***Ռազմավարությունների իրականացումը**

1. Անդամ պետությունները սահմանում են պատասխանատվություններ ճառագայթահարման առկա իրավիճակների կառավարման ռազմավարությունների իրականացման համար եւ ապահովում են պատշաճ համակարգում համապատասխան կողմերի միջեւ, որոնք ներգրավված են ուղղիչ եւ պաշտպանիչ միջոցների իրականացմանը: Անդամ պետություններն անհրաժեշտության դեպքում նախատեսում են շահագրգիռ կողմերի ներգրավվածություն ճառագայթահարման առկա իրավիճակների կառավարման ռազմավարությունների մշակման եւ իրականացման վերաբերյալ որոշումների կայացմանը:
2. Պետք է օպտիմալացվեն ռազմավարության իրականացման առումով քննարկվող բոլոր պաշտպանիչ միջոցների ձեւը, ծավալը եւ տեւողությունը:

3. Պետք է գնահատվի ռազմավարության իրականացման արդյունքում առաջացող ռիզիկների բաշխումը: Պետք է քննարկվեն հետագա ջանքերը՝ պաշտպանությունն օպտիմալացնելու եւ էտալոնային մակարդակից դեռեւս բարձր ցանկացած ճառագայթահարում նվազեցնելու նպատակով:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ ռազմավարության իրականացման համար պատասխանատու անձինք պարբերաբար՝

ա) գնահատեն նպատակներին հասնելու համար հասանելի ուղղիչ եւ պաշտպանիչ միջոցները եւ ծրագրված ու իրականացված միջոցների արդյունավետությունը.

բ) ճառագայթահարման ենթարկված բնակչությանը տեղեկություններ տրամադրեն առողջությանը ներկայացվող հնարավոր վտանգների եւ նրանց ճառագայթահարումը նվազեցնելու համար հասանելի միջոցների վերաբերյալ.

գ) ուղղորդում տրամադրեն ճառագայթահարումներն անհատական եւ տեղական մակարդակով կառավարելու համար.

դ) բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութ ներառող այն գործողությունների առնչությամբ, որոնք չեն կառավարվում որպես ճառագայթահարման պլանավորված իրավիճակներ, տեղեկություններ տրամադրեն կոնցենտրացիաները եւ ճառագայթահարումները պատշաճորեն դիտանցելու եւ պաշտպանիչ միջոցներ ձեռնարկելու համար պատշաճ միջոցների վերաբերյալ:

Հոդված 103

Ռադոնի մասով գործողությունների ծրագիրը

1. 100(1) հոդվածը կիրառելիս անդամ պետությունները սահմանում են գործողությունների ազգային ծրագիր, որով անդրադառնում են հանրային

մատչելիությամբ կացարաններում, շենքերում եւ աշխատավայրերում ռադոնից ճառագայթահարման երկարաժամկետ ռիսկերին՝ կապված ռադոնի ներթափանցման ցանկացած աղբյուրի հետ՝ լինի հողից, շինարարական նյութերից, թե ջրից: Գործողությունների ծրագրով պետք է հաշվի առնել XVIII հավելվածում սահմանված խնդիրները, եւ այն պետք է պարբերաբար թարմացվի:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ գործեն պատշաճ միջոցներ՝ ռադոնի ներթափանցումը նոր շենքեր կանխելու համար: Այդ միջոցները կարող են ներառել ազգային շինարարական նորմերում առկա հատուկ պահանջներ:

3. Անդամ պետությունները սահմանում են այն գոտիները, որտեղ ակնկալվում է, որ ռադոնի կոնցենտրացիան (տարեկան միջինը) զգալի թվով շենքերում կգերազանցի համապատասխան ազգային էտալոնային մակարդակը:

ԲԱԺԻՆ 7

Կիրարկման համակարգը

Հոդված 104

Ստուգումները

1. Անդամ պետությունները ստեղծում են ստուգումների համակարգ կամ համակարգեր՝ սույն հրահանգին համաձայն ընդունված դրույթները կիրարկելու եւ, անհրաժեշտության դեպքում, վերահսկողական ու ուղղիչ գործողություններ ձեռնարկելու համար:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը սահմանի ստուգման ծրագիր՝ հաշվի առնելով գործելակերպերի հետ կապված վտանգի հնարավոր մագնիտուդը եւ բնույթը, գործելակերպերում ճառագայթումից պաշտպանության հետ կապված առկա խնդիրների ընդհանուր գնահատումը եւ սույն հրահանգի համաձայն ընդունված դրույթներին համապատասխանության վիճակը:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ յուրաքանչյուր ստուգման արդյունքներն արձանագրվեն եւ հաղորդվեն շահագրգիռ կազմակերպությանը: Եթե արդյունքները կապված են բացօթյա տարածքներում աշխատողի կամ աշխատողների հետ, ապա, անհրաժեշտության դեպքում, արդյունքները պետք է նաեւ հաղորդվեն գործատուին:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ ստուգման ծրագրի հիմնական սկզբունքները եւ դրանց իրականացման արդյունքները հանրությանը հասանելի լինեն:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ գործեն համապատասխան կողմերին, այդ թվում՝ ճառագայթման աղբյուրներ արտադրողներին ու մատակարարներին եւ, անհրաժեշտության դեպքում, միջազգային կազմակերպություններին ստուգումներից եւ այն միջադեպերից ու պատահարներից եւ դրանց հետ կապված արդյունքներից քաղված կարելու դասերը ժամանակին հայտնելու մեխանիզմներ, որոնց մասին հաղորդումներ են ներկայացվել:

Հոդված 105

Կիրարկումը

Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինն ունենա լիազորություն ցանկացած անհատից կամ իրավաբանական անձից պահանջելու ձեռնարկել գործողություն՝ թերությունները վերացնելու եւ դրանց կրկին առաջացումը կանխելու համար կամ, անհրաժեշտության դեպքում, լիազորությունից հրաժարվել, եթե կանոնավոր ստուգման կամ մեկ այլ կանոնավոր գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ճառագայթահարման իրավիճակը չի համապատասխանում սույն հրահանգի համաձայն ընդունված դրույթներին:

ԳԼՈՒԽ X

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ*Հոդված 106***Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները մինչև 2018 թվականի փետրվարի 6-ը գործողության մեջ են դնում սույն հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները:

2. Եթե անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին կամ իրենց պաշտոնական հրապարակման դեպքում պետք է ուղեկցվեն այդպիսի հղումով: Անդամ պետությունները որոշում են, թե ինչպես պետք է կատարվի այդպիսի հղումը:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին ներկայացնում են ազգային օրենսդրության դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող բնագավառում:

*Հոդված 107***Ուժը կորցրած ճանաչելը**

89/618/Եվրատոմ, 90/641/Եվրատոմ, 96/29/Եվրատոմ, 97/43/Եվրատոմ եւ 2003/122/Եվրատոմ հրահանգներն ուժը կորցրած են ճանաչվում 2018 թվականի փետրվարի 6-ից:

Ուժը կորցրած հրահանգներին կատարված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն հրահանգին կատարված հղումներ եւ պետք է ընթերցվեն ըստ XIX հավելվածով նախատեսված համեմատական աղյուսակի:

*Հոդված 108***Ուժի մեջ մտնելը**

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

*Հոդված 109***Հասցեատերերը**

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2013 թվականի դեկտեմբերի 5-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ռ. ՍԻՆԿԵՎԻՉԻՈՒՍ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***Հանրային ճառագայթահարման էտալոնային մակարդակները՝
ինչպես նշված է 7-րդ և 101-րդ հոդվածներում**

1. Չխախտելով համարժեք դոզաների համար սահմանված էտալոնային մակարդակները՝ արդյունարար դոզաներով արտահայտված էտալոնային մակարդակները պետք է սահմանվեն տարեկան 1-20 մՋվ-ի միջակայքում՝ ճառագայթահարման առկա իրավիճակների համար եւ 20-100 մՋվ (սուր կամ տարեկան)՝ վթարային ճառագայթահարման իրավիճակների համար:
2. Հատուկ իրավիճակներում կարող են դիտարկվել 1-ին կետում նշված միջակայքերից ցածր էտալոնային մակարդակ, մասնավորապես՝
 - ա) 20 մՋվ-ից ցածր էտալոնային մակարդակ կարող է սահմանվել վթարային ճառագայթահարման իրավիճակում, եթե կարող է տրամադրվել պատշաճ պաշտպանություն՝ չպատճառելով անհամաչափ վնաս համապատասխան հակազդման միջոցներից կամ չհանգեցնելով չափազանց բարձր գնի.
 - բ) անհրաժեշտության դեպքում կարող է սահմանվել տարեկան 1 մՋվ-ից ցածր էտալոնային մակարդակ ճառագայթահարման առկա իրավիճակում՝ հատուկ աղբյուրների հետ կապված ճառագայթահարումների կամ ճառագայթահարման ուղիների համար:
3. Վթարային ճառագայթահարման իրավիճակից ճառագայթահարման առկա իրավիճակի անցում կատարելու համար պետք է սահմանվեն պատշաճ էտալոնային մակարդակներ, մասնավորապես՝ այնպիսի երկարաժամկետ հակազդման միջոցների դադարումից հետո, ինչպիսին է այլ վայր տեղափոխելը:
4. Սահմանված էտալոնային մակարդակներով պետք է հաշվի առնել գերակայող իրավիճակների հատկանիշները, ինչպես նաեւ հասարակական չափորոշիչները, որոնք կարող են ներառել հետեւյալը՝

- ա) տարեկան 1 մՁվ-ից ցածր կամ դրան հավասար ճառագայթահարումների համար՝ ընդհանուր տեղեկություններ ճառագայթահարման մակարդակի վերաբերյալ՝ առանց հատուկ քննարկելու անհատական ճառագայթահարումները.
- բ) տարեկան մինչեւ 20 մՁվ կամ դրան հավասար միջակայքի դեպքում՝ հատուկ տեղեկություններ՝ անհատներին իրենց անհատական ճառագայթահարումը հնարավորության դեպքում կառավարելու հնարավորություն տալու համար.
- գ) տարեկան մինչեւ 100 մՁվ կամ դրան հավասար միջակայքի դեպքում՝ անհատական դոզաների գնահատում եւ հատուկ տեղեկություններ ճառագայթման վտանգների եւ ճառագայթահարումների նվազեցմանն ուղղված հասանելի գործողությունների վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Ճառագայթային եւ հյուսվածքային կշռային գործակիցները՝ ինչպես սահմանված են 4-րդ հոդվածի 25-րդ եւ 33-րդ կետերում

Ա. Ճառագայթային կշռային գործակիցները

Ճառագայթման տեսակը	W_R
Ֆոտոններ	1
Էլեկտրոններ եւ մյուսներ	1
Պրոտոններ եւ լիցքավորված պիոններ	2
Ալֆա մասնիկներ, տրոհման բեկորներ, ծանր իոններ	20
Նեյտրոններ, $E_n < 1$ ՄԷՎ	$2,5 + 18,2 e^{-[\ln(E_n)]^{2/6}}$
Նեյտրոններ, $1 \text{ ՄԷՎ} \leq E_n \leq 50 \text{ ՄԷՎ}$	$5,0 + 17,0 e^{-[\ln(2 E_n)]^{2/6}}$
Նեյտրոններ, $E_n > 50 \text{ ՄԷՎ}$	$2,5 + 3 \cdot 25 e^{-[\ln(0,04 E_n)]^{2/6}}$

Ծանոթագրություն. Բոլոր արժեքները վերաբերում են մարմնի հետ կապված ճառագայթման միջադեպին կամ ներքին ճառագայթման աղբյուրների դեպքում՝ ներառված ռադիոակտիվ իզոտոպից (ռադիոակտիվ իզոտոպներից) արձակված ճառագայթման միջադեպին:

Բ. Հյուսվածքային կշռային գործակիցները

Հյուսվածքը	W_T
Ոսկրածուծ (կարմիր)	0,12
Հաստ աղիք	0,12
Թոք	0,12
Ստամոքս	0,12
Կրծքագեղձ	0,12
Մնացած հյուսվածքները (*)	0,12

Ձվարաններ	0,08
Միզապարկ	0,04
Կերակրափող	0,04
Լյարդ	0,04
Վահանաձեւ գեղձ	0,04
Ոսկրային մակերես	0,01
Գլխուղեղ	0,01
Թքագեղձեր	0,01
Մաշկ	0,01

- * Մնացած հյուսվածքների դեպքում w_{T-L} (0,12) վերաբերում է ստորեւ թվարկված յուրաքանչյուր սեռի համար 13 օրգանների եւ հյուսվածքների միջին թվաքանական դրզային: Մնացած հյուսվածքները՝ մակերիկամներ, արտակրծքավանդակային (ԱԿ) գոտի, լեղապարկ, սիրտ, երիկամներ, ավշային հանգույցներ, մկան, բերանի խոռոչի լորձաթաղանթ, ենթաստամոքսային գեղձ, շագանակագեղձ (արական), բարակ աղիք, փայծաղ, ուրցագեղձ, արգանդ/վզիկ (իգական):

ՀԱՎԵԼՎԱԾ III

Բարձր ակտիվությամբ փակ աղբյուրները սահմանող ակտիվության արժեքները՝ ինչպես նշված է 4-րդ հոդվածի 43-րդ կետում

Ստորև ներկայացված աղյուսակում չթվարկված ռադիոակտիվ իզոտոպների դեպքում համապատասխան ակտիվությունը նույնական է ԱԷՄԳ-ի «Ռադիոակտիվ նյութի վտանգավոր քանակությունները (D-արժեքներ), (EPR-D-VALUES 2006)» հրապարակման մեջ սահմանված D-արժեքներին:

Ռադիոակտիվ իզոտոպը	Ակտիվությունը (ՏԲք)
Am-241	6×10^{-2}
Am-241/Be-9 (¹)	6×10^{-2}
Cf-252	2×10^{-2}
Cm-244	5×10^{-2}
Co-60	3×10^{-2}
Cs-137	1×10^{-1}
Gd-153	1×10^0
Ir-192	8×10^{-2}
Pm-147	4×10^1
Pu-238	6×10^{-2}
Pu-239/Be-9 (¹)	6×10^{-2}
Ra-226	4×10^{-2}
Se-75	2×10^{-1}
Sr-90 (Y-90)	1×10^0
Tm-170	2×10^1
Yb-169	3×10^{-1}

¹ Տվյալ ակտիվությունն ալֆա մասնիկներ արձակող ռադիոակտիվ իզոտոպի ակտիվությունն է

ՀԱՎԵԼՎԱԾ IV**Սպառողական ապրանքներ ներառող գործելակերպերի նոր դասերի կամ տեսակների հիմնավորումը՝ ինչպես նշված է 20-րդ հոդվածում**

Ա. Ցանկացած կազմակերպություն, որը մտադրված է արտադրել կամ անդամ պետություն ներմուծել սպառողական ապրանքներ, որոնց նպատակային օգտագործումը հավանական է, որ կհանգեցնի գործելակերպի նոր դասի կամ տեսակի, պետք է այդ անդամ պետության իրավասու մարմնին տրամադրի բոլոր համապատասխան տեղեկությունները հետեւյալի վերաբերյալ՝

- 1) ապրանքի նպատակային օգտագործում.
- 2) ապրանքի տեխնիկական բնութագրեր.
- 3) ռադիոակտիվ նյութեր պարունակող ապրանքների դեպքում՝ տեղեկություններ դրանց փաթեթավորման վերաբերյալ.
- 4) համապատասխան հեռավորությունների վրա ապրանքի օգտագործման դոզայի հզորություն, այդ թվում՝ դոզայի հզորությունը ցանկացած հասանելի մակերեսից 0,1 մ հեռավորության վրա.
- 5) ակնկալվող դոզաները, որոնք ստանալու են ապրանքների կանոնավոր օգտագործողները:

Բ. Իրավասու մարմինը պետք է ուսումնասիրի այդ տեղեկությունները եւ, մասնավորապես, գնահատի, թե արդյոք՝

- 1) սպառողական ապրանքի աշխատանքային բնութագրերը հիմնավորում են դրա նպատակային օգտագործումը.
- 2) նախագծումը պատշաճ է՝ բնականոն օգտագործման դեպքում ճառագայթահարումները եւ ոչ պատշաճ օգտագործման կամ պատահական

ճառագայթահարումների հավանականությունը եւ հետեւանքները նվազագույնի հասցնելու նպատակով, կամ թե արդյոք ապրանքի տեխնիկական եւ ֆիզիկական բնութագրերի նկատմամբ պետք է կիրառվեն պայմաններ.

3) ապրանքը նախագծված է պատշաճ ձեով՝ ազատման չափորոշիչները բավարարելու համար, եւ, կիրառելիության դեպքում, հաստատված տեսակի է եւ հատուկ նախազգուշական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում այլեւս օգտագործման մեջ չլինելու ընթացքում հեռացման համար.

4) ապրանքը պատշաճորեն պիտակավորված է եւ սպառողին տրամադրվել են պատշաճ օգտագործման եւ հեռացման ցուցումներով համապատասխան փաստաթղթեր:

ՀԱՎԵԼՎԱԾ V

**Ոչ բժշկական պատկերման նպատակներով ճառագայթահարում
ներառող գործելակերպերի օրինակելի ցանկը՝
ինչպես նշված է 22-րդ հոդվածում**

Բժշկական ճառագայթային սարքավորումներ օգտագործող գործելակերպեր՝

1. Առողջության ճառագայթային գնահատում՝ աշխատանքի ընդունելու նպատակներով.
2. Առողջության ճառագայթային գնահատում՝ ներգաղթի նպատակներով.
3. Առողջության ճառագայթային գնահատում՝ ապահովագրական նպատակներով.
4. Երեխաների եւ չափահասների ֆիզիկական զարգացվածության ճառագայթային գնահատում՝ սպորտի, պարի եւ այլ ոլորտներում կարիերա ունենալու նպատակով.
5. Տարիքի ճառագայթային գնահատում.
6. Իոնացնող ճառագայթման օգտագործում՝ մարդու մարմնում թաքցրած առարկաների հայտնաբերման համար:

Բժշկական ճառագայթային սարքավորումներ չօգտագործող գործելակերպեր՝

1. Իոնացնող ճառագայթման օգտագործում մարդու մարմնի վրա գտնվող կամ դրան ամրացված թաքցրած առարկաների հայտնաբերման համար.
2. Իոնացնող ճառագայթման օգտագործում թաքցրած մարդկանց հայտնաբերման համար՝ որպես բեռների զննության մաս.
3. Իրավական կամ անվտանգության նպատակներով իոնացնող ճառագայթման օգտագործում ներառող գործելակերպեր:

*ՀԱՎԵԼՎԱԾ VI***Բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութ ներառող արդյունաբերական ոլորտների ցանկը՝ ինչպես նշված է 23-րդ հոդվածում**

23-րդ հոդվածը կիրառելիս պետք է հաշվի առնել բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութ պարունակող արդյունաբերական ոլորտների, այդ թվում՝ հետազոտության եւ համապատասխան երկրորդային գործընթացների հետեւյալ ցանկը.

- Հազվագյուտ հողային տարրերի արդյունահանում մոնացիտից
- Թորիումի միացությունների արտադրություն եւ թորիում պարունակող ապրանքների մշակում
- Նիոբիումի/տանտալի հանքաքարի մշակում
- Նավթի եւ գազի արտադրություն
- Երկրաջերմային էներգիայի արտադրություն
- TiO_2 պիգմենտի արտադրություն
- Զերմային ֆոսֆորի արտադրություն
- Ցիրկոնի եւ ցիրկոնիումի արդյունաբերություն
- Ֆոսֆորական պարարտանյութերի արտադրություն
- Ցեմենտի արտադրություն, կլինկերի վառարանների սպասարկում
- Ածխային էլեկտրակայաններ, կաթսաների սպասարկում
- Ֆոսֆորաթթվի արտադրություն
- Երկաթի առաջնային արտադրություն
- Անագի/կապարի/պղնձի հալվածք
- Ստորգետնյա ջրերի ֆիլտրման տեղակայանքներ
- Ուրանի հանքաքարից բացի այլ հանքաքարերի արդյունահանում:

*Հավելված VII***Ազատման եւ կարգավորող հսկողությունից ազատման չափորոշիչները՝
ինչպես նշված է 24-րդ, 26-րդ եւ 30-րդ հոդվածներում****1. Ազատումը**

Գործելակերպերը կարող են ազատվել ծանուցումից՝ ուղղակի՝ 2-րդ բաժնում սահմանված ազատման մակարդակներին (ակտիվության արժեքներին (արտահայտված Բք-ով) կամ տեսակարար ակտիվության արժեքներին (արտահայտված կԲք կգ-1-ով)) համապատասխանության հիման վրա կամ իրավասու մարմնի կողմից հատուկ կիրառությունների համար սահմանված ավելի բարձր արժեքների հիման վրա, որոնք բավարարում են 3-րդ բաժնում սահմանված ազատման եւ կարգավորող հսկողությունից ազատման ընդհանուր չափորոշիչները: Ծանուցման ենթակա գործելակերպերը կարող են ազատվել թույլտվություն ստանալուց՝ օրենքով կամ ընդհանուր վարչական ակտով կամ հատուկ նորմատիվ որոշմամբ՝ գործելակերպի մասին ծանուցման հետ տրամադրվող տեղեկությունների հիման վրա եւ 3-րդ բաժնով սահմանված ազատման ընդհանուր չափորոշիչներին համապատասխան:

2. Ազատման եւ կարգավորող հսկողությունից ազատման մակարդակները

ա) Ազատման գումարային ակտիվության արժեքները (արտահայտված Բք-ով) կիրառվում են գործելակերպում ներգրավված գումարային ակտիվության նկատմամբ եւ սպառողական ապրանքներում օգտագործվող արհեստական ռադիոակտիվ իզոտոպների եւ բնական ծագմամբ որոշ ռադիոակտիվ իզոտոպների համար սահմանված են «Բ» աղյուսակի 3-րդ սյունակում: Բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպներ պարունակող այլ գործելակերպերի համար այդպիսի արժեքներ, ընդհանրապես, կիրառելի չեն:

- բ) Գործելակերպերում ընդգրկված նյութերի համար ազատված տեսակարար ակտիվության արժեքներն (արտահայտված կԲք կգ⁻¹) արհեստական ռադիոակտիվ իզոտոպների համար սահմանված են «Ա» աղյուսակի 1-ին մասում, իսկ բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպների համար՝ «Ա» աղյուսակի 2-րդ մասում: «Ա» աղյուսակի 1-ին մասում առկա արժեքները տրված են առանձին ռադիոակտիվ իզոտոպների համար, կիրառելիության դեպքում՝ ներառյալ կարճ կյանքի տեւողությամբ ռադիոակտիվ իզոտոպները՝ մայր ռադիոակտիվ իզոտոպի հետ հավասարակշռությամբ՝ ինչպես նշված է: «Ա» աղյուսակի 2-րդ մասում առկա արժեքները կիրառվում են U-238 կամ Th-232 տրոհման շղթայի բոլոր ռադիոակտիվ իզոտոպների նկատմամբ, սակայն տրոհման շղթայի այն հատվածների համար, որոնք մայր ռադիոակտիվ իզոտոպի հետ հավասարակշռության մեջ չեն, կարող են կիրառվել ավելի բարձր արժեքներ:
- գ) «Ա» աղյուսակի 1-ին մասում կամ «Ա» աղյուսակի 2-րդ մասում առկա տեսակարար արժեքները կիրառվում են նաեւ կարգավորող հսկողությունից պինդ նյութերի ազատման նկատմամբ՝ վերաօգտագործման, վերամշակման, պայմանական հեռացման կամ այրման համար: Հատուկ նյութերի կամ հատուկ ուղիների համար կարող են սահմանվել ավելի բարձր արժեքներ՝ հաշվի առնելով Համայնքի ուղղորդումը, կիրառելիության դեպքում՝ ներառյալ լրացուցիչ պահանջները մակերեսային ակտիվության կամ դիտանցման պահանջների առումով:
- դ) Արհեստական ռադիոակտիվ իզոտոպների խառնուրդների համար ռադիոակտիվ իզոտոպային ակտիվության կամ կոնցենտրացիայի կշռային գումարի (նույն մատրիցայում պարունակվող տարբեր ռադիոակտիվ իզոտոպների համար) եւ ազատման համապատասխան արժեքի քառորդը պետք է մեկից փոքր լինի: Անհրաժեշտության դեպքում այդ պայմանը կարող է ստուգվել ռադիոակտիվ իզոտոպների խառնուրդի կազմի լավագույն հաշվարկների հիման վրա: «Ա» աղյուսակի 2-րդ մասում առկա արժեքները

կիրառվում են յուրաքանչյուր մայր իզոտոպի նկատմամբ՝ առանձին: Տրոհման շղթայում առկա որոշ տարրեր, օրինակ՝ Po-210 կամ Pb-210, կարող են երաշխավորել ավելի բարձր արժեքների օգտագործումը՝ հաշվի առնելով Համայնքի ուղղորդումը:

- ե) «Ա» աղյուսակի 2-րդ մասում առկա արժեքները չեն կարող օգտագործվել բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութեր մշակող արդյունաբերությունների մնացորդների՝ շինարարական նյութերում ընդգրկումն ազատելու համար: Այդ նպատակով պետք է ստուգվի 75-րդ հոդվածին համապատասխանությունը: «Բ» աղյուսակի 3-րդ սյունակով սահմանված արժեքները կիրառվում են անձի կամ կազմակերպության մոտ գտնվող ռադիոակտիվ նյութերի ընդհանուր ցանկի նկատմամբ՝ որպես կոնկրետ գործելակերպի մաս ժամանակի ցանկացած փուլում: Այնուամենայնիվ, իրավասու մարմինը կարող է այդ արժեքները կիրառել ավելի փոքր սուբյեկտների կամ փաթեթների նկատմամբ, օրինակ՝ ազատված սպառողական ապրանքների փոխադրումը կամ պահեստավորումն ազատելու համար, եթե բավարարվում են 3-րդ բաժնում առկա՝ ազատման ընդհանուր չափորոշիչները:

3. Ազատման եւ կարգավորող հսկողությունից ազատման ընդհանուր չափորոշիչները

- ա) Գործելակերպերը ծանուցելուց կամ թույլտվություն ստանալուց ազատելու կամ թույլատրված գործելակերպերից առաջացած նյութերը կարգավորող հսկողությունից ազատելու չափորոշիչները հետեւյալն են՝
- i) գործելակերպի հետեւանքով անձանց սպառնացող ճառագայթային վտանգների հավանականությունն այնքան ցածր է, որ կարգավորման առումով անհանգստության առիթ չի տալիս. եւ
 - ii) որոշվել է, որ գործելակերպի տեսակը հիմնավորված է. եւ
 - iii) գործելակերպն ըստ էության անվտանգ է:

- բ) Փոքր քանակությամբ ռադիոակտիվ նյութեր կամ ցածր տեսակարար ակտիվություն ներառող գործելակերպերը, որոնք համեմատելի են «Ա» աղյուսակում կամ «Բ» աղյուսակում սահմանված ազատման արժեքներին, համարվում են «iii» չափորոշիչը բավարարող:
- գ) «Ա» աղյուսակի 1-ին մասում կամ «Բ» աղյուսակում սահմանված ազատման արժեքներից ցածր քանակությամբ ռադիոակտիվ նյութեր կամ տեսակարար ակտիվություն ներառող գործելակերպերը համարվում են «i» չափորոշիչը բավարարող՝ առանց հետագա քննարկման: Դա այդպես է նաեւ «Ա» աղյուսակի 2-րդ մասում առկա արժեքների դեպքում՝ բացառությամբ շինարարական նյութերի մնացորդների վերամշակման կամ ճառագայթահարման հատուկ ուղիների, օրինակ՝ խմելու ջրի:
- դ) Նյութերի չափավոր քանակությունների դեպքում, ինչպես անդամ պետությունների կողմից սահմանված է գործելակերպերի կոնկրետ տեսակների համար, «Բ» աղյուսակի 2-րդ սյունակում սահմանված տեսակարար ակտիվության արժեքները կարող են օգտագործվել «Ա» աղյուսակի 1-ին մասում սահմանված արժեքների փոխարեն՝ թույլտվություն ստանալուց ազատվելու նպատակով:
- ե) Ծանուցումից ազատվելու նպատակով կամ կարգավորող հսկողությունից ազատման նպատակով, եթե ռադիոակտիվ նյութերի քանակությունները կամ տեսակարար ակտիվությունը չեն համապատասխանում «Ա» աղյուսակում կամ «Բ» աղյուսակում սահմանված արժեքներին, ապա վերոնշյալ «i»-«iii» չափորոշիչների լույսի ներքո պետք է գնահատում իրականացվի: «i» ընդհանուր չափորոշիչը բավարարելու համար պետք է ցույց տալ, որ աշխատողները չպետք է դասակարգվեն որպես ճառագայթահարված աշխատողներ, եւ բոլոր իրագործելի հանգամանքներում բավարարվում են հանրության անդամների ճառագայթահարման հետեւյալ չափորոշիչները՝

— արհեստական ռադիոակտիվ իզոտոպների դեպքում՝

Պահանջներից ազատված գործելակերպի հետեւանքով հանրության անդամի կողմից ստացվելիք սպասվող դոզան տարեկան 10 μ Ջվ է կամ դրանից պակաս:

— բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպների դեպքում՝

Դոզայի ավելացումը, որը բնական ծագմամբ ճառագայթման աղբյուրներից գերակայող ֆոնային ճառագայթման հնարավորություն է տալիս, որին անձը կարող է ենթարկվել ազատված գործելակերպի հետեւանքով, տարեկան կազմում է 1 մՋվ կամ դրանից պակաս: Հանրության անդամների ստացած դոզաների գնահատմամբ պետք է հաշվի առնել ոչ միայն օդածին կամ հեղուկ թափոնների միջոցով ճառագայթահարման ուղիները, այլև պինդ մնացորդների հեռացման կամ վերամշակման հետեւանքով առաջացող ուղիները: Անդամ պետությունները կարող են գործելակերպերի կոնկրետ տեսակների կամ ճառագայթահարման կոնկրետ ուղիների համար սահմանել տարեկան 1 մՋվ-ից ցածր դոզայի չափորոշիչներ:

Թույլտվություն ստանալուց ազատման նպատակով՝ կարող են կիրառվել պակաս սահմանափակող չափորոշիչներ:

ԱՂՅՈՒՍԱԿ Ա

**Այն նյութերի ազատման կամ կարգավորող հսկողությունից
ազատման տեսակարար ակտիվության արժեքները, որոնք կարող
են ինքնաբերաբար կիրառվել պինդ նյութի ցանկացած
քանակության եւ ցանկացած տեսակի նկատմամբ**

ԱՂՅՈՒՍԱԿ Ա ՄԱՍ 1

Արհեստական ռադիոակտիվ իզոտոպներ

Ռադիոակտիվ իզոտոպը	Տեսակարար ակտիվությունը (կԲք կգ ⁻¹)	Ռադիոակտիվ իզոտոպը	Տեսակարար ակտիվությունը (կԲք կգ ⁻¹)	Ռադիոակտիվ իզոտոպը	Տեսակարար ակտիվությունը (կԲք կգ ⁻¹)
H-3	100	K-43	10	Mn-56	10
Be-7	10	Ca-45	100	Fe-52 (ս)	10
C-14	1	Ca-47	10	Fe-55	1 000
F-18	10	Sc-46	0,1	Fe-59	1
Na-22	0,1	Sc-47	100	Co-55	10
Na-24	1	Sc-48	1	Co-56	0,1
Si-31	1 000	V-48	1	Co-57	1
P-32	1 000	Cr-51	100	Co-58	1
P-33	1 000	Mn-51	10	Co-58 m	10 000
S-35	100	Mn-52	1	Co-60	0,1
Cl-36	1	Mn-52 m	10	Co-60 m	1 000
Cl-38	10	Mn-53	100	Co-61	100
K-42	100	Mn-54	0,1	Co-62 m	10
Ni-59	100	Mo-93	10	Te-129 m (ս)	10
Ni-63	100	Mo-99 (ս)	10	Te-131	100
Ni-65	10	Mo-101 (ս)	10	Te-131 m (ս)	10
Cu-64	100	Tc-96	1	Te-132 (ս)	1
Zn-65	0,1	Tc-96 m	1 000	Te-133	10
Zn-69	1 000	Tc-97	10	Te-133 m	10
Zn-69 m (ս)	10	Tc-97 m	100	Te-134	10
Ga-72	10	Tc-99	1	I-123	100
Ge-71	10 000	Tc-99 m	100	I-125	100
As-73	1 000	Ru-97	10	I-126	10
